

66n

814

1999



372



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ԵԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԳԱՐՐ. ԽԱՏԻՍԵԱՆ

Ա. ՄԱՍԸ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԵՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՅՐԱԵԼԵԱՆ ՓՈԳՈՑ, Ծ

1882



Անցեալ տարի, Նոյեմբեր ամսին, Թիֆլիզու Հայ օրագիրներու մէջ Հրատարակուեցաւ Եջմիածնի ձեւարանի Վարչութեան կողմից ծանուցումը, որի մէջ յայտնելով փափագը, որ մեր ուսումնարաններու Համար ընդհանուր ծրագիր կազմուի, որին մենք մինչև այժմ կարօտ ենք մնացել, Գէորգեան ձեւարանի ուսումնական խորհուրդը որոշել էր քննութեան առնել ձեւարանի ծրագիրը և կազմել մի աջնալիսին, որը ընդհանուր գծագրութեամբ չարմար լինէր մեր բոլոր ուսումնարաններուն, և սորա Համար Հրաւիրել էր ուսումնարաններու ուսումնական խորհուրդները և ազգային լուսաւորութեան նախանձախնդիր անձանցը մասնակցելու իւրեանց խորհուրդներով և Հայեացքներով չիշած առաջարկութեանը:

Արձագանք տալ այդ ուրախալի ձայնին—ես իմ պարտք ու պարտաւորութիւն Համարեցի՝ նուիրուած լինելով ամբողջապէս ուսումնարանական Հարցին և մանկավարժական դործը իմ ամենասիրելի ուսումնասիրելու առարկայ շինելով:

Թէպէտ այդ Հրաւիրը մերձաւորապէս Գէորգեան ձեւարանի ու մեր միջնակարգ ուսումնարաններու (Հսկւոր դպրանոցներու) ծրագրին է վերաբերուած, բայց և

4 814-60

28 816

առանց նորա չէ, որ նա չհայէ և առհասարակ մեր ստորին կարգի (առաջնական ու ծխական) ուսումնականներու հարցին:

Տեսնելով, որ այս վերջիններու բարեկարգելը աւելի նշանաւոր է քան թէ առաջիններու, որոնք իրենանց կաղմակերպութիւնով պիտի չարմարուին մեր ստորին կարգի ուսումնարաններու պահանջմանցը, եւ առաւել կարեւոր համարեցի մշակել մեր ծխական ուսումնարաններու հարցը և դորա վերաբերմամբ յայտնել իմ մտածողութիւնները և իմ հայեացքը, որպէս զի միջնակարգ ուսումնարաններու համար ծրագիր կաղմելուց ՚ի նկատի ունենալ ծխական ուսումնարաններու հարկաւորութիւնները, և սոցա բաւականացնելու համար պատրաստել այնտեղ արժանաւոր ուսուցիչներ և քահանայք:

Չնայելով որ ես մտադիր էի այս խնդրին վերաբերեալ մտքերս յայտնել կարճառօտաբար, բայց ՚ի վերոյ ամենայնի յառաջ եկաւ ներկայ աշխատանքը, որը կաղմում է իմ ամբողջ գործի միայն առաջին մասը, իսկ սորա երկրորդը մասը, որի բովանդակութիւնը կցորդուած է այս հատորի ցանկին, չկարողացայ եւ սորա հետ միաժամանակ ՚ի լոյս ընծայել, նորա համար որ դորան իմ ալլեայլ պարապմունքները և երկարատե հիւանդութիւնս արգելք եղան, և մեւս կողմից՝ առաջին մասի տպելը եւ շտապեցրի, ՚ի նկատի ունենալով այս տարւան, Օգոստոս ամսին, Թիֆլիզումը լինելու Ուսուցչական Ժողովը, որի պարապմունքի գլխաւոր առարկան լինելու է մեր ծխական ուսումնարաններու բարեկարգելը և որի համար այս գրուածքը, յուսալի է, հետաքրքրելի պէտք է լինի:

Իմ խոստմունքը կատարելու համար, եւ այս տարւան Մարտ ամսին ուղարկեցի Էջմիածնի ձեմա-

լանի անշին այս իմ աշխատանքը և սորա երկրորդ մասի կարճառօտ քաղուածքը:

Ներկայ աշխատանքիս մէջ իմ գլխաւոր դիտարկութիւնն է՝ ցոյց տալ, թէ ինչպէս մեր ծխական ուսումնարանները, որտեղ մեր քաղաքային միջին ու ստորին դասերը և զիւղական Ժողովուրդը իրենանց միայնակ ուսումն են ստանում, պիտի կարգադրուին, որպէս զի նոքա բոլորովին համապատասխանեն Ժողովուրդի պահանջմանը, իսկապէս օգտակար լինին հասարակութեանը և գրաւեն նորա համակրութիւնը:

Ահա այս նպատակին հասնելու համար եւս ամենահարկաւոր եմ համարում ու առաջարկում եմ մեր ծխ. ուսումնարաններու մէջ մտցնելու՝ իբրեւ նորութիւն՝ գործնական պարապմունք ¹⁾, ու բացի այդ՝ զետուրթիւններու դիւրին գործադրելի ու հասկանալու դասաւորութեան եղանակը, մանաւանդ աղջկերանց ուսման վերաբերեալ ուղղութիւնը, համեմատ կանանց նշանակութեան և կոչման, և առհասարակ, մեր ծխական ուսումնարաններուն այլ ձեւակերպութիւն տալը, քան թէ ինչ որ ունին նոքա այժմ, որտեղ անշուշտ դաստիարակութիւնը պիտի դրուի ՚ի վեր քան ամէնը:

Աշխատանքիս երկրորդ մասը, որի տպագրութիւնը հետեւելու է շուտով, կը բացատրէ ու կը լրացնէ այն մէկ քանի թերութիւնները, որոնք տեղ տեղ կարելի է նկատուին ներկայ հատորի մէջ:

Հաւատալի եմ, որ ներկայ աշխատանքիս ընթերցողը յայտնապէս կ'տեսնէ, որ իմ յայտնած մտքերը չեն իմ անձնական հայեացքներ և իմ սեպհական կամեցողութիւնից յառաջ եկած կարծիքներ, այլ նոքա հիմնուած

¹⁾ Практическое или профессиональное занятие.
Occupation pratique ou professionnelle.

են ժողովուրդի ներկայ պահանջմունքներու և հարկաւորութիւններու վերայ, բնական օրէնքներու և երեխայի բնաւորութեան վերայ, և են իսկապէս մեր ժողովուրդի կեանքի մերձաւոր ու մանրամասն քննութեան հետեանք: Մէկ խօսքով՝ առաջարկելով վերոյիշեալ ուսումնարանական կարգաւորութեան ձևը, ևս ունեմ իմ առաջ՝ վերահետել երեխային խելանքին, վերաբարձել նորան վերաբեր իշտիւն, իշտիւն համար, և վարել նորան ուսումնարանի մէջ ամենաբարձր ծանոթացում և ոչ արտադրութեան շնորհ: Մինչև որ աստիճանի լուծած եմ ես այս խնդիրը, լծողութեմ դատել ուրիշներուն: Բայց ևս համոզուած եմ նորանում, որ միայն աշակերտի ծրագրին համեմատ կարգաւորուած ծխական ուսումնարաններ կարող են իսկապէս օգտաւէտ լինել մեր ազգին և ամենայն ազգի հասարակ ժողովուրդին:

Վաւերաց լոյս ունիմ, որ այս իմ խորհրդածութիւնները կ'արժանանան ինչպէս մեծախոհ բարեքնկալութեան մեր Վերին Հոգեւոր Իշխանութեան, որից կախումն ունի մեր ծխական ուսումնարաններու կարգաւորութիւններու հաստատութիւնը, այնպէս և մեր ուսումնականներու, մանկավարժներու ու ուսումնարանական քննիչութիւններու բարեհաջեաց ուղարկութեանը, և որ ես ինձ պակաս բաւականացրած չեմ համարել, եթէ գրւածիս լեզուն զիւրին հասկանալի կըլինի ինչպէս Ռուսաստանի, այնպէս էլ Ցաճկաստանի հայերուն:

Աշխատանքիս վերաբերեալ նկատողութիւններ և քննողութիւններ շնորհակալութեամբ կ'ընդունէ

Գրեթ. Խորխոսեան:

Տիֆլիս

29 Յունիսի 1882:

Հ Ա Յ Ո Ց

ԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ, ԵՒ ՀԱՅԵՑՈՒԱԾՔ:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԳԼԽԱՒՈՐ
ՀԻՄՈՒՆՔԸ:

Ամենայն որեւիցէ ուսումնարանի համար ծրագիր կազմելուց ամէնից առաջ պէտք է ճիշտ որոշած ու վճռած, թէ հասարակութեան որ դատակարգից և շրջանից մտնելու են երեխաները աշակերտելու այն ուսումնարանը և որ շրջանը վերադառնալու են այն ուսումնարանից դուրս եկած աշակերտները:

Այս գլխաւոր հիմունքին համապատասխան պիտի լինին և ուսումնարանի նպատակը և ժողովուրդի հարկաւորութիւններու բաւականացնող պայմանները, ըստ որում և ուսումնարանի ձևակերպութիւնը և նորա ուսման շրջանը, ուրեմն և նորա ծրագիրը:

Ուրեմն և մեր ծխական ուսումնարաններու համար կազմուելու ծրագիրը պիտի հաստատուի միևնույն գլխաւոր հիմունքի վերայ:

ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ:

Յայտնի է, որ մեր թէ քաղաքային թէ գիւղական ծխական ուսումնարաններու աշակերտները են և լինելու են մեր Հայ Հասարակութեան ստորին և մասամբ միջին դասի ընտանեաց, այն է, արհեստականներու, ստորին կամ միջակ վաճառականներու և գիւղականներու որդիքը, որոնք ուսումնարանից դուրս գալով պիտի աշակերտին կամ արհեստաւորներու գործարաններումը կամ վաճառականներու խանութներումը, իսկ գիւղերումը՝ պիտի իրանց նուիրեն գիւղական պարապմունքներուն, երթադրելով, որ նոցանից մէկ մասը, և ի Հարկէ ամենափոքրիկ մասը, կշարունակէ իւր ուսումը Հայոց Հոգեւոր դպրոցներումը կամ տէրունական միջին կարգի ուսումնարաններումը, կամ կնուիրէ իրան եկեղեցական կոչումին:

Տարակոյց չկայ, որ այս վերջին հանգամանքը ստորագաս պիտի լինի նախընթաց իրողութեանը, վասնորոյ գլխաւորապէս ՚ի նկատի պիտի ունեցած ուսանողներու մեծամասնութիւնը, որոնք իւրեանց ամբողջ կեանքի մէջ ստանում են միայնակ ու վերջնական ուսումը ու կրթութիւնը ու դաստիարակութիւնը այս՝ ծխական կամ սկզբնական՝ ուսումնարաններու մէջ:

Ուրեմն այս ուսումնարանը պիտի պատրաստէ երեսնայի մէջ ապագայ Հասակ առած մարդուն, որը իւր սեպհական ու անձնային աշխատանքով ու մշակութիւնով պիտի վաստիկ իւր ապրուստը, նա պիտի պատրաստէ Հասարակութեան ապագայ օգտակար անդամը, տալով նորան այն ամենահարկաւոր գիտութիւններու սկզբունքը և այն կրթութիւնը, որոնք հիմն պիտի լինին նորա ապագայ ուղիղ մտաւոր ու

բարոյական զարգացման և պէտքական լինին նորա աշխատանքին և պարապմունքներուն:

Յայտնի է, որ ծխական ուսումնարանները չեն կարող տալ երեսնացը բաւականաչափ գիտութիւն, ըստ որում այս ուսումնարաններու գլխաւոր նպատակը չէ իսկապէս գիտութիւն մատակարարել երեսնային, այլ գլխաւորապէս՝ զանազան մտաւոր ու գործնական պարապմունքներով տալ նորան կանօնաւոր աշխատանքի կրօնաւոր ուղղութիւն, բանալ ու վարժել երեսնայի դատողութիւնը, կրթել նորա ուշադրութիւնը և հարաժեպողական ընդունակութիւնը, և միեւնոյն ժամանակ զարգացնել նորա զգացմունքը և սիրտը և նորա զանազան հոգեկան ոյժերը. այսպիսով կրթել նորան մտաւորապէս, բարոյապէս և հոգեպէս, և զօրացնելով երեսնայի մէջ ճաշակ դէպի ուսում, Հաստատել նորա մէջ սէր դէպի կանօնաւոր ու բարեխղճ աշխատանք, տալով նորան միեւնոյն ժամանակ ամենահարկաւոր գիտութիւններուց. մէկ խօսքով տալ երեսնային միջոցներ և զարգացնել ու Հաստատել նորա մէջ ամէն այն յատկութիւններու հիմունքը ու սկզբունքը, որոնք հարկաւոր են նորան ապագայումը բարեխղճ աշխատող ու գործող մարդ, արժանաւոր ընտանիքի գլուխ ու Հասարակութեան արժանաւոր անդամ դառնալու:

Միեւնոյն կերպով պիտի ՚ի նկատի ունենալ այն օրիորդներու ներկայ գրութիւնը ու ապագայ վիճակը, որոնք աշակերտելու են ծխական ուսումնարաններու մէջ:

Յայտնի է, որ հարուստները և մեծատունները իւրեանց զուտրները ուղարկելու չեն այն տեղ, այլ այդ ուսումնարանները կրթիչ պիտի լինին Հասարակ ու միջին դասի ընտանեաց զաւակներու, որոնց աղջ-

կերբը ինչպէս և նոցա տղայքը մտնում են ուսումնարան բոլորովին անպատրաստ, առանց դարգացման, առանց ուսումնարանական նախապատրաստութեան, անկերթ, և կարելի է ասել, աւելի վատ քան թէ լաւ դաղափարներով ու սովորութիւններով:

Բայց որքան էլ այդ երկու սեռերը մանկութեան ժամանակ, ուսումնարան մտնելուց, իրար նման են և յատկութիւններով մէկմէկից դրեթէ չեն զանազանվում, այնքան էլ ուսումնարանից դուրս դալուց չէտոյ և ապագայումը նոցա դերերը ¹⁾ տարբերվում են միմեանցից:

Արեմն, առաջ քան թէ սկսել դաստիարակել աղջկան, հարկաւոր է ճիշտ որոշել այն դերը, որը նա ապագայումը ունենալու է ընտանեաց և հասարակութեան մէջ և նորա նշանակութիւնը այդ ասպարէզներու մէջ:

Աղջկը, մինչև որ տանն է և կոյս է, է իւր մօր օգնական տնտեսութեան ամենայն մասերու և տան բարձրութեան համար հոգալու, և այսպիսով պատրաստվում է նա ապագայում ինքնագլուխ տանտիկին և տան բարեկարգիչ դառնալու:

Նրբ որ նա մարդու է գնում, նա դառնում է կին, այն է, անձնանուէր ու մինչև 'ի մահ ամենահաւատարիմ կենաց ընկեր ու բարեկամ մէկ մարդու, որը մինչև այն ժամանակ նորան օտար էր, որին նա պիտի սիրէ, որի բարօրութեան համար նա պիտի հոգայ, որին պիտի նա օգնական լինի ամենայն նեղութեանց մէջ: Նա դառնում է և իրան բոլորովին օտար անձիններու հարս, որոնց հետ պիտի նա ապրի սիրով, համաձայն և բարեկամաբար. նա դառնում է

¹⁾ Роль, rôle.

տանտիկին իւր սեպհական տան, ընտանեաց տիրուհի և կառավարիչ և նորա հոգացող:

Վերջապէս նա դառնում է մայր—ամենաերեւելի և ամենադժուարին դեր: Նա ստանում է մէկ անօգնական, թոյլ, նորափութիւթ արարած, որին նա պիտի կերակրէ, սննդէ, որի մէջ նա պիտի զարթացնէ ու զօրացնէ ամենայն նորա հոգեկան և մարմնաւոր ոյժերը ու յատկութիւնները, և հոգալով նորա ամէն հարկաւորութիւններու և պետոյքներու համար, պատրաստէ նորան ապագայումը մտածող, զգացող ու գործող և հոգեկան ու մարմնաւոր ոյժերով զարգացած մարդ ու ընտանեաց ու հասարակութեան համար օգտակետ անդամ դառնալու: Ամենաուրախելի դեր:

Գաղարացնելով մեր խորհրդածութիւնը և մտածմունքը իզական սեռի այս դերերու վերայ, մենք գալիս ենք այն եզրակացութեանը, որ այն ասպարէզը, որտեղ օրերողը և ապագայ կինը և մայրը ունենալու են ամենազանազան ու ամենադժուարին դերեր, է տունը, ընտանիքը:

Այնինչ տղամարդու գործունէութեան ասպարէզը տանից դուրսն է ու լայնատարած աշխարհքն է, կնոջ գործունէութիւնը սահմանափակվում է գլաւորապէս տանը, ընտանիքի մէջ: Թող չնեղանան կանայք, իմանալով, որ նոցա գործունէութեան համար նշանակվում է այսպիսի նեղ ասպարէզ, փոքրիկ աշխարհք: Ընդհակառակն, ընտանիքն է այն նշաւոր աշխարհքը, որը հիմն է երեւալի մեծ աշխարհքի. թող գիտենան նոքա, որ մեծ աշխարհքի բարեկաւութիւնը ու բարօրութիւնը կախուած են այն փոքր աշխարհքներու բարեկարգութենից, որոնք ընտանիքներ են: Իսկ մի և կառավարում այդ փոքր աշխարհքները— կնին:

Ճշմարիտ է, փոքր են այդ աշխարհքները, բայց

մեծ ու ուժգին է նոցա աղբեցութիւնը. ըստ երևոյթի, կարծես, շատ հասարակ են, բայց խկապէս շատ բարձր են ընտանիքի նշանակութիւնը և զօրութիւնը:

Ընտանիքն է այն նաւահանգիստը, որտեղ փութորիկներու ալիքներու վերայ տատանուած, ուժաթափ ու հոգետոչոր ծովագնացիկը գալիս է հանգստանալու, իւր թուլացած մարմինը կաղզուրելու, իւր ցաւերը դարմանելու, կեանքի դանաղան հարուածքներից ստացած վէրքերը բուժելու: Նւ ի՞նչ է այն նաւահանգստապետը, որը ամենայն հոգատարութեամբ ընդունում է այդ հալումաշ նաւավարին—նա կինն է, որը բազումները տարածած շտապով գնում է իւր ամուսնուն դիմաւորելու և գրկելով նորան իւր ջերմ ու սիրով լի կուրծքի վերայ, տաքացնում է նորա սառած ու թուլացած մարմինը, իւր կանացի հմտութեամբ դարմանում է նորա ամենայն ցաւերը ու վէրքերը, իւր քնքշութեամբ, իւր քաղցրաշունչ խօսքերով վերադարձնում է նորան հանգստութիւն ու անդորրութիւն, գործ դնելով ամենայն ջանքը, որ իւր մարդը վերստին ստանայ նոր ոյժ, նոր զօրութիւն կրկին վերադառնալու. կեանքի տատասկաբոյս ծանրաշաւիղը և նորից մարտնչելու կեանքի փութորկալոյզ ալիքներու հետ:

Ընտանիքն է եկեղեցի, որտեղ ամէնքը մեղաւորուած մէկմէկու հետ սուրբ սիրոյ ջերմ կապով, իրաւործում են աստուածային պատուէրները, որտեղ թագաւորում է խաղաղութիւն, բարոյականութիւն, ամենզրճուանք, որտեղ դուները պինդ փախուած են արտաքին կեանքի մոլութիւններու ու չարագործութիւններու դէմ. և ի՞նչ է այն բարիհրեշտակը, որը տարածած թեւերով հովանաւորում է ընտանիքի վերայ և նորա անդամներու մէջ սիրոյ կապը պինդ պահում—նա է կինը, նա է մայրը:

Ընտանիքը ինքնըստինքեան մի փոքրիկ աշխարհք է, որը բաղկացած է զանազան հասակի, հասկացողութեան, զարգացման և պաշտօնի անդամներից, որոնց միմեանց հետ ունեցած յարաբերութեանց մէջ կայ և սահմանած ստորադրութիւն. և ի՞նչ է այդ աշխարհքի գլխաւորապէս կառավարողը, մանաւանդ մարդու բացակայութեան ժամանակը—վերստին կինը, որի ջանքը ու հոգսը նորանումն է, որ այն տեսակ հմտութեամբ հովուէ այդ աշխարհքի անդամներուն, որ ամէնքը բաւականացած լինին իւրեանց հարկաւորութիւններու ու պետոյքներու մէջ, որ նոցա մէջ լինի սէր, համաձայնութիւն և կարգ, և որ նոցանից ամէն մէկը կատարէ իւր պարտաւորութիւնները յօժարաբար, ճշտութեամբ և սրբութեամբ:

Վերջապէս, ընտանիքը է այն գործարանը, որտեղ պատրաստվում են, որտեղից դուրս են գալիս այն առողջ ու զօրեղ ուժերը, որոնք ուղիղ ու օրինաւոր կերպով շարժեցնում են այն բարդ մեքենան, որին մենք հասարակութիւն ու պէտութեան ենք անուանում. և ի՞նչ է այն գործարանի պետը—վերստին կինը, մայրը:

Ահա այն երեւելի դերերը, որոնք սեպհական են կնկան, որոնք նորա բաժին են դառած ստեղծողական վերին զօրութիւնով աշխարհքի մէջ վիճակները բաժանելուց, որոնք տալիս են կնկան այն մեծ նշանակութիւնը, որով նա վայելում է ընդհանուր յարգանքը ու մեծարանքը և որոնցով հաստատ պահպանվում է ընտանիքը: Ահա այն սքանչելի դերերը, որոնք բարձրացնում են կնկան շատ վեր քան թէ մարդը, և շինել են կնկան, կարելի է ասել, տիրուհի ու իշխող մարդու վերայ: Նւ իրաւի, արժանի է կինը այս ամենայն պաշտամանը, փառքին ու յարգանքին, երբ նա արժանաւորապէս արդարացնում է իւր վեհ նշան-

նախութիւնը մարդկութեան մէջ, կատարելով սրբ-
բութեամբ իւր մեծաշուք ու գերապանծ գերերը:

Այս գերերը պատկանում են ամենայն կնիկան՝
սկսած թագաւորացն իշխանուհուց մինչև վերջին աղ-
քատիկը՝ ի հարկէ իւրաքանչիւրին իւր հանդամանք-
ներուն համեմատ:

Ուրեմն աշխատել արդարացնել իւրեանց այդ
բարձր նշանակութիւնը ու գործ դնել ամենայն ջանքը
զարգացնել ու հաստատել իւրեանց մէջ այն բազ-
մատեսակ յատկութիւնները, որոնք հարկաւոր են ար-
ժանտւորապէս կատարել կարենալու իւրեանց դանա-
զան գերերը կեանքի մէջ—ամէն օրկողի, ամէն կնոջ
պարտք ու պարտաւորութիւնն է:

Բայց արդե՞ք շատերը նոցանից զգում են իւ-
րեանց մէջ և ճանաչում են իւրեանց այդ բարձր կո-
չումը և աշխատում են արդարացնել նորան:....

Մանաւանդ խի անշափ խղճալի են այն օրկող-
ները, այն կանայք, որոնք չճանաչելով իւրեանց իս-
կական նշանակութիւնը և յափշտակուելով մանաւանդ
ներկայ սխալ ու ծուռ ուղղութիւնով և ձգտելով դէպի
ինքնակացութիւնը, բոլորովին շեղուել են ուղիղ ճա-
նապարհից. որոնք, արհամարհելով իրանց բնական
գերերը, ստեղծել են իւրեանց համար նոր՝ արհեստա-
կան՝ գերեր և իւրեանց կեանքի ու գործունէութեանց
նպատակ են շինել՝ նմանել տղամարդուն, կատարել
նորա պարտաւորութիւնները և յափշտակել նորա իրա-
ւունքները:.... Ողորմելիքը, կարծելով, թէ տղամարդու
գեր կատարելով և խլելով նորա իրաւունքը, որպէս
թէ առաւել արտօնութիւն ու իրաւունք են ստա-
նում, չեն հասկանում, որ գորանով աւելի թուլա-
նում ու պակասում են նոցա նշանակութիւնը ու իրա-
ւունքները, և որ իրանք աւելի վաչր են ընկնում, քան

թէ երբ իրանցը այն տեսակ ու այն աստիճան զար-
գացրած, կատարելագործած ու պատրաստած լինէին,
որ արժանաւորապէս կատարել կարողանային իւրեանց
մեծ գերերը՝ իբրև կնոջ ու մօրը: Մարտնչելով այդպէս
անհաւասար ոյժերով ընտ. թեան հետ, վերջ ի վերջոյ
թոյլ ու անզօր կենը ի հարկէ յաղթուած է դուրս
գալի, և այդպիսի կանանց սխալ ձգտումը համապա-
տասխան չլինելով նոցա իսկական նշանակութեանը,
պատճառ է դառնում ընտանիքի բարօրութեան քաք-
տուելուն ու նորա բարոյականութեան վաչր ընկնե-
լուն, այնինչ իբրև ընտանեկան բախտի վերականգնա-
ցողներ հանդիսանում են իւրեանց մեծ նշանակու-
թիւնը ճանաչող ու իւրեանց իսկական պարտաւորու-
թիւնները կատարող՝ գուստօրը, կենը, մայրը և տան-
տիկինը:

Թէպէտ, ինչպէս չիշեցինք, կնոջ գերերը կատար-
վում են գլխաւորապէս տանը, ընտանեաց մէջ, բայց
նորա նշանակութիւնը մասամբ ընդարձակվում է և
տանից դուրս՝ հասարակական այն հարցերու մէջ,
որոնք մերձաւոր կապակցութիւն ունին նորա ընտա-
նեկան գործունէութեան հետ: Ազգային և եկեղեցա-
կան հարցերու մէջ ունի և կենը որոշ ձայն, մանա-
ւանդ երբ որ նա չունի ամուսին կամ հասակ առած
որդի. մօրը պատկանում է շատ մեծ ձայն ունենալ
ուսումնարանական գործքերու մէջ, որտեղ մօր աչքը
պիտի հսկէ իւր որդու բարելաւութեան ու յառաջա-
դիմութեան վերայ. հասարակական բարեգործութեան
գործի մէջ մեծ գերը պատկանում է իգական սեռին՝
լինի նա օրկող կամ կին: Բայց հանդիսանալով այդ
որոշ դիպումաքննութիւն և իբրև հասարակական գոր-
ծիչ, կենը պիտի ճանաչէ իւր չափը, և նորա մասնակ-
ցութիւնը այդ գործերու մէջ պիտի տեղի ունենայ

այնքան, որ արդեւ չպատճառէ նորան իւր ամենագըլ-
խաւոր ընտանեկան պարտաւորութիւնները զգոնապէս,
բարեխղճութեամբ և ճշտաբար կատարելուն:

Վերջապէս, կինը իւր բարոյական վարքով ու
բարքով, իւր կանացի քնքռութիւնով, պարկեշտու-
թիւնով ու փափկութիւնով, որտեղ էլ լինի, մեծ աղ-
դեցութիւն և բարոյական ու ազնուացուցիչ ներգոր-
ծութիւն ունի աղամարդու վերայ և առհասարակ ժո-
ղովուրդի բարոյականութեան վերայ:

Ահա, միեւնոյն այս դերերը պիտի խաղայ ապա-
դալումը և այն մերկտոն (բորելի), աղբատիկ, դալկա-
ցած, սպունած, որբիկ օրիորդը, որին բերել է իւր խեղ-
ճիկ մայրը ծխական ուսումնարան, և որը դողալով և
երկիւղով անցնում է նորա շէմքը: Այո, այս ողորմելի
արարածը լինելու է, դեռ առժամանակ, իւր ցաւադար
մօր օգնականը թէ տան հարկաւորութիւնները կա-
տարելումը, թէ ապրուստ ճարելու աշխատանքումը,
իւրեան կրտսեր քոյրերու ու եղբօր հոգատարը, և հե-
ռու ապագայումը, դառնալու է այն կինը, այն մայրը,
որը պիտի բախտաւորացնէ ու հովուէ իւր ընտանիքը
և որը պիտի բաշխէ աղբին ու հասարակութեանը մէկ
քանի զարդացած ու պիտանի անդամներ:

Ահա ի՞նչ մտածմունքը պիտի զբաղեցնէ ուսում-
նարանի վարժուհուն, ուսուցչին, տեսնելով իւրեանց
առաջը այդպիսի օրիորդ՝ աշակերտուհի: Ընդունելով
դորան ուսումնարան, սորա պաշտօնակատարները ան-
դադար աչքի առաջ պէտք է ունենան այն դերերը ու
պարտաւորութիւնները, որոնց ենթարկուելու է ապա-
դալումը այն օրիորդը, պէտք է միշտ ու անդադար,
ամբողջ ուսման ու դաստիարակութեան ընթացքումը,
գործ դնեն իւրեանց ամենայն աշխատանքը, որ ար-
ժանաւոր կերպով պատրաստեն նորան իւր ապագայ

դերերու համար՝ զարթացնեն ու հաստատեն նորա մէջ
այն բարոյական սկզբունքները, այն իմաստները և գի-
տութեան այն հիմունքները, և աշխատանքի ու գոր-
ծունէութեան այն սէրը, որոնք ժամանակով աւելի
ընդարձակ ուղղութիւն ստանալով ու աւելի կատարե-
լագործուելով, պատրաստել կարենան աշխատասէր ու
աղնուաբարոյ գործօն աղջիկ, արժանաւոր կին, քնքոյշ
ու խելացի մայր, հմուտ ու արի տանտիկին, ու հա-
սարակութեան զօրեղ ու նշանաւոր անդամ:

Տարակոյս չկայ, որ օրիորդին այս երեւելի դերե-
րու համար պատրաստել կարող չէ միայն ուսումնա-
բանը, որը գործ պիտի ունենայ 12—14 տարեկան աղջ-
կայ հետ, այլ դա գլխաւորապէս ծնողաց գործն է,
այն շրջանի գործն է, որի մէջ գտնվում է ու պտըտ-
վում է աղջիկը: Ահա սոցանից պիտի նա ստանայ գըլ-
խաւորապէս իրան հարկաւոր կրթութիւնը և բարոյա-
կան ուղղութիւնը: Բայց, 'ի նկատի ունենալով մէկ
կողմից մեր ժողովուրդի ոչ միայն հասարակ դասա-
կարգի, այլ, բացի չնչին փոքրամասնութիւնը, ընհան-
րապէս և աւելի բարձր դասերու ծնողաց, մանա-
ւանդ մօրերու, անպատրաստ լինելը, նոցա անկիրթ
ու կոշտաբարոյ լինելը, միւս կողմից՝ մեր օրիորդներու
ու կանանց ինքնագլխութեան ու ինքնակացութեան
ներկայ սխալ ուղղութիւնը, որը վերջին ժամանակ-
ներումը սկսել է դրոյց մտնել և մեր ընտանեաց մէջ
և արդէն ցոյց է տուել իւր վնասակար հետեանքը և
որը սկսում է թափանցել նաեւ միջին ու ստորին դա-
սերու ընտանեաց մէջ, միայնակ յոյսը մեր ուսումնա-
բաններու վերայ է: Սոքա պիտի չանձն առնեն եթէ ոչ
փոխարինելու ծնողացը, գոնեայ կատարելու, ըստ չափու
կարողութեան, նոցա պարտքը՝ ուղղելու երեխայի այն
պակասութիւնները, որոնք ծնողաց բաղմակողմանի

Թերութիւններու հետեանք են, հասկացնել ու ճանաչել տալու երեխային իւր ապագայ պարտաւորութիւնները, որոնց մասին նա կամ ոչ ոքից չէ լսել, կամ սխալ ու թիւր գաղափար է ստացել: Նւ այսպիսով ուսումնարանը կը արդարացնէ իւր խնդիրն նշանակութիւնը, այն է, բացի աղբի ներկայ կըթողական պահանջմունքներու բաւականացնող լինելը, կհանգիստանայ և իբրեւ առաջնորդ նորա մտաւոր և բարոյական չառաջադիմութիւններու: Թող ուսումնարանը գործէ, որքան կարող է. նա կատարէ իւր սուրբ պարտաւորութիւնը, և տարակոյս չկայ, որ երբ ուսումնարանը ուղիղ ու ճշտաբար կը որոշէ իւր նպատակը և իւր նշանակութիւնը, և նորա պաշտօնակատարները իրարու հետ համաձայն ու խղճի մտօք կգործեն, անշուշտ երեան կուգայ և բարի հետեանք և օրիորդներու կըթուլութիւնը ու դաստիարակութիւնը կհանգնի իւր նպատակին հասնող ճանապարհի վերայ և կստանայ ցանկալի օրինակ որդւութիւն, և հայ աղջիկը, հայ կինը կվերականգնացնէ ու կհաստատէ իւր պատմական փառքը ու անունը, ու ընտանիքի մէջ կվեառադառնայ և կհաստատուի բարօրութիւնը, որին կարօտ է աղքը և որը հիմն է նորա գօրծողութեան և հաստատութեան:

Ուրեմն, այն յատկութիւններու համեմատ, որոնց ունին ծխական ուսումնարան մտնող տղայքը և օրիորդները, այն հանգամանքներու համեմատ, որոնց մէջ գտնվում են նոքա, և այն պահանջներու, պարտաւորութիւններու ու այն նպատակի համեմատ, որոնց համար պիտի պատրաստուին ապագայի համար ուսումնարանի աշակերտները և աշակերտուհիները, պիտի կարգադրուին մեր ծխական ուսումնարաններումը դաստիարակութեան ու կըթութեան ձևը, ուսանելի առարկաները և ուսման շրջանը:

ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ¹⁾ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ: ²⁾

Պի նկատի ունենալով որ ծխական ուսումնարան մտնող աշակերտները ու աշակերտուհիները թէ քաղաքաբնակները, թէ գիւղաբնակները՝ ժողովուրդի այնպիսի դասակարգիցն են, որ մտաւոր աշխատանքին օտար են մնացել, և դաստիարակութեան ու կըթութեան կողմանէ, կարելի է ասել, աւելի վատ քան թէ լաւ դաղափարներ են ստացել, չունին ոչ ուսումնարանական նախապատրաստութիւն, չեն սովոր ոչ կանոնաւոր աշխատանքին, ոչ ուսումնարանական կարգին, պէտք է որ ուսումնարանը թէ իւր ներքին կարգադրութիւնով, թէ դասավանդութեան ձևով, թէ աշակերտներու հետ վարուելով, չարմարուի երեխանց այդ մտաւոր զարգացման անտիճանին և նոցա բարոյական դրութեանը և այնպիսի հմտութիւնով զբաղեցնէ նոցա մտաւոր ընդունակութիւնը ու կըթէ նոցա բարոյական կողմը, որ նոքա իւրեանց ուսածը ու ուսուցչի խրատները դիւրին կերպով ու լիովին իրանցը սեպհականացնել կարողանան, և նա այնպիսի ձևով վարվէ աշակերտներու հետ ու աղղէ նոցա վերայ, որ գրաւել կարողանայ նոցա սիրտը դէպի ինքը, որ աշակերտները ամբողջ ուսման ընթացքումը յօժարակամ ու սիրով շարունակեն իւրեանց ուսումը և հաւատարման, որ նոցա մատակարարած ուսումը խնայեցօ օգտաւէտ է նոցա, և այդ օգուտը տեսնեն իրանք բացառապէս և իւրեանց ուսածը նաեւ գործադրել կարենան:

¹⁾ Учение, enseignement.

²⁾ Воспитание, education.

Հակառակ դէպքումը մենք կստանանք և ապագայ ծխական ուսումնարաններից միեւնոյն Հետեւանքը, ինչ Հետեւանք որ ունեցել են նոքա միւնչեւ աշխատ, այն է, որ, բացառեալ փոքրամասնութիւնը, աշակերտներու մեծ մասը միայն մէկ կամ երկու տարի է մնում ուսումնարանումը, կամ եթէ նոքա աւելի էլ մնան աշխատեղ, չեն կարողացել մարտել նաև այն չընչին գիտութիւնները, որը ստացել են նոքա և որոնցը չեն կարող նոքա գործ դրել ուսումնարանից դուրս գալուց յետոյ: Միեւնոյն էլ նկատում ենք և օրիորդներու մէջ, որոնք, դուրս գալով ուսումնարանից, որպէս թէ գիտեն մի բան, բայց զուրկ են մնացել իւրեանց բարձր նշանակութեան ու իւրեանց գործունէութեան Համար Հարկաւոր գիտելիք ու գաղափարներ ստանալուցը, և չեն պէտքական ոչ իրանցը, ոչ իւրեանց ընտանիքին:

Ուրեմն, որպէս զի դաստիարակութիւնը և ուսումը ունենան ցանկացած բարի ներգործութիւն և օգտակար Հետեւանք, պէտք է դաստալութիւնից Հեռացրած ամենայն այն մէքէնայական ձևերը, որոնք սահմանափակում են երեխայի միտքը, մերժելու են այն վերացական մտքերը, որոնք վեր են նորա Հասկացողութիւնից, այլ նոցա տեղ պարսպմունքը պիտի լինին որեւիցէ առարկայից տեսողական ձևով ¹⁾, աւելի օրինակներով ու փորձերով, քան թէ իմաստներով ու խօսքերով, պէտք է աւելի զարթացնել երեխայի միտքը ու պարսպացնել նորա դատողութիւնը, քան թէ նորա միայնակ չիղորութիւնը. ուրեմն, աւելի գիտողութիւն ու պակաս կանօններ, աւելի դատողութիւն ու պակաս խօսքեր. պէտք է աշխատած, որ երեխայի մէջ

¹⁾ Наглядно, intuitivement.

բացուի գլխաւորապէս ինքնուրոյն գործունէութիւն, որը ուսուցչի օգնութեամբ նորան յօժարեալամ աշխատանք սիրել կտայ. պէտք է ջանալ, որ երեխան չբաւականանայ միայն մտքումը պահելով սուսուցչից լսածը կամ բերանացի սովորածը, այլ որ նա ամէն աշխատածի վերայ մտածէ ու նորան Հասկանայ. սորա Համար պէտք է երեխային իրաւունք տուած ուսուցչին Համարձակ Հարցեր տալու ու նորա Հետ խօսակցութեան մէջ մտնելու: Թող աշակերտը ուսանի քիչ, բայց ինչ որ ուսել է, գիտենայ նա նորան կատարելապէս և սեպահականա՞ծ լինի նորան բոլորովին: Այսպիսով երեխան չի մնայ ուսուցչին լոկ լսող, այլ նա կդառնայ և մտածող, նաև գործող, և երբ որ երեխայի իրաւացի չառաջադիմութեան գործիք կդառնայ գլխաւորապէս նորա սեպահական դատողութիւնը, կը բացուին և երեխայի ընդունակութիւնները և կգորանան նորա մտաւոր ոյժերը, երեխան կսկսի ստանալ վստահութիւն իւր սեպահական ոյժի վերայ, նա կզգայ իրան նշանակեալ կերպով աշխուճած, ուսումը նորան կբաւականէ և նա կսկսէ սիրել ուսումը, սիրել նորա դատողին և ստանալ դէպի նորան չարգանք: Ահա այն ամենամեծ վարձատրութիւնը, որը ստացաւ ուսուցչիցը, որին արժանացաւ ուսումնարանը:

Բայց երեխայի սիրոյն ու չարգանքին լիովին արժանանալու Համար Հարկաւոր է, որ ուսուցչիչը ներգործէ միեւնոյն ժամանակը և երեխայի բարոյականութեան վերայ:

Մինչև Հոգեկան դրութիւնը չէ Հանգիստ, պարզ ու մաքուր, անկարելի է սպասել ուղիղ մտաւոր գործողութիւն. վասնորոյ ուսուցչի պարտաւորութիւնն է երեխայի միտքը կրթելուց, կրթել և նորա բարոյականութիւնը:

Սորա համար ուսուցիչը թէ դատաւան մէջ, թէ նորանից դուրսը, պիտի առանձին ուշադրութիւն դարձնէ երեխանց հոգեկան դրութեան ու նոցա բնաւորութեանց վերայ, և նկատելով նոցա որեւիցէ վատ կողմը, անկարգ վարմունքը, դադարացնէ առժամանակ նաեւ դասաւորութիւնը և աշխատէ պարզելու ու մաքրելու երեխայի ամենայն հոգեկան պղտորութիւնը, համոզելով և հասկացնելով նորան նորա արածի վատ ու վնասակար կողմերը, և այսպիսով նորան ուղղելից ու հանգստացնելից չետոյ, շարունակելու դասաւորութիւնը: Անդհատելով առժամանակ դասաւորութիւնը, նաեւ դատի ամբողջ ժամանակը դործածելով երեխայի հոգեկան կողմը կրթելու վերայ, ուսուցիչը չէ թէ պիտի փոշմանէ, որ կորցրեց ժամանակ, այլ պիտի հաւատարմիկնի որ նա ամենաօգտակար կերպով դործ ածեց նորան. թէպէտ նա պարապեց նաեւ մէկ աշակերտի պակասութիւնը ուղղելով ու պտորդելով, բայց դորանով նա ամբողջ դասատւան աշակերտներու վերայ ունեցաւ բարի ներգործութիւն, փառատելով այն ցաւը, որը անկատար և շատերը նոցանից ունէին, պատճառ որ նոքա էլ ժողովուրդի գրեթէ միեւնոյն դասակարգիցն են, ուրեմն փոքր 'ի շատէ միևնոյն բարոյական պայմաններու ներգործութեան ներքոյ են:

Այդ բարոյական կրթութեան նպատակը պիտի լինի՝ հաստատել երեխանց մէջ գլխաւորապէս արդարութիւն, սէր, ընկերական և բարեկամական կապ, սրտացաւութեան, կարեկցութեան ու օգնութեան հոգի դէպի ընկերները, վերացնելով նոցանից խաբէութիւն, սուտ խօսել, նախանձ ու չարութիւն. աշխատելով, որ երեխանց մէջ չլինին խռովութիւն, չարախօսութիւն և չիշոցք, հաստատել նոցա մէջ ազնիւութեան

ու հաւատարմութեան հոգի, ցոյց տալով նոցա և սխալ ու անճշտ հաշուապահութեան վատ հետեւանքը որեւիցէ արուեստի կամ վաճառականութեան մէջ, կամ որեւիցէ մարդկային յարաբերութեանց մէջ. կոտորար ու կոշտ բնաւորութիւնը, որը յատուկ է այդ դասակարգի երեխանցը, փոխել դէպի մեղմութիւն, համեստութիւն ու պարեւշտութիւն: Չկայ տարակոյտ, որ երեխային այդ բարոյական հիմունքները և նորա պարտաւորութիւնները հասկացնելու ամենաչարմար ժամանակը են այն դեպուածքները, երբ որ նա դործքով կամ խօսքերով կոչտնէ իւր ունեցած պակասութիւնները:

Ուսուցչի համար երեխայի դէմքը ու նորա արտայայտութիւնը պիտի հայելի լինի նորա հոգեկան դրութեան, վասնորոյ նորա պարտականութիւնն է ուշադրութիւն դարձնել անդադար աշակերտներու դէմքերու վերայ:

Ի՞նչքան անդամ այդ դէմքի վերայ յայտնվում է ցաւ ու կոկիծ, որոնք պատճառում են երեխային նորա ընտանեկան հանգամանքը կամ որեւիցէ զրկանք. շատ կարելի է երեխան մերկոտն է, նա մրսում է հագուստի պակասութիւնից: Ձէ որ ուսուցչի պարտաւորութիւն է ուշադրութիւն դարձնել և սորա վերայ, ու հարց ու փորձ անել երեխային այդ ցաւի պատճառի վերայ և հանգստացնել նորան, ու հոգալ, եթէ ոչ խիղճն, այլ չետոյ, որեւիցէ կերպով հեռացնելու այդ պակասութիւնները, գործ դնելով սորա համար զանազան հնարքներ և միջնորդելով նոցա մասին ուսումնարանի վարչութեան առաջ:

Արդարեւ, ուսուցիչը ամենայն կերպով պիտի աշխատէ, որ երեխայի դէմքը լինի միշտ պարզ, պայծառ ու վառ, եթէ ոչ, ապարդիւն կրանցնի նորա ողջ

դասաւորութիւնը. պղտոր ու վրդովուած Հոգին արգելք է լինում մտքի պարզ լինելուն, ուրեմն և ուղիղ դատողութեան ու զիւրին ըմբռնման:

Սորանից պարզ յետևում է, որ ուսուցման Հետ երեսանց և դաստիարակելը ուսուցչի պարտաւորութիւնն է, և որ սխալ է այն կարծիքը, որպէս թէ ուսուցչի գործը միայն ուսում տալն է:

Ի նկատի ունենալով, որ երեսայի անկարգութիւնը, վատ բնաւորութիւնը և պակասութիւնները Հետեանք են այն օրինակներու, գործքերու ու խօսքերու, որը նա տեսել ու լսել է իւր տանը և իւր շրջակայութեան մէջ, ուրեմն այն պակասութիւնները ունենալու մէջ ոչ թէ նա ինքն է մեղաւոր, այլ մինչև որ նա չէ էլ Հասկանում, որ ունենալով նոցա, նա մեղանշում է, ուսուցչի պիտի վարուի երեսայի Հետ բարեկամաբար, որով ու քաղցրութեամբ, նա պիտի Հասկացնէ ու մեկնէ երեսային նորա արածի կամ նորա վատ բնաւորութեան Հետեանքը, ու սոցա Հակառակ ու լաւ վարքի գերազանցութիւնը: Քան լեցի այդպիսի տխուրածքի մէջ պատժի ենթարկել երեսային, ինչպէս սովորութիւն է դառած առհասարակ ուսումնականներու մէջ, դորանով ուսուցչից ցոյց կտայ ամենամեծ անարդարութիւն: Ինչպէս Համար պատժել երեսային, երբ որ նա չգիտէ, որ իւր արածը չանցանք է, միւս կողմից՝ երեսան ստանալով անարդարաբար պատիժ, դժգոհում է, կորցնում է Հաւատարմութիւն ու յարգանք դէպի ուսուցչից, սառնում է դէպի ուսումը, դէպի ուսումնարանը, նա դառնում է ծածկաբարոյ, և երեսայի մէջ ծնվում են կրքեր ու ուրիշ նոր վատ կողմեր ու անկարգութիւններ, որոնց Հետեանքը ամէնքէն դիւրին Հասկանալի է: Բայց ամէնից առաւել ուսուցչից ինքը, իւր վարքով պիտի օրինակ լինի

ամէն այն բարոյական կանօններու ու գործողութիւններու, որը նա պահանջում է ու քարոզում է երեսանից, մանաւանդ արդարադատութեան օրինակ լինի, եթէ ոչ՝ ի գուր են գրէթէ նորա ամենայն աշխատանքը: Ուրեմն և այստեղ աւելի դժբ քան թէ խօսք, աւելի օրինակ քան թէ կանօն:

Բարոյական կրթութեան կողմանէ առանձին ուշադրութիւն պիտի դարձրած մանաւանդ օրիորդներու ուսումնարաններու մէջ: Բայ ի այն ամենայն վերջիշեալ բարոյական յատկութիւնները, որոնցը ունենալու են ինչպէս տղայք, այնպէս և օրիորդները, պիտի աշխատած վերջիններու բնաւորութեան մէջ առանձնապէս զարգացնել ու Հաստատել բնքութիւն, մեղմութիւն ու զգացողութեան այն նրբութիւնը, որը ի բնէ յատկացած է կնիկն և կաղնում է նորա կանացի յատկութիւնը, և տալիս է նորան այն գաղտնի ուժը, որով կենը ստանում է մեծ արժանաւորութիւն և նաև գերազանցութիւն տղամարդու վերայ:

Վերջապէս, որպէս զի դասատուութիւնը լինի լիովին արդիւնաւոր, Հարկաւոր է դարձնել ուշադրութիւն և նորա Հետեալ պայմաններու և Հանգամանքներու վերայ:

Ա. Լեզուն, որով խօսում է ուսուցչից աշակերտի Հետ, պիտի լինի պարզ, երեսայի Համար զիւրին Հասկանալի և ունենայ ձև աւելի խօսակցութեան քան թէ դասախօսութեան:

Ծարակոյս չկայ, որ դասատուութեան լեզուն պիտի լինի երեսայի խօսածը ու դորձածածը, այն է, նորա մայրենի լեզուն:

Բ. Մէկ դասատան մէջ աշակերտները լինելով զանազան բնորոնակութեանց, ուսուցչից չպիտի բաւականանայ նորանով, եթէ նորա ասածը Հասկացան

մէկ քանիսը, այն է, աւելի ընդունակ աշակերտները, այլ նա պարտաւոր է հոգալ, որ ամէնքը սեպհակահաճ լինին իրանցը նորա ասածը. դորա համար նա պիտի դարձնէ աւելի ուշադրութիւն պակաս ընդունակութիւն ունեցող աշակերտներու վերայ և ամենայն հնարք գործած է հասկացնելու նոցա իւր պատմածը, և ամենակարեւոր դիպումաժութիւնը գործած է նոցա համար աւելի ընդունակ ընկերներու օգնականութիւնը. և ուսուցիչը պիտի իւր համար անբաժնեղի կանօն դնէ՝ մինչև աշակերտները ամէնեքեան չհասկացան ու չսեպհականեցին իրանցը նորա ասածը, չշարունակել դասատւութիւնը, պատճառ որ, մէկ կողմից, մտքերու շարունակութիւնը ունենալով կապ անցեալի հետ, որը մնացել է երեսալի համար անհասկանալի, դառնում է նորա համար նմանապէս անմարտելի ու անհասկանալի, և միւս կողմից, երեսան սովորելով առանց հասկանալու թողնել մէկքանի անգամ ուսուցչի ասածը, սովորում է առանց գործածութեան թողնել իւր մտաւոր ոյժերը, որոնք դորանով թուլանալ են սկսում, և երեսան վերջապէս կորցնում է նաև վստահութիւն իւր սեպհական ոյժի վերայ, դառնում է երկչոտ, և թուլանում է ինքը. և նա, որը եթէ ուսուցիչը լինէր սկզբումը նորա համար հոգացող, կգառնար առաջին աշակերտներէց մինը, դառնում է վերջիններու կարգումը, նաև համարվում է անընդունակ կամ ծոյլ: Քանի՞ ու քանի՞ երեսաներ այդպիսով փչանում ու կորչում են:

Դ, Ուսուցիչը պիտի իւր ամենայն աշխատանքը գործդնէ, որ իւր տուած դասը աշակերտները հէնց դասատւութեան ժամանակը ուսանեն և ըսածը իրանցը սեպհական են, ուրեմն և որքան կարելի է քիչ աշխատանք կամ դաս տալ աշակերտին տանը պատ-

րաստելու համար, և այդ աշխատանքը տալով, չարմարուի նորա տնային հանգամանքներու հետ, պատճառ որ, նա պիտի ՚ի նկատի ունենայ, որ տանը երեսան ոչ ոքից օգնութիւն ստանալ չէ կարող իւր մտաւոր հարկաւորութիւնները բաւականացնելու համար, նորան ոչ ոք իւրեան չհասկացածը մեկնել չէ կարող, որ երեսան շատ անգամ չունի նաև ամենահարկաւոր միջոցները իւր դատը ըստ կարգին ու հանգիստ պատրաստելու համար. նա չունի տանը գրելու սեղան. կպատահի, որ նա չունենայ նաև իւր համար առանձին մոմ, և այն միայնակ ճրագը, որը կայ տանը և որի շուրջը նստած են ընտանիքի ամէն անդամները, անդադար տանվում ու բերվում է բնակարանի զանազան կողմերը. վերջապէս երեսան այն դասավարդի մէջ, որտեղից գլխաւորապէս մտնում է աշակերտելու ծխական ուսումնարան, ստիպուած է ուսումնարանից տուն եկած ժամանակը պէտք գալ և օգնական լինել իւր ընտանեացը և կատարել ծնողաց յանձնարարութիւնները և տնային հարկաւորութիւնները. և որ այդ հարկաւորութիւնները անդադար կարօտ են երեսալի օգնութեանը ըստ մեծի մասին չբաւոր ընտանիքի մէջ, որտեղ սովորաբար չկայ ոչ ծառայ, ոչ աղախին, ու շատ անգամ նաև տղամարդ, որ որեւերի, թոյլ հիւանդ մայրը շատ մանր զաւակներով մեծ պէտք ունի իւր տղայի կամ աղջկայ օգնութեանը — այդ ամէնին դիւրին հասկանալի պիտի լինի: Այսպիսի հանգամանաց մէջ պահանջել երեսալից, որ նա պատրաստ է տանը իւր դատը, նշանակում է արգելել նորան կատարել իւր որդիական պարտաւորութիւնները և անտարբեր չարտբերուիլ ծնողաց և ընտանեաց հարկաւորութիւններուն և նեղութիւններուն, իսկ եթէ նա չպատրաստ է իրան տուած դասը, նա պիտի բա-

րոյապէս տանջուի, նորա համար որ նա պիտի հետեւեալ օրը գնայ ուսումնարան անպատրաստ և ստանայ ուսուցչից յանդիմանութիւնս Ահայ, ինչ նեղութիւն է պատճառում երեխային ուսուցչի անտարբերմնալը դէպի նորա դրութիւնը և չլարմարուելը նորա հանգամանքներու հետ:

Բայց, ասելով այս, չեմ կամենում ասել, որ աշակերտը ուսումնարանից տուն գնալով բոլորովին դուրկմնայ ուսումնասիրական ինքնուրոյն գործունէութիւնն է: Թող ուսուցիչը տայ նորան աշխատանք, բայց այնպիսի և այնչափով, որ նորա պատրաստելը կամ ծանր չլինի երեխայի համար, կամ անշուշտ պարտաւորութիւն չլինի նորա համար: Թող երեխան տանը և տանից դուրսը դիտողութեան ենթարկէ ամէն իւր տեսածը և վերաբերէ նորա վերայ ուսումնարանի մէջ լսածը և ուսածը. այն, ինչ որ նա մտքով նաեւ գրեւորից կամ աղիւստիներու վերայ իմացել ու տեսել է, թող նա ստուգէ բնութեան մէջ իսկական առարկաներով ու երեւոյթներով, և թող նորա այս տեսակ արած գննութիւնները, համեմատութիւնները, դիտողութիւնները, լինին գլխաւորապէս նորա համար գտնի պատրաստելը, և ուսումնարան եկած ժամանակ, ուսուցչի հետ խօսակցութեան ու նորան տուած հարցերու նիւթ և հաշիւ իւր մտաւոր գործողութեան ուսումնարանից դուրսը:

Այսպիսով երեխան և օգտակար կերպով կգործագրէ ուսած գիտելիքը, կշարունակէ վարժել իւր մտաւոր ոյժերը, և միեւնոյն ժամանակ կըրատարէ իւր որդիական պարտաւորութիւնը դէպի իւր ծնողք, և այսպիսով կպահպանուի ամուր նորա և ծնողաց, միւս եղբօրներու ու քոյրերու մէջ և դէպի ընտանիքի միւս անդամները, սիրոյ և բարեկամական կապը: Այն ինչ

չլարմարուելով երեխայի վերջիշեալ անային հանգամանքներու ու պայմաններու հետ և բարձելով նորա վերայ անչափ դասեր ու դրաւոր աշխատանք, որը պիտի նա պատրաստէ տանը, ինչպէս սովորութիւն է դառած ներկայ ուսումնարաններու մէջ, մենք կստանանք միեւնոյն ցաւալի հետեւանքը, որը յառաջ է բերում ինչպէս մեր ստորին, այնպէս էլ միջնակարգ ուսումնարաններու մէջ եղած ներկայ դաստիարակութեան կարգը:

Ի՞նչին է նման մեր ուսանող թէ տղայոց թէ օրէն որդիներու դրութիւնը: Առաւօտը հաղիւ թէ քնից դարձած են, վաղում են ուսումնարան. Հինգ ժամ այն տեղ շարունակաբար պարապելից յետոյ գալիս են հոգնած տուն ճաշելու, հաղիւ ճաշից վեր են կենում, նորից նստում ուսուցչի տուած դասերը պատրաստելու, որը տեւում է մինչեւ ուշ գիշերը. այնպէս որ երեխան, թէ տղայ, թէ աղջիկ, առանձնանում է իւր ընտանիքից և այնպէս, որ, կարծես թէ նա էլ չէ պատկանում նորան և դառնում է, կարելի է ասել, նորան օտար. երեխան չունի ժամանակ վայելելու ծնողաց ոչոր, կամ իւր կողմից յայտնելու նոցա իւր որդիական զգացմունքը. նա չունի միջոց ծանօթանալու տան հանգամանքներու ու պիտոյքներու հետ. մեր մնայ կատարել որդիական պարտաւորութիւնները կամ ծանօթանալ կեանքի ու ընտանեկան պայմաններու հետ. երեխայի ուշք ու միտքը դրադուած է ուսումնարանական կարգով ու դասերով, և սորա ցաւալի հետեւանքը, մանաւանդ օրիորդներուն վերաբերմամբ, է, որ ուսումը աւարտելուց յետոյ հասակ առած օրիորդը շատ դժուարութեամբ է դիմանում տանը, նորա համակրութիւնը ուղղած է գլխաւորապէս դէպի իւր նախկին ուսուցիչները, վարչութիւնները, ընկերութիւնները ու դէպի

ամէնք, որ նորա ընտանիքից դուրս է. և այս բանը բնական ու հեշտ հասկանալի է. օրիորդի մէջ չէ հաստատուել սիրոյ ու բարեկամական կապը դէպի ծնողքը և ընտանիքի միւս անդամները, դէպի իրան ընտանիքը, այն կապը, որը հիմն է զաւակներու ապագայ բախտաւորութեան. ուր մնայ այն պարտաւորութիւններու և այն բարձր դերերու համար պատրաստուելը, որոնք կազմում են օրիորդի համար նորա ամենաբարձր նշանակութիւնը կեանքի մէջ. և եթէ աւելացնենք սորան և դասերու ու գիտութիւններու այն բաղմութիւնը և նոցանից շատերի աւելորդ լինելը, և միւս կողմից, այն գիտութիւններու պակսիւրը, որոնք ամենահարկաւոր են երեխային, մանաւանդ օրիորդներուն, աւելի հեշտ մեկնել կարող ենք այն ցաւալի հետեւանքը, որին ենթարկւում են մեր դեռահաս ուսանողները մեր ներկայ ուսումնարաններու մէջ:

Ուրեմն, եթէ ծնողքը իրանք չեն հատկանում իւրեանց զաւակներու ուղիղ վարելու ճանապարհը և իւրեանց զաւակներու հետ կից կոչրաբար հետեւում են ժամանակի սխալ ուղղութեանը, որը, թեւաւորուած իբր թէ յառաջդիմութեան (прогрессъ прогрès) և լուսաւորութեան գաղափարներով, ոչ այլ ինչ է, եթէ ոչ սոցա թեւերից թափած միայն փթած, մաշուած ու աղտոտուած փետուրները, գոնեայ ուսումնարանը իւր կողմից չպիտի նպաստէ աւելանալու ժամանակի այդ ցաւալի բերմունքը, այլ ընդհակառակն, ամենայն ջանք պէտք է գործ դնել իւր ուղիղ կարգադրութիւնով հոգալ մատաղահաս ուսանողներուն իսկապէս և պատշաճապէս լուսաւորելու, կրթելու ու դաստիարակելու և վերականգնացնելու ընտանիքը և նորա անդամներու մէջ բարոյական կապը հաստատելու այն հասա-

րակութիւններու մէջ, որտեղ նոքա փուլ եկած ու բացբացուած են:

Դ. Մեծ ուշադրութեան արժանի է և ուսուցման եղանակը (մէթոդա) առհասարակ ու մանաւանդ ծխական ուսումնարաններու մէջ, որտեղ ուսուցիչը մէկ դասատան մէջ գործ ունի միաժամանակ քսան կամ աւելի զանազան հասակի, ընդունակութեան, բնութեան ու սովորութիւններու, անպատրաստ, անկիրթ ու չզարգացած աշակերտներու հետ, ևս աւաւել ուսման առաջին տարուան միջոցումը, երբ որ երեխաները նոր սկսում են ծանօթանալ ուսման հետ և գրել կարդալ ուսանել:

Այս հարցով վաղուց պարապում են մանկավարժները, և մանաւանդ վերջին ժամանակներումը սորա մասին մշակուած ու առաջարկուած են զանազան եղանակներ:

Բայց ասել, թէ դորանով այդ նշանաւոր հարցը վճռած պիտի՞ համարել—ոչ:

Այդ զանազան եղանակներից իւրաքանչիւրը ունի իւր արժանաւորութիւնը և իւր պակասութիւնը, և եթէ նոցանից մէկը շատ յարմար է գործածել մէկ ազգի ուսումնարաններու մէջ, անյարմար է միւս ազգի երեխանց համար, նաեւ միեւնոյն ազգի զանազան դասակարգերուն յատկացեալ ուսումնարաններու համար, վերջապէս և միեւնոյն ուսումնարանի ու դասատան զանազան աշակերտներու համար, նայելով երեխանց բնութեանը, ¹⁾ ընդունակութեանը, բնաւորութեանը և նոցա դաստիարակուած ու զարգացած լինելու աստիճանին:

Ապա ուրեմն ընտրել այդ եղանակներից մէկը և

¹⁾ Темпераментъ, temperament.

գործդնել նորան ամենայն ուսումնարաններու մէջ և ամէն աշակերտի համար, նշանակում է, ենթադրել ամենայն տեսակ մարդկային հոգեկան ձգտումները և յուզումները ուսուցչի կամքին ու նորա ճաշակին: Բայց ինչ մանկավարժութեան հիմունքն է, ընդհակառակն, յարմարուել երեխայի բնութեանը, նորա պահանջին և վարել նորա մտաւոր զբաղումը նորա յատկութիւններու համեմատ:

Վասնորոյ ուսուցիչը ինքը քաջ ուսումնասիրած ունենալով ամէն այդ եղանակները և լաւ գիտենալով ուսուցման դանադան միջոցները, պիտի դործ դնէ նոցանից այնպիսիները, որոնք յարմարագոյն լինին իւր դատարարած երեխանցը:

Սորա համար ուսուցիչը, յառաջ քան իսկապէս ուսուցումը սկսելը, պարտական է մերձաւորապէս ծանօթանալու աշակերտներու յատկութիւններու հետ, իւրաքանչիւր երեխայի հետ զրուցելով դանադան նորան ծանօթ առարկաներու վերայ, փորձելով նորա դատողութիւնը ու բնաւորութիւնը և ուշադրութեամբ յետեւելով նորա բարքին ու վարքին, և երբ որ նա ամենայն ճշտութեամբ կրողէ իւրաքանչիւր աշակերտի ընդունակութիւնը, բնութիւնը, զարգացման աստիճանը ու նորա պակասութիւնները, մէկ խօսքով, դիագնոզիս կանէ նորա մտաւոր ու հոգեկան ոյժերու, նա նոցա պիտի յետոյ դասակարգէ զանազան խումբեր, և գործ դնէ իւրաքանչիւր խումբին յարմար ուսուցման եղանակը և միջոցները, և անելով այդ, ուսուցիչը իւր ընդունած ուսուցման եղանակից նաև մէկ քանի խտրութիւն պիտի անէ մէկ կամ միւս երեխայի համար, որը այս կամ այն յատկութիւնով դանադանվում է միևնույն խումբի իւր միւս ընկերներէից: Չպիտի մոռացած, որ իւրաքանչիւր երեխան,

ինչքան էլ նմանի միւսին, ինքն ըստ ինքեան անհատ է, և ունի իւր սեպհական պակասութիւն ու պահանջ, և ուսուցիչը չունի իրաւունք զանց առնել երեխայի անձնաւորութիւնը: Եթէ ոչ, գործ դնելով որեւիցէ, նաև ամենաընտիր, եղանակը ամէնի համար առանց խտրութեան, յապարդիւն կը անցնի ուսուցչի աշխատանքը երեխանց, շատ կարելի է, նաև մեծամասնութեան համար, վերցիշեալ պատճառներով գործ դրած ուսուցման ձևը անպատիւ լինելով նոցա համար, մանաւանդ ևս, որ այդ դանադան եղանակներից մէկքանիսը պայմանաւորուած են այնպիսի արուեստական ձևերով, որ նոցա գործադրութիւնը հեշտաբար դիմակաւորել կարող է երեխանց մտաւոր գործունէութիւնը—ըստ երեւոյթի, աշակերտները ամէնքը պարագայած են, ճշտաբար կատարելով այդ եղանակի մանրամասն պահանջները, բայց իսկապէս նոքա գործում են մէքենայաբար, գրէթէ չմասնակցելով իւրեանց մտաւոր աշխատանքով այդ ձանձրացուցիչ պարագմունքին:

Ասածիս ճշմարտութիւնը հաստատելու համար մտնենք այն դասատուն, որտեղ գործ է դնվում այդպիսի ուսուցման եղանակը: Չէ կարելի առանց սրտացաւութեան նայել, ինչպէս ուսուցչի որեւիցէ տուած նշանով ¹⁾ շանկարծ ամբողջ աշակերտները միաժամանակ ձայն են բարձրացնում, և վերստին միևնույն մոդական նշանը տալիս՝ յանկարծ լռում են: Նայեցէք այդ ժամանակ երեխանց դէմքերուն. նոցա վերայ

¹⁾ Որը ամենայն դիպուածքում է բարձրագոյն գոչին, կամ դմբէլը սկզբին վերայ խփելով առաջ եկած երեխանց զընդունեցողութիւն, որպէս զի այն նշանը դասատան ամբողջ աշակերտներուն գիւրհաս լինի:

դուք չէք նկատի ունիչ նշոյլ ու արտայայտութիւն նորա մտաւոր գործունէութեան: Որքան աւելի տեսնւմ է ձեր ներկայութիւնը այդ դաստիարակութեանը, այնքան աւելի մոռանում էք, որ դուք դաստիարակ մէջ էք, և որ դուք ձեր առաջը կենդանի ու մտաւոր արարածներ ունիք, երեսանց դուարթ, կայտառ, կենսակիր, հրատես դէմքերու տեղ դուք տեսնում էք ձեր առաջը բռտացած պատկերներ, շուարած ու թմրած երեսներ, լարուած դէմքեր, որոնք ապուշ կրթութեամբ սպասում են միայն, թէ ինչ նշան կտայ նոցա ուսուցիչը: Չէ, դուք վճռում էք վերջապէս, որ դուք գտնւում էք մէկ արհեստարանի մէջ և ձեր առաջ ունիք ինքնաշարժ մէքէնաներ: Եթէ դուք համբերութիւն ունիք էլի մէկքանի ժամանակ շարունակել ձեր ներկայութիւնը այդ դաստիարակութեանը, դուք կնկատէք, ինչպէս այդ շուարած երեսանց լարուած ձկիկերը շուտով թոյլանում են, և ինչպէս նոքա ինքեանք սկսում են մէկը միւսից յետոյ յորանջել:

Բայց ամէնից յետաքրքրելին է ինքը ուսուցիչը, որը չափաւորաւ իւր դաստիարակութեան եղանակի գերադանցութիւնով, այնպէս խորասուզել է իւր արուեստակերտած գործի մէջ, որ մոռացել է, թէ գործ ունի հոգեկան ոյժերով զինաւորուած, նորափթիթ, կենդանի արարածներու հետ, և իւր ամբողջ ուշադրութիւնը կենդանեացրել է նորա մէջ, որ պինդ բռնած ունենալով մէկ ձեռք իւր մէքէնական յորինուածի ձգտալարը՝ սորա գլխաւոր շարժառիթը՝ և միւս ձեռով մեծ զգուշութեամբ դարձնելով պտոյտակը, ամենամեծ մտադրութեամբ լետեսնում է հիմնադիր անիւտ ամենափոքրիկ ատամներու շարժմանը, որ չիցէ թէ նոցանից մէկ անգործադրելի մնայ:... Բայց թէ ինչ ներգործութիւն ունեցաւ այդ մէքէնաւորութիւնը երեսանց հոգեկան ոյժերու վերայ,

Ինչ հետեւանք առաջ է բերվում դորանից երեսայի ուղեղի մէջ, դա, կարծես, փոյթ չէ ուսուցչի միայն թէ ամենաճիշտ կերպով կատարուած լինին նորա ընդունած եղանակի պատուիրած մանրամասնութիւնները: Ահա որի մէջն է ուսուցչի գլխաւոր ջանքը ու հոգոր: Վերջապէս լուեցաւ ուսումնարանի դանդի ձայնը: Ուսուցիչը շտապում է փակելու իւր մէքէնայի պտոյտակը, նշան դնելով նորա վերջին փորումի վերայ, որիցը նա չետեսալ օրը նորից կսկսէ պտոյտել իւր անիւտ, և այսպիսով ամիսներով շարունակել իւր արուեստական ուսուցումը, այնինչ նա տասնապատիկ կարճագոյն միջոցումը աւելի արդիւնաւոր ու օգտաւէտ հետեւանքներ կատարար, և թէ միայն կոյրարար չհետեւէր իւր ընտրած ուսուցման եղանակին և չստիպէր երեսանցը ստիպարար հնազանդուիլ նորան և անխտիր կատարել նորա պատուէրները, այլ չարմարուէր երեսանց զանազան պահանջներու հետ, ու ունիդիր լինէր երեսայի ներքին բնական ձայնին ու նորան պատասխանել աշխատէր:

Այն, այս խնդրի վերայ պիտի դարձրած առանձին ուշադրութիւն: Բացի այն, որ այդպիսի արհեստական ձեռք վարած ուսումը ուսմանաւորում է երեսայի դատողութիւնը, թմրացնում է նորա միտքը և ձանձրացնում է երեսայի ուշադրութիւնը, պատճառում է և շատ ժամանակի կորուստ, այն ժամանակի, որը, մանաւանդ ծխական ուսումնարանի մէջ, շատ խնայողապէս պիտի գործածել, որտեղ ժողովուրդի մշակ ու աշխատող դասակարգի որդիքը պիտի շտապեն իւրեանց ուսման սուղ շրջանի միջոցումը որքան կարելի է աւելի շատ շահուիլ ու ամենաօգտակար կերպով գործածել ժամանակը իւրեանց համար:

Տարակոյս չկայ, որ վերջիշեալ սկզբունքներու

վերայ հիմնած ու վարած ուսումնարանները խեղափչս
կհասնին իրենանց նպատակին, գրաւելով դէպի իրանցը
երեխաներուն, նոցա խեղափչս զարգացնելով, ու չի-
բաւի օգնելով ժողովուրդին ու բաւականացնելով նորա
կրթողական պիտոյքները:

ՈՒՍԱՆԵԼԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԾԽԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ:

Հիմնուելով ծխական ուսումնարաններու նպա-
տակի վերայ և ժողովուրդի այն դատաւարդի պա-
հանջմանց վերայ, որոնց որդիքը աշակերտելու են այդ
ուսումնարաններումը, հիմնուելով այն սկզբունքի վե-
րայ, որ ուսումնարանի պարտականութիւնն է դարձ-
նել իւր ուշադմութիւնը երեխայի ամէն գլխաւոր հո-
գեկան ոյժերու ու ընդունակութիւններու վերայ ու
սոցա կրթել ու զարգացնել, ծխական ուսումնարան-
ներու մէջ ուսանելի առարկաները պիտի լինին.

Կ Ր Օ Ն:

Կրօնի հիմունքը լինելով՝ ճանաչել Աստուած,
նորա կամքը ու պատուիրանքները, աղներե և, որ
գորա ուսումը երեխայի համար ամենակարեւորագոյնն է:

Բաց թէ ինչպէս ճանաչել տալ երեխային Աս-
տուածութիւնը, ինչպէս նորան իմացանել ու հաս-
կացնել, Աստուածային անբաւոյնի օրէնքները, նորա
ճշմարտագոյն ուսումը ու պատուիրանքները—ահա
սորանումն է ամենամեծ դժուարութիւնը, և սորա-
նիցն է, որ ոչ թէ սկզբնական, այլ և միջին կարգի ու-
սումնարաններումը կրօնի դաստաւութիւնը ամենա-
մեծ հոգսն է կազմում մանկավարժներու համար, և

և սորա պատճառով շատ ուսումնարաններու մէջ գե-
րադանց է համարվում բոլորովին կրօն չդաս տալ,
քան թէ այնպէս, ինչպէս սովորաբար դաս է տվում,
որով դաս տուած կրօնը ոչ թէ Աստուած ճանաչել չէ
տալիս, այլ ընդհակառակն ձանձրութիւն, նաև ար-
համարհանքն է ներմուծում ուսանողի մէջ դէպի նորա
դաստաւութիւնը, ինչպէս հաստատել կարող են իւ-
րենանց սեպհական փորձով գրեթէ ամէնքը, որոնք
զանազան, ուսումնարաններումը դաս են առել կրօնքի
ուսումը:

Կասկած չկայ, որ երեխայի մէջ կրօն հաստա-
տելու ու նորա դաստաւութիւնը իւր բարձրագոյն
նպատակին հասցնելու միջոցները և ճանապարհը չեն
կարող լինել կրօնագիտութեան սխմած, ամբացալայտ
ու միջին տրամադրութիւնները, կամ Աստուածային
էութեանց վերացեալ բացատրութիւնները և իմացա-
կան աստուածաբանական մէկնութիւնները, այլ այդ
միջոցները պիտի լինին պարզ, հասարակ, տեսանելի,
ինչպէս պարզ ու բաց երևում են մեր Ստեղծողի գոյու-
թիւնը, նորա գործքերը և նորա մարդուն իւր կամքի
ու պատուիրանքներու յայտնելու ու իմացանելու մի-
ջոցները:

Վեր առնենք օրեկց փոքրիկ ու առանձին դո-
ւութիւն: Եթէ նորա լինելը, նորա յատկութիւնները
նորա օրէնքները մենք իմանում ենք նորանից յառաջ
եկած գործողութիւններից, լինչու համար այն ամե-
նամեծ ու ամենապօքիկ գործութեան լինելը, որ է ինքն
Աստուած, չպիտի ճանաչենք նմանապէս նորա ամե-
նամեծ ու սքանչելի գործքերից, որ է համատարած
ընութիւնը, ամբողջ տիեզերքը, որը երեխային չըջա-
պատում է: Ուրեմն՝ դարձնել երեխայի ուշադրու-
թիւնը Աստուծոյ ստեղծած աշխարհքի վերայ, նորան

չըջապատող բնութեան առարկաներու և երևոյթնե-
րու վերայ, բացանել նորա առաջը մեր ստեղծողի ա-
մենավերին իմաստութիւնը, զիտութիւնը ու կարո-
ղութիւնը, որով նա կազմել ու ձևացրել է ամենայն
ստեղծարարները՝ թէ կենդանի թէ անկենդան,
իմացանել երեխային ինչպէս նա նոցա շարժել է տա-
լիս, ինչպէս այդ արածները գործում, մտածում ու
զգում են, սխաժ ամենամեծ կենդանիները մինչև
ամենափոքրները, երկնքի մարմիններու՝ արեգակի, Լուսնի
ու աստղերու գոյութիւնը—չէ արդեօք բաւական երե-
խային ճանաչեցնելու Աստուած, նորա ամենամեծու-
թիւնը, ամենաիմաստութիւնը, ամենազօրեղ լինելը,
և զարթեցնելու նորա մէջ երախտագիտութեան զգաց-
մունքը զէպի Աստուած այն ամենայն բարութիւն-
ներու համար, որը Աստուած տուել է մեզ և որով
դասել է մարդուն աշխարհքի մէջ զլուր ամենայն ա-
րարածներու վերայ, որոնցը նա պէտք է ածում իւր
օգտի ու բաւականութեան համար որքան և ինչպէս
էլ կամենայ:

Զարթեցնելով այս ձևով երեխայի մէջ կրօնական
զգացմունքը, պէտք է միևնոյն ժամանակ թող տալ
երեխային, որ նա ինքը շարունակ է իւր զիտողու-
թիւնները իրան շըջապատող բնութեան մէջ և ինք-
նուրոյն զարգացնէ իւր մէջ այդ կրօնական զգաց-
մունքը: Երեխանցը միաժամանակ դաս տուած բնա-
կան գիտութիւնը (տես ներքև) աւելի կզօրացնէ նորա
մէջ Աստուծոյ ստեղծած արարածներու ու բնութեան
հետ ծանօթանալը:

Այսպէս Աստուծոյ ստեղծուածներու վերայ խօ-
սելուց ու աշխարհքի ստեղծագործութեան վերայ պատ-
մելուց չետոյ, երբ որ մարդու վերայ կսկիւն ուսուցիչը
երեխայի հետ խօսել, պիտի նա ցոյց տայ սորան

մարդու գերազանցութիւնը Աստուծոյ ստեղծած ամե-
նայն արարածներու վերայ, ցոյց տայ սորան այն յատ-
կութիւնները, որոնք մարդուն շատ բարձր են կացու-
ցանում ամենայն կենդանիներու վերայ և արել են
նորան բնութեան վերայ իշխող, այն է՝ մարդու հոգին,
զեռը կողմերը, որպիսի են՝ խելքը, զգացմունքը, հոգին,
որոնք թէպէտ և միւս կենդանիներու մէջ էլ կան,
բայց շատ սակաւ ու սահմանափակուած, իսկ մար-
դուն Աստուած այդ հոգեկան կարողութիւնները տուել
է այնքան, որ եթէ մարդը նոցա ուղիղ կերպով կը թէ,
զարգացնէ և կատարելագործէ, նորա արած գործքերը
Աստուծոյ արածին կը մօտենան ու կը նմանեն, ինչպէս էլ
մարդու կարողութիւնը հաստատում է և սուրբ գերքը,
ասելով՝ թէ Աստուած ստեղծեց մարդուն իւր պատ-
կերի նման:

Մարդու հոգեկան յատկութիւններու զօրեղու-
թիւնը մեկնել պէտք է երեխանցը իրանցը հասկա-
նալի օրինակներով ամենօրեայ կեանքից, զորօրինակ,
որ մարդը, նաև փոքր երեխան, հնազանդեցնում է
իրան իրանից շատ զօրեղ ու ահագին կենդանիներուն,
ինչպիսի են՝ ձին, եղը, դոմէշը և այլն, ու մարդու խելքից
առաջ եկած երեւելի գործքերը ապացուցանել այն մեծ
գիւտերով, ինչպիսի են՝ զորօրինակ, շոգեկառը, հե-
ռագիւրը, երկնային մարմիններու ինչ լինելու և նոցա
ինչպէս շարժելու իմանալը և այլն, իսկ մարդու հո-
գեկան ոյժի մասին յառաջ բերելով մարդու արած
զանազան բարեգործութիւններու և քաջագործութիւն-
ներու օրինակները: Այս առարկաները կարող են բա-
րոյական խօսակցութեան շատ դասերու նիւթ լինել,
որի նպատակը կը լինի հասկացնել երեխային գիտու-
թեան ու տգիտութեան, բարոյական ու անբարոյական
լինելու մէջ եղած զանազանութիւնները և նոցա հե-

տեանքները, Հասկացներով մի և նոյն ժամանակ երե-
խային, որ Աստուածանից այս վերին շնորհքը տուած
է ամեն մարդուն առանց զանազանութեան՝ լինի նա
մեծ թէ Հասարակ մարդ՝ և որ մարդուցն է կանուած
այդ Հոգեւոր կողմերը իւր մէջ զօրացնելու ու մեծ ու
երեւելի մարդ դառնալու։ Սորանով երեխայն կ'ստանայ
նշանակեալ վատահոլութիւն իւր ոյժի վերայ, կը քաջալե-
րուի, որ ուրեմն ինքն էլ կարող է դառնալ այնպիսի
մեծ ու արեւելի մարդ։ Սորանից չետոյ ուսուցչի խօսակ-
ցութեան շարունակութիւնը պիտի պարունակէ իւր
մէջ այն միտքը, որ Աստուած ստեղծելով մարդուն ու
տալով նորան խելք, զգացումն և հոգեկան զօրու-
թիւն, միևնոյն ժամանակ նա և ցոյց է տուել այն
միջոցներն ու ճանապարհները, որով մարդ այն հո-
գեկան ոյժերը իւր մէջ պիտի կրթէ, զարգացնէ ու
կատարեալագործէ, որ նա դառնայ կատարեալ ու
Աստծուն սիրելի ու նորա ուղած մարդ, այն մի-
ջոցներն ու ճանապարհն են՝ Աստուծոյ պատուիրան-
ները։ Միայն Աստուած տալով մեզ իւր պատուրան-
ները և այսպիսով յաշտնելով մեզ իւր կամքն, այն է,
թէ ինչպէս մարդ պիտի իւր սիրտը, իւր խելքը ու իւր
Հոգին մաքրէ, կրթէ ու զօրացնէ, որ կատարեալ ու
Աստծուն սիրելի մարդ դառնայ, միևնոյն ժամանակ
նա տուել է մարդուն ազատ կամք, այսինքն, նա ա-
սում է մարդուն՝ «Կուգես դու, որ դառնաս լաւ ու
մեծ մարդ ու ինձ նմանիս, կատարէ իմ կամքը, իմ
խրատները, իմ պատուիրանները. կը կատարես՝ լաւ,
և կը դառնաս իմ ուղած մարդը, կը լինիս ինձ սիրելի, ես
քեզ կը սպաշտպանեմ, ես քեզ կը բախտաւորացնեմ. չես
կատարիլ, այն ժամանակ դու գիտես, մեղաւորը ինքդ
կը լինիս»։ Նմանապէս, որ Աստուած ստեղծելով բարին,
ստեղծեց և չարը և ասաց մարդուն. «Երեւան էլ քո

առջեդ են. իմ կամքն է, որ դու միշտ բարինն չե-
տես. բայց Հիմիկ դու գիտես, սրանցից մը կ'ընտ-
րես», և որ ահա սորանիցն է, որ մարդկեւանց մէջ
նաքա, որոնք կատարում են Աստուծոյ կամքն ու նորա
պատուիրանները և հետեւում են բարինն ու կուռե-
լով չարի դէմ, յաղթում են նորան, լաւ ու բախտա-
ւոր են, իսկ նոքա, որոնք չեն ուզում կատարել Աս-
տուծոյ կամքը և չարը նոցա մէջ աւելի զօրանում է
քան թէ բարին, վատ ու քամբախտ մարդիկ են դառնում։

Այս հարցի վերայ ուսուցիչը թող ընդարձակուի
և երեխային կեանքից վերառած զանազան նորան
Հասկանալի օրինակներով Համոզէ այն ճշմարտու-
թեան մէջ, և այսպիսով պատրաստէ երեխային, որ
սա ինքը ցանկանայ իմանալ այդ պատուիրանները։

Մեկնելով երեխային Աստուծոյ կամքը և մար-
դուն տուած խրատները, պէտք է միևնոյն ժամանակ
Հասկացնել երեխային՝ թէ Աստուած զանազան ժա-
մանակներումը և դէպքերումը ինչպէս և մեծ բե-
րանով է յաշտնել իւր պատուիրանները, այն է այն-
պիսի մարդկեւանց բերանով, որոնք առաքինի ու Աս-
տուածապաշտ են. եղած, իրեանց բարեսրտութիւնով
ու մեծ մեծ ու բարի գործքերով, իրեանց խտակ ու
ազնիւ հոգով, մեծ խելքով, ու միշտ Աստծուն միտք
բերելով ու նրան հնազանդ լինելով, սիրելի են դա-
ռել նորան. մէկ քանի անգամ էլ հրեշտակներու բե-
րանով, իսկ այն դէպքերումը, երբ որ մարդիկ շատ
փչացած են եղել ու նոցա վերայ խաբը չէ ներգոր-
ծել, նաեւ հրաշքներով։ Այստեղ օրինակներ բերել Սըր-
բաղան պատմութիւնից՝ նշանաւոր և բարեպաշտ ան-
ձանց ու երեւելի անցքերու պատմութիւնները՝ ի հարկէ
ընտրելով նոցանից ամենաբարոյալիանները, բայց և
յառաջ բերելով մէկ քանի և այնպիսի անցքեր, որով

երեխան իմանայ, թէ ինչ հետեանքներ են չառաջ
գալիս և վատ ու չար գործքերից: Առամի որդիքը, Նոյ,
ընկերակցը, Նոյեան տապանի Արարատ լեռան վերայ
Հալաոտանումը կանգնելը, Նոյի գործքերը: Աբրա-
համի, Իսահակի, Յակովբի և Յովսէփի գեղեցիկի պատ-
մութիւնները: Միևնոյն ժամանակ ուսուցելը պետի
երեխանց ուշադրութիւնը դարձնէ այն բանի վերայ,
որ այսպիսի առաքելի մարդիկ առաջ են եկել այն-
պիսի ժամանակներումը, երբ որ միևնեքը այնպէս
վատացած ու փչացած են եղել, որ մինչև անգամ մո-
ռացել էին Աստծուն ու նորան չէին ուղում ճանաչել,
ու իւրեանց համար քարերից, պղինձից, արծաթից ու
ոսկուց կուռքեր էին շինում ու նոցա Աստուծոյ տեղ
պաշտում. բացատրել երեխանցը կռապաշտութեան
դանադան ձևերը, այն է՝ կրակապաշտութեան, արեւ-
պաշտութեան և այլն, և այսպիսով պատրաստել երե-
խային հասկանալու 10 պատուիրանը, պատմելով
նորան և Մովսէս մարգարէի պատմութիւնը: Յայտնի է
որ այդ տարը պատուիրանի բացատրութիւնը պետի
լինի ընդարձակ և երեխայի համար հասկանալի ու
ըմբռնելի ձևով, մանաւանդ 5-րդ պատուիրանը, որը
վերաբերում է երեխայի պարտաւորութիւններուն ու
չարաբերութիւններուն դէպի ծնողքը. 7-րդ պատուի-
րանը և 10-րդի սկիզբը պետի մեկնած երեխային մեծ
զգուշութիւնով: Սրանից յետոյ անցնել կարճառօտա-
բար դէպի Սամուէլի, Սաուլի ու մանաւանդ Դաւիթ
մարգարէի պատմութիւնը, Յովնաթանի Դաւիթի հետ
ունեցած բարեկամութիւնը, Սողոմոն իմաստունի գործ-
քերը, Նդիայ մարգարէի բարեպաշտութիւնը, Տովբիթի
բարեսրտութիւնը ու առատահոգի լինելը, Դա-
նիէլ մարգարէի ու մէկ քանի ուրեշներու պատմու-
թիւնը, և ՚ի վերջոյ հասկացնել երեխանցը, որ այս

սուրբ ու առաքելի մարդիկը, որոնք իւրեանց Աս-
տուածապաշտութիւնով սիրելի էին Աստծուն, թէպէտ
և նորա պատուիրանը բարոյզում էին ժողովուրդին,
բայց տեսնելով որ մարդկերանց մէջ չարութիւնն ու
կռապաշտութիւնը շատ էին բազմանում, և իրանք
անցոր էին նոցա ուղղելու, ասում էին, որ Աստուած
ուրիշ հնար պիտի գործածէ, այն է, պետի դայ աշ-
խարհ մէկ այնպիսի մարդ, որը Աստուծոյ զօրութիւն
ունենայ, և որ նա կրկանգնացնէ մարդկերանցը ուղիղ
ճանապարհի վերայ, և սորա համար այն սուրբ մարդ-
կերանցը մարգարէ ենք անուանում, այն է, առաջուց
իմացող, թէ դալու է աշխարհի փրկողը: Եւ զիւրդ,
Աստուած տեսնելով մարդկերանց աւելի ու աւելի վա-
տանալն ու մեղ սիրելով ու կամենալով ազատել մարդ-
կութիւնը այն չարիցը, որոյ մէջ նա ընկել էր, ուղար-
կեց մեր երկիրը իւր աստուածային զօրութիւնը՝ իւր
որդուն՝ որին անուանում ենք Յիսուս Քրիստոս, և
պատճառ որ սա մեղ ազատեց ու փրկեց չարիքներից,
մենք նրան անուանում ենք և Փրկիչ, և սրպէս զի մար-
դիկ, որոնք շատ փչացած էին, կարողանան ոչ թէ միայն
լսել Աստուծոյ կամքը, այլև իւրեանց աչքով ու գործ-
քով տեսնել, թէ իոնպէս մարդը և կատարեալ մարդը
ինչպիսի պետի լինի, մեր Աստուծոյ Որդին եկաւ աշ-
խարհ կատարեալ մարդոյ ձևով, նա ծնուեց իբրեւ
մարդ, մեծացաւ ու կենում էր մեր երկրի վերայ իբրեւ
մարդ, քաջեց մարդու պէս տանջանքներ և մեռաւ
իբրեւ մարդ, բայց այս մարդկային բնութեան մէջ նա
գործում էր, խօսում էր, խրատում էր ու բարոյզում
էր իբրեւ Աստուած: Մեր Փրկիչի աշխարհ դալով մեծ
փութիւնութիւն չառաջ եկաւ մարդկութեան մէջ. նորա
բարոյները, նորա խրատներն ու պատուիրանները տա-
րածուեցան ամբողջ աշխարհի մէջ և մինչև այսօր էլ

աւելի ու աւելի տարածվում են ամեն տեղ, և ամեն-
քը, ինչպէս և մենք, որոնք Հաւատում ենք Քրիս-
տոսին ու ընդունում ենք նորա օրհնքներն ու պա-
տուիրանները, անուանվում ենք քրիստոնէաւ: Այսպե-
սով պատմել երեսխաչին Քրիստոսի կեանքի պատմու-
թիւնը, նորա ուսումը և քարոզները, նմանապէս
սուրբ Առաքեալներու գործքերը, և աշխատել քրիստո-
նէութեան ամբողջ Հիմունքները և մեր Փրկչի ուսումը
գլխաւորապէս սիրոյ վերայ Հիմնած՝ բովանդակել չափ-
կացեալ պարբերութեանց մէջ և բացատրել սոցա երե-
խային նորան Հասկանալի ձևերով ու օրհնակներով,
վերաբերելով նոցա երեսանց պարտաւորութիւններու
վերայ և Հասկացնելով երեսխաչին, որ Հետեւելով Քրիս-
տոսի գործքներուն ու կատարելով նորա մեղ տուած պա-
տուէրները, ի՞նչ բարի ու օգտակար Հետեւանքներ են
ստացվում, և որ եթէ ներկայ մարդկութիւնը յառաջ է
գնացել, աչք քրիստոնէական ուսման Հետեւանքն է:
Յետոյ՝ իմաց անել երեսխաչին, ինչպէս աշակերտներեց
չորսը զրեցին նորա կեանքն ու նորա քարոզները, և
որ այս գրութիւնները ՚ի միասին կազմում են Աւետա-
րան՝ այն սուրբ Պերքը, որի կարգալուց եկեղեցումը
մենք առանձին չարգանք ենք նորան ցոյց տալի:

Վերջապէս՝ որ քրիստոնէաւքս Քրիստոսի յիշատակը
պահպանելու համար կատարում ենք սուրբ պատա-
րագը, սուրբ Հաղորդութեան խորհուրդը և տնում ենք
նորա կեանքի նշանաւոր անցքերը. և մեկնել երե-
խային պատարագի և մեր եկեղեցական տօներու նշա-
նակութիւնը: Նմանապէս բացատրել երեսխաչին եկե-
ղեցւոյ նշանակութիւնը և եկեղեցի գնալու հարկաւո-
թիւնը և թէ ինչպէս պիտի երեսան, մարդը, իրան
պահէ եկեղեցումը:

Աղօթքներու մասին բաւականաճալ ուսուցանել

երեսխաչին մեր Փրկչի աղօթքը՝ այն է «Հայր մեր»,
մանրամասն մեկնելով նորան աչք աղօթքի ամեն մէկ
մասի նշանակութիւնը, և Հասկացնելով երեսխաչին
առհասարակ աղօթքի նշանակութիւնը և հարկաւո-
րութիւնը, թոյլ տալ նորան ինքնին կազմել իւր Հա-
մար աղօթք և գիմել Աստծուն իւր սրտեց բղխած խօս-
քերով, ցանկութիւններով ու խնդրերով: Արօնի դա-
սաւորութեան շարունակութիւնը պիտի բովանդակէ
իւր մէջ և Հայոց եկեղեցւոյ կարճատեւ պատմու-
թիւնը, այն է՝ թէ Հայք ինչպէս ընդունեցին քրիս-
տոնէական Հաւատը, իրան Քրիստոսեց և նորա առա-
քեալներեց, և ինչպէս յետոյ սուրբ Պրիգոր Լուսաւո-
րեչը տարածեց քրիստոնէութիւնը ամբողջ Հայոց ազգի
մէջ, պատմել մանրամասնաբար Պրիգոր Լուսաւորեչի
կեանքը և նորա գործքերը, Հասկացնելով երեսանցը,
որ մեր եկեղեցին ամենահին եկեղեցիներեց մէկն է և
իւր աւանդութիւններով իրեւ ամենահինն է մնացած
և որ մինչև այսօր մենք պահպանել ենք նորան այն-
պէս իտակ ու պարզ, ինչպէս մեր Փրկչին ու նորա
Առաքեալները մեղ աւանդել են. յետոյ՝ թէ ինչպէս
Հայոց ազգը հաւատարիմ է մնացել իւր եկեղեցուն,
և նորան պաշտպանել է Հեթանոսներու ու նորա ու-
րիշ թշնամիներու դէմ, և ինչքան պատերազմներ է
ունեցել նոցա Հետ, ու Հաստատ պահպանել է նո-
րան մինչև այսօր. ծանօթացնել երեսխաչին մեր մէկ
քանի պատմաբանական անձանց ու նահատակներ
Հետ, որպիսիք են՝ Մեծն Ներոնէս, Մետրալը, Սահակ,
սուրբ Վարդան, Շուշանիկ, Պետիդ Երէց, Հռիփսիմէ
Պաշեանէ և այլն:

Ահա այն հոգին ու այն ձեւը, որով պիտի դաս-
տվուայ կրօնը մանաւանդ սկզբնական ուսումնարան-
ներու մէջ, և որ կրօնի դասատուութեան գլխաւոր նը-

պատահը պիտի լինի՝ ճանաչել տալով երեխային Աստուած և զարթեցնելով նորա մէջ կրօնական դպացմունք, Հաստատել երեխայի մէջ բարոյականութեան Հիմունքները. կրօնի դաստատութիւնը է և պիտի լինի բարոյական դաստատութիւն՝ Հիմնուած մեր Սուրբ Գրքերու ուսման վերայ. կրօնի ուսուցիչը պիտի լինի երեխանց Համար նոցա խրատող ու քարոզող, ինչպէս մեր Փրկիչն էր ամբողջ մարդկութեան Համար, այն է, նա պիտի բացաղըէ երեխային Աստուծու օրհնքները, նորա կամքը և պատուիրանները և այն էլ այնպիսի Հեշտ ու Հասկանալի եղանակով ու օրինակներով, որ երեխան Համողութիւնով աչդ ճշմարտութիւններու մէջ. իսկ սրբազան պատմութիւնից և Աւետարանից պիտի պատմէ ուսուցիչը գլխաւորապէս այն դէպքերն ու այն անձինքներու գործքերը, որոնք Հաստատել կրթնան երեխային մեկնաձ բարոյական ճշմարտութիւնները, և ոչ թէ ձանձրացնել երեխայի չեղողութիւնը աւելորդ մանրամասնութիւններով և շարունակաբար պատմելով նորան ամբողջ սրբազան պատմութիւնը, Քրիստոսի կեանքը կամ առաքելներու գործերը, և պահանջելով երեխայից, որ նա սովորի ամենը բերանացի, ինչպէս սովորաբար ընդունուած է ուսումնարաններումը: Ժամանակով, երբ որ երեխան Հասակ կ'առնէ, կարող է ինքը ծանօթանալ այն մանրամասնութիւններու Հետ կարդալով Սուրբ Գրքերը: Այսպէս դաս տուած կրօնի ուսումը կը Հասնի իւր բարձր նպատակին՝ Հաստատելով երեխայի մէջ բարոյական Հիմունքներ և պատրաստելով նորան ապագայումը դառնալու բարեպաշտ ու բարոյական և ամենաօգտակար անդամ Հասարակութեան և յաղթահարող այն անկրօն ու անբարոյական մոլորութեան, որոնց թիւը տարաբախտաբար օրէ ցօր մեծանում է, և որոնց ընդդիմակայել կա-

րելի է միայն բարոյական ուսումով, բարոյական գործքերով:...

ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ:

Թուաբանութեան դաստատութեան գլխաւոր նշանակումն է՝ վարժեցնել երեխայի խելքը և դատողութիւնը: Ահա այս տեսակէտից պիտի ուղղէ ուսուցիչը իւր դաստատութիւնը և աշխատէ՝ ծանօթացնելով երեխային Թուերու մեծութիւններու և նոցա մէջ եղած զանազան չարաբերութիւններու Հետ, վարել այդ մշտաւոր վարժութիւնը այնպէս, որ երեխայի դատողութիւնը անդադար գործունէութեան մէջ լինի, և ոչ թէ, ինչպէս սովորաբար գործ է դնուում, Թուաբանութիւնը դաս տալ մեքենաբար, որոյ չետեանք այն է, որ ազգպիսի դիւրին և երեխային ամենամեծ բաւականութիւն տուող ուսումը դառնում է նորա Համար անհասկանալի ու ձանձրալի պարապմունք:

Այն գլխաւոր կանոնները, որին պիտի չետէի ուսուցիչը այս գիտութեան դաստատութեան մէջ, լինելու են.

Ա. Նախքան որևէ եզրակացութիւն անելը Հարկաւոր է առաջուց երեխային դիտել տալ, այն է՝ իրականից ¹⁾ անցնել դէպի վերացականը ²⁾, սորա Համար այն Թուերը և մեծութիւնները որոնց վրայ երեխան կազմում է իւր գլխի մէջ գաղափար կամ մտքի պատկեր ³⁾ պիտի լինի առաջուց նորա Համար տեսողական, այսինքն՝ Համարելին և Թուելին պիտի պատկերացնէ որ և իցէ, երեխային չափոնի, առաքիաներ կամ չափեր:

¹⁾ Конкретное, concrete. ²⁾ Абстрактное, abstract. ³⁾ Понятие, idée, Begriff.

Բ. Երեխայի մտքի վարժելը պիտի լինի վերլուծական եղանակով ¹⁾ և ներածական միջոցով ²⁾։ Այս եղանակին պիտի հետևեն ծխական ուսումնարանումը ուսուցիչները և ամեն առարկաներու դասատուութեանց մէջ, նորա համար որ երեխայի խելքն այդ հասակի մէջ կարող է գլխաւորապէս այդ ձևով հեշտ ու ուղիղ զարգանալ։

Գ. Թուաբանութեան դասատուութիւնը պիտի լինի գործնական ³⁾, այն է, երբ որ երեխան թուերու չարաբերութեանց մէջ վարժուելով արեց որեւիցէ եզրակացութիւն և կազմեց մէկ կանոն, կամ սեպհականեց իրան որ և իցէ ճշմարտութիւն, խնդն նա պիտի նոցա գործադրէ իրան ծանօթ ու հասկանալի կեանքի որեւիցէ դէպքերու կամ գործողութիւններու վերայ։

Դ. Ուսուցիչը պիտի խտտաբար պահպանէ մտքերու ու իմաստներու յաջորդականութիւնը ⁴⁾ և չընթանայ առաջ, մինչև որ աշակերտը հասկացած ու բոլորովին իրան սեպհականած չունենայ ուսուցչի պատմածը։

Ահա, այս ձևով դառնալով թուաբանութիւնը շատ դիւրին ու հասկանալի կը լինի երեխանցը և կ'ունենայ իսկապէս օգտակար հետեանք, մանաւանդ որ ծխական ուսումնարաններու մէջ թուաբանութեան դասատուութիւնը պիտի ունենայ շատ չափաւոր ընդարձակութիւն և ամփոփէ իւր մէջ միայն թուաբանական չորս գործողութիւններն ամբողջ թուերով և կոտորակներով վերացական ու անուանեալ թուերով։ Նմանապէս երեց կանոն, ընկերութեան և տոկոսներու

քու կանոնները — այս վերջինները գլխաւորապէս գործնական կերպով։

Յայտնի է որ այդ գործողութեանց ժամանակը պիտի տրաւեալներուն վարժեցնել ամենայն տեսակ խնդիրներով, որոնք վերաբերում են թէ տնային, թէ տնտեսութեան առարկաներուն ու գործողութիւններուն, թէ արուեստներուն և թէ վաճառականական հաշիւներուն, և աշխատել երեխայի միտքը վարժելու համար տալ նորան լուծել խնդիրներն աւելի մտաւորապէս քան թէ գրաւորապէս։ Ծանօթացնել երեխային դանազան թէ տեղական թէ օտարական չափերու հետ, նմանապէս սովորական չափերու (արշին, մէտր և այլն) ու կշեռքի գործածելու հետ։ Վերջին դասատան մէջ ուսուցանել աշակերտին հաշուապահութեան գլխաւոր կանոնները, և շինել տալ աշակերտին դանազան թէ թէ հաշիւներ։ Մէկ խօսքով պատրաստել երեխային այն և հասցնել նորա գիտութիւնը այն արտիճանի, որ նա ուսումնարանից դուրս դալուց յետոյ, ձեռնամուխ լինելով շինական կամ տնային պարապմուքի, կամ արհեստի, կամ մտնելով աշակերտ վաճառականի մօտ, կարողանայ իւր գործին համար հարկաւոր հաշիւները, առանց ուրիշ օգնութեան, շինել ինքը։

Թուաբանական գիտելիքին պիտի աւելացնել և երկրաչափական գլխաւոր կանոնները և հիմունքները այնքան, ինչքան դանազան արուեստներու կամ շինական տնտեսի համար հարկաւոր են նոքա, այն է, գիտեալ հեշտութեամբ և ճշտութեամբ չափել տարածութիւնը և մանաւանդ դանազան տեսակի մակերեսութիւնը ու նորա մասերը ու առարկայի ծաւալը և պարունակութիւնը և սովորցնել երեխային գործածել կարկին ¹⁾, հարդալալի ²⁾,

¹⁾ Аналитический методъ, methode analytique.
²⁾ Индуктивный способъ, par induction. ³⁾ Практический, pratique. ⁴⁾ Последовательность, succession.

¹⁾ Циркуль, compas. ²⁾ Нивелиръ, niveau.

և չափադիմ¹⁾։ Պէտք է, այս գիտելիքը ուսուցանել գլխավորապէս գործնական կերպով։ Այն մէջ արհեստականները չետադէմ են եւրոպականներէն, որոնք գլխավոր պատճառներէն մէկն էլ երկրաչափական գիտելիքից զուրկ չեն եղել։ Աստիճառ չկայ, որ հեշտ ու ճիշտ չափել գիտենալը հարկաւոր է ամեն մարդուն, նորա համար որ, գործնով չափաւորվում է ծախսը, և գործը կատարվում է շուտով, կանոնաւոր, ճշտաբար և անսխալ։

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ։

Հասկանալի է որ ծխական ուսումնարանումը բնական գիտութիւնը չէ կարելի դառնալ ամբողջապէս և յօրինական կարգով²⁾ իբրեւ գիտութիւն, այլ նորա դասաւորութեան նպատակը պիտի լինի ծանօթացնել երեխային ինչքան կարելի է անել մերձաւորապէս բնութեան այն առարկաներու ու երեւոյթներու շատ-կութիւններու հետ, որոնք շրջապատում են երեխային, որոնք ունին նորա վերայ ներգործութիւն և որոնք ձգում են իւրեանց վերայ երեխայի ուշադրութիւնը։

Բնական գիտութեան դասաւորութիւնը պիտի ունենայ խօսակցութեան ձև, և թէպէտ այդ խօսակցութեան նիւթը լինելու են բնութեան ամենայն տեսակ առարկաները և երեւոյթները՝ խառը՝ բաց ուսուցիչը պիտի պահպանէ նոցա մէջ չափորոշականութիւն և ունենայ մէկ որոշ սխառեմա, որին նա պիտի ճշտաբար չետէի, այն է, երեխայի ընդունակութեան և

¹⁾ Маштабъ, échelle. ²⁾ Систематически, systematically.

զարգացման համեմատ, սկսել ամենահասարակ ու երեխային ծանօթ առարկաներից և ամենահեշտ, մերձաւոր երեւոյթներից և աստիճան առ աստիճան անցնել դէպի բարդ ու հեռաւոր առարկաները և երեւոյթները։

Բաց կարող է պատահել, որ ուսուցիչ պահպանած այդ կարգը ժամանակ առ ժամանակ խախտուի, այն է, կենդանի խօսակցութեան ժամանակ երեխայի վառ ու հետաքրքրական բնաւորութեան և նորա պարզ զիտողութեան պատճառով խօսակցութեան թիւը ընդհատուի և ուսուցիչը ստիպուած լինի հետեւել երեխայի թաւաքներն և անկատար թողնելով սկսած որեւէ առարկայի կամ երեւոյթի վերայ խօսակցութիւնը, անցնել միւրի վերայ, և մեկնել այս վերջինը, երեխայի պահանջը բաւականացնելու համար։ Այսպիսի դէպքերումը Պէտք է ուսուցիչ հմտութիւնիցն է կախուած, ինչ զգուշութիւնով վարուել երեխայի մտաւոր ուղղութեան հետ, և որպէս զի չխանգարուի երեխայի ինքնուրոյն մտաւոր գործողութիւնը, առ ժամանակ բաւականացնել նորա հետաքրքրութիւնը և վերստին վերադարձնել նորան առաջուան ճանապարհի վերայ, և այն դիպուածներու մէջ, երբ որ երեխայի հարցը բաւականացնելու համար պակաս կըլինին նորան մէկ քանի նախընթաց գիտելիք, ուսուցիչը շատ հեշտութեամբ կարող է հասկացնել երեխային, որ նա առ ժամանակ սպասէ, որ նա իւր հարցին բաւականացուցիչ մեկնութիւնն ու պատասխանը կ'ստանայ չետոյ կամ ժամանակով, երբ որ նա կը ծանօթանայ միւր գիտելիքներու հետ, երեխան կըբաւականանայ դորանով և վերստին ուրախութիւնով կըհետեւի սկսած խօսակցութեանը։ Բաց քան լիցի ստատել երեխային կամ արդելել նորան շեղուել ուսուցչի

ընդունած կարգից ու առաջարկել ուրիշ Հարցմունքներ. այդ կընշանակէ, արդեւ զնեւ երեխայի ազատ դատողութեանը, սահմանափակել նորա ինքնուրոյն մտաւոր գործողութիւնը: Նւ արդեօք արդեւելով երեխային յայտնել իւր միտքը, խիստ պէտք արդեւեցաւ և նորա մէջ այդ միտքը: Այ, երեխան շարունակում է մտաւորապէս հետեւել իւր մտքին և սորա հետեւանքն այն է, որ երեխան անուշադիր է մնում ուսուցչի խօսակցութեան շարունակութեանը և դառնում է երկչոտ ուրիշ անգամ իւր միտքը արտայայտնելու. կենդանի ու երեխային գրաւիչ զրոյցը փոխվում է դէպի վարդապետական բարոյ, որ չէ կարող հաճել լինել երեխային, պատճառ որ այդ դատախօսութեան ժամանակը երեխան դադարում է լինել գործող, այլ նորա դերը դառնում է կրտսերական. և այսպիսով դատախօսութիւնը կորցնում է իւր նշանակութիւնը և չէ հասնում իւր նպատակին: Այս ճշմարտութիւնը հաստատել կարող են անթիւ փորձեր ոչ միայն սկզբնական այլ և բարձրագոյն ուսումնարաններու մէջ, երբ որ ուսուցիչը մեկնողմանէ՝ ընկղմելով իւր դաս տուած առարկայի մէջ խիստ ճշտապահանք է լինում իւր ընդունած դատախօսութեան կարգը պահպանելումը, առանց ուշադրութիւն դարձնելու աշակերտներու վերայ: Արդեօք վերոյիշեալ դէպքերումը բնական չէ երեխայի արածը: Արդեօք և բնութեան մէջ այնպէս դատախարհութեամբ են առարկաները և երեւոյթները, ինչ կարգով ուսուցիչը դաս է տալիս. ի հարկէ, ոչ: Ուրեմն եթէ երեխայի պարզ ու վառ մտաւոր սթիւ իւր բնական ձգտումով ¹⁾ գտնում է այն կապը, այն կախումն ու յետեւողութիւնը, որոնք գտնում են բնու-

¹⁾ ИНСТИНКТЪ, Instinet.

թեան երեւոյթներու և առարկաներու մէջ, ուշադրութիւն է դարձցնում նոցա վերայ և յայտնում է նոցա իմանալու ցանկութիւնը, մեթո՞՞նա դորանով մեղանշում է: Եթէ ուսուցիչը նորանից աւելի գիտէ, թող նա հմուտ կերպով առաջնորդէ երեխային այդպիսի դէպքերումը:

Բնական գիտութիւնը ընդհանրապէս բովանդակում է իւր մէջ զանազան առանձին և յատուկ գիտութիւններ, այն է՝ Կենդանաբանութիւն ¹⁾, Տնկաբանութիւն ²⁾, Հանքաբանութիւն ³⁾, Բնաբանութիւն ⁴⁾, Բնալուծութիւն ⁵⁾, Աստղաբաշխութիւն ⁶⁾, Ներկաբանութիւն ⁷⁾, Օդերեւոյթաբանութիւն ⁸⁾ և սոցա զանազան Զիւղեր: Բայց պատճառ որ այն առարկաները և երեւոյթները, որոնցով այդ գիտութիւններից իւրաքանչիւրը պարագլում է, չեն ջոկնուած բնութեան մէջ իրարից, այլ խառն են միմեանց հետ, և ունին միմեանց հետ որոշ կապ, յարակցութիւն և մէկըմէկից կախումն, ուրեմն չէ կարելի որոշել, թէ այդ գիտութիւններից իսկապէս ո՞րը կամ ո՞րոնք պիտի դաս տուած երեխային, որը սկսում է բնութեան հետ ծանօթանալ, կամ թէ նոցանից ո՞րքը պիտի սկսած, հարկաւոր է երեխային ծանօթացնել ամենայն տեսակ առարկաներու և երեւոյթներու հետ, որոնք նիւթ են կազմում վերոյիշեալ ամենայն գիտութիւններու, բայց ի հարկէ ոչ ամեն առարկայի և ամեն երեւոյթի հետ: Վասնորոյ ընտրել սոցանից ամենագլխաւորը և ամենահարկաւորը և հաստատել սոցա դատախօս-

¹⁾ Зоология, Zoologie. ²⁾ Ботаника, Botanique. ³⁾ Минерология, Minerologie. ⁴⁾ Физика, Physique. ⁵⁾ Химия, Chimie. ⁶⁾ Астрономия, Astronomie. ⁷⁾ Геология, Géologie. ⁸⁾ Метеорология, Météorologie.

Թեան կարգը և ձևը—է ամենագլխաւոր խնդիրը ուսուցչի համար:

Այս հարցի մասին, որը ինքն ըստ ինքեան չէ հեշտ վճռելու, զանազան հայեցողացքներ կան: Կան, որոնք առաջարկում են և գործադրում են երեխային դեռ միայն բնութեան առարկաներու հետ ծանօթացնել, և չետոյ անցնել դէպի երեւոյթները, միևնեքը՝ սկսել բնութեան երեւոյթներէն, և երբորդը՝ միաժամանակ և առարկաներու և երեւոյթներու հետ ծանօթացնել երեխային: Միւս կողմից շատ մեծ դժուարութիւն է պատկերացնում բնական գիտութեան դաստուծութեան ձևը և չափը: Ա՛ր առնենք այն անթիւ գրուածքները, որոնք առաջարկուած և ընդունած են այս գիտութիւնը սկզբնական ուսումնարաններու մէջ դատ տալու, կը տեսնենք, որ շատ քիչերը նոցանից բաւականացուցիչ են այս խնդիրքի պահանջմանցը և համապատասխան են նպատակին, պատճառ որ նոցանից մէկ քանիսի մէջ երեխային պատմածը անհիմն ու անբաւականացուցիչ է նորա դատողութեան, գիտողութեան և հետաքրքրութեան համար, միևնեքը մէջ՝ պատմածներն ընդհակառակն շատ բարձր են երեխայի հասկացութեան ու նորա զարգացման աստիճանի համար և իւրեանց նիւթի չափազանցութիւնից և նոցա բացատրութեան ձևից դժուար ըմբռնելի ու անհասկանալի են երեխանց համար, իսկ նոցանից շատ քիչը կայ, որը բաւականացուցիչ լինի այս գիտութեան ուսուցանելի պահանջմունքներուն և նպատակին: Վասնորոյ մեծ զգուշութիւնով և ամենախստաբար պիտի արած նոցա մէջ ընտրողութիւն:

Հիմնուելով նախընթաց նկատողութիւններու վրայ, երեխայի պահանջները բաւականացրած համարել

կարելի է, եթէ բնական գիտութեան դաստուծութիւնը հաստատուած լինէր հետեւեալ հիմունքներու վերայ:

Առաջին. երեխայի հետ կարելի է խօսել ամեն բանի վերայ: Նորա պարզ ու չպղտորուած խելքն ու դատողութիւնը, նորա նուրը գիտողութիւնը, նորա վառ ու զուարթ հոգեկան ոյժերը հեշտութեամբ նորան ըմբռնել ու հասկանալ տալ կարող են նաև վերացեալ մտքեր, միայն հարկաւոր է գիտենալ, ինչպէս խօսել երեխայի հետ: Բացի այն, որ խօսելու ձևը պիտի լինի խօսակցութեան ձև, պարզ ու երեխային հասկանալի լեզուով զրոյց և ոչ լուի դասախօսութիւն, երեխային տուած հարցերը պիտի լինին պարզ, ճիշտ ու բացայայտ. միևնոյն տեսակի և պատասխաններ պէտք է պահանջած երեխայից:

Այդ խօսակցութեան մէջ ուսուցչի աշխատանքը նորա մէջ պիտի լինի, որ իմաստի պարզ ու դիւրին բացատրութիւններով խօսակցութիւնը հաճելի շինէ երեխայի համար, շարժէ նորա մէջ հետաքրքրութիւն ու մանաւանդ սրէ ու վարժեցնէ երեխայի գիտողութիւնը, որոյ համար աւելի երեխային մտածել ու խօսել պիտի տայ, քան թէ ինքը խօսէ. ուսուցիչը տալով խօսակցութեանը հարկաւոր ուղղութիւն և դարձնելով երեխայի ուշադրութիւնը որեւիցէ առարկայի կամ երեւոյթի վերայ ու տալով սոցա նախընթաց բացատրութիւնը, պէտք է թոյլ տայ երեխային ինքնուրոյն շարունակել գիտողութիւնները և մեկնութիւնը, իսկ ինքը միայն հսկէ, որ երեխայի արած գիտողութիւնները չմնան անկատար և որ նորա մտածողութիւնները լինին ուղիղ և չափողական:

Երկրորդ. Այդ խօսակցութեան նիւթ պիտի լինին՝ բնութեան առարկաները և երեւոյթները միաժամանակ, նորա համար որ բնութեան մէջ այդ երկուսը

մէկըմէկու հետ միշտ կից են և անշուշտ միաժամանակ դարձնում են իւրեանց վերայ երեխայի ուշադրութիւնը. միայն այդ նիւթերու մէջ պէտք է ընտրողութիւն անել և գլխաւորապէս խօսակցութեան նիւթ շինել այն առարկաները և երեւոյթները, որոնք երեխային մերձաւոր ու ծանօթ են, որոնք ձգում են իւրեանց վերայ երեխայի ուշադրութիւնը, որոնք ունին անդադար նորա վերայ ներդրծութիւն և որոնց ճանաչելը և մեկնելը մեծ բաւականութիւն կը տալ երեխային և օգտաւէտ կը լինի նորա համար: Մի և նոյն ժամանակ հարկաւոր է միշտ ի նկատի ունենալ առարկաներու և երեւոյթներու կազմուածքի, յատկութիւններու և օրէնքներու մեկնելը հասցնել մինչև այն չափը, որչափ երեխայի հասկացողութիւնի և զարգացման աստիճանը թոյլ են տալիս և որչափ նորա ուսած միւս գիտելիքները նպաստել կարող են նորա ուսած բնութեան խօսակցութեան նիւթը իւրեան սեպհականացնելու:

Երրորդ. Յարմարուելով վերոյիշեալներուն՝ բնական գիտութեան ուսումը պիտի դասակարգուի հետեւեալ կերպով.

Ա. Բնական գիտութեան ուսումը սկսել Տեսողական Պարապմունքով ¹⁾, որը պիտի տեւի ամբողջ առաջին տարին (ենթադրելով որ ուսման շրջանը տեւելու է 4 տարի): Այս պարապմունքը պիտի պարունակուի նորա մէջ, որ երեխաները գլխաւորապէս իրան բնութեան մէջ, և միայն կարեւոր գիտութեան մը պատկերադարձ աղիւսակներու վերայ, լաւ ծանօթանան գեւ իրանցը ծանօթ թէ ընտանեկան, թէ դրսի և չե-

¹⁾ Наглядное замяіе, Occupation intuitive, Auschaunungsunterricht.

տոյ, նաև իրանցը անձանօթ կենդանիներու, բոյսերու և հանքերու հետ, ճանաչեն լաւ կենդանիներու արտաքին կազմուածքը, նոցա թէ ամբողջ մարմնոյ, թէ մարմնոյ զանազան մասերի մէջ եղած զանազանութիւնները և այս մասերու հարկաւոր լինելը և գործածութիւնը, նոցա արտաքին յատկութիւնները, կենդանիներու գլխաւոր բնաւորութիւնները և պիտանաւորութիւնը: Միևնոյն էլ բոյսերուն և հանքերուն վերաբերեալ: Մէկ խօսքով, լաւ ծանօթանալ բնութեան երեք թաղաւորութիւններու հետ և լաւ ճանաչել դոցա զանազանութիւնները իրարից:

Միևնոյն ժամանակ տեսողական պարապմունքի նիւթ պիտի լինին և զանազան երեւոյթներ և գործողութիւններ, այն է, առարկայի զանազան շարժմունք: Երեխային շարժմանց հետ ծանօթացնելուց չետոյ, պէտք է հասկացողութիւն տալ նորան և այդ շարժմանց պատճառներու վերայ, այն է, տալ սկզբնական հասկացողութիւն զօրութեան վերայ, ի հարկէ առանց ընդարձակուելու զօրութիւններու յատկութիւններու և օրէնքներու վերայ, նորա համար որ ինչպէս այդ զօրութիւններու վերայ, նմանապէս միևնոյն առարկաներու ու երեւոյթներու վերայ աւելի ընդհարձակ բացատրութիւնները կ'ստանան երեխաները չետադաց դասարաններումը: Խօսելով զօրութիւններու վերայ երեխանցը կը հասկացուի և այն, որ շարժողութիւն առաջ բերող զօրութիւնը կարող է լինել մէկ քանի առարկաներու մէջ, ինչպէս կենդանիներու մէջ, և կամաւոր, իսկ միւս տեսակ առարկաներու շարժողութիւնը արտաքին զօրութիւններիցն է միայն առաջ գալի և ոչ իրան առարկայի կամքից. այսպիսով երեխան ճանաչում է կենդանիներու, բոյսերու և հանքերու մէջ եղած ամենազգեստոր զանազանութիւնները:

Տեսողական պարապմունքի շարունակութեան նիւթ կարող են լինել նմանապէս և զանազան թէ տնային, թէ դրսի և թէ շինական կեանքին պատկանեալ առարկաները և գործողութիւնները: Այդ պարապմունքի ժամանակ պէտք է մեկնած և հասկացրած երեխանցը, որ իրանց տեսածները չեն բնական առարկաներ, այլ նոցանից արհեստական միջոցներով շինած մարմիններ, և որը որից, և որ աչք գործողութիւններն են հետեւանք բնական երեւոյթներու և յառաջ եկած են բնական զօրութիւններու յարմարացնելուց զանազան արուեստներու ու առհասարակ մեր կեանքի համար հարկաւոր զանազան գործողութեանց վերայ: Այս վերջին պարապմունքը կարող է շարունակուել սեռման և երկրորդ տարուան միջոցումը:

Տեսողական պարապմունքը և ապագայումը բնութեան վերայ խօսակցութեան շարունակութիւնը, վարելով նոցա ինչպէս հարկն է, ունին այն օգտակար հետեւանքը, որ, բացի այն, որ երեխան կ'ստանայ մերձաւոր ծանօթութիւն ու հասկացողութիւն երեք տեսակ ստեղծուածներու ու մէկ քանի երեւոյթներու վերայ, և կը զարթնցուի, կը վարժուի ու կը կրթուի նորա զիտողութիւնը, ուշադրութիւնը, նորա զննողական ընդունակութիւնը, նորա դատողութիւնը, և միեւնոյն ժամանակ կը զօրանայ նորա կրօնական զգացմունքը:

Տեսողական պարապմունքի մասին հարկաւոր է անել հետեւեալ գիտումն: Երեխային տեսողական պարապմունքով զբաղեցնելու ժամանակը ուսուցչի գլխաւոր հոգսը նորանում պիտի լինի, որ երեխան թէ առարկաներու, թէ նորա յատկութիւններու, թէ զանազան շարժմունքներու վերայ ստանայ ուղիղ և ճիշտ ըմբռնումն և նա նոցա ճանաչէ իսկապէս: Սորա համար պէտք է աշխատած, որ երեխան ծանօթանայ

նախապէս իրան իսկական առարկայի հետ ու չետոյ նորա պարբերի հետ, նախ և առաջ առարկայի չատկութեանց ու մտքի որակնութեան հետ և չետոյ նոցա ~~անհանգիստ~~ հետ, և ոչ թէ ընդհակառակն, այսինքն, ոչ թէ դեռ ցոյց տուած երեխային պատկեր ու չետոյ նորան պատկերացնող առարկան, ոչ թէ դեռ անունը տուած որեւիցէ իմաստի, և չետոյ չաչտնել ու հասկացնել իմաստը, և այս այն պատճառով, որ առարկայի պատկերն առաջուց տեսնելով կամ իմաստի անունը առաջուց լսելով, երեխայն միայն երեւակայաբար է ստանում նոցա վերայ իմացողութիւնը և շատ անգամ սխալ հասկացողութիւն և ոչ թէ իսկապէս ճանաչում է նոցա և ուղիղ գաղափար կազմում նոցա վերայ: Բացի այդ՝ երբ որ երեխան սովորում է տեսնել պատկերն առաջ քան իսկական առարկան, կամ անունը լսել առանց նորա նշանակութիւնը առաջուց իմանալու, նա սովորում է կազմել ու իրան սեպհակաւորացնել գաղափարներ առանց մտածելու ու դատելու: Ի հարկէ վատթարագոյն է, եթէ երեխան բաւականանայ միայն պատկերներով և իմաստի միայն անուններով, չծանօթանալով բոլորովին իսկական առարկաներու հետ և անբացայայտ թողնելով կամ թերի ու սխալ հասկանալով այն իմաստները, որոնց անունները նա բերանացի սովորել է ու իւր մտքում պահում է: Այս անհրէքէն ճշմարտութեանը պիտի հետեւի երեխայն ամբողջ իւր ուսման ընթացքի մէջ և մարդը—իւր ամենայն հասակի գործունէութիւններու մէջ, որպէս զի չստանայ իրողութեան, գործողութեանց և իմաստներու վերայ, ծուռն ու սխալ գաղափարներ, այլ բնութեան ու կեանքի հետ զիտողաբար, զննաբար, իրապէս ու իսկապէս ծանօթանայ և ոչ միայն երեւակայաբար ու մտաւորապէս,

որոյ Հետեանքը լինելու է աչն, որ նորա կեանքի ամենայն Հասակի մէջ և սրեկցէ գործունէութեան մէջ նորա ամենայն գործքերը ու մտքերը կը լինին սխալ, անմիտ և վնասակար թէ իրան թէ ուրիշներուն, ինչպէս այդպիսի օրինակներ յաճախ են պատահում: Եւ եթէ մենք կեանքի մէջ յաճախակի տեսնում ենք Հասակ առած մարդիկ, որոնք, թէպէտ չեն զրկուած բնական ընդունակութիւններէ, բայց անդադար նոցա գործածը է ըստ մեծի մասին սխալ, թերի, նաեւ անմիտ, դորա պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ աչն, որ նոցա երեւոյց ստացել են վերոյիշեալ սխալ կրթութիւնն ու ուղղութիւնը: Սորա Համար տեսողական պարագմունքի ժամանակը ուսուցիչը պիտի աշխատէ ինչքան կարելի է իսկական առարկաներու ու նոցա իսկական յատկութիւններու Հետ ծանօթացնել երեխային և միայն կարեւոր դիպումները գործածել պատկերներ ու աղիւսակներ. մեկնելով երեխային զանազան գործ ծողութիւններ ու երեւոյթներ, պէտքէ նա սոցա զանազան փորձերով ու օրինակներով ցոյց տալ, որքան թիւնը Հանդացնելու Համար, թող ուսուցիչը, եթէ չունի ուրիշ միջոց, գործ անէ թէ երեխայի թէ իրան սեպՀական ոչ ժը և տեսանելի ու շօշափելի կերպով ցոյց տալ նորան սորանից յառաջ եկած Հետեանքները:

Բ. Յետագայ երկու տարուան միջոցումը բնութեան վերայ խօսակցութիւններու նիւթը, մի և նոյն Հիմունքներու վերայ դաս տուած, պիտի լինին.

Ձերթումներն երկուսն էլ՝ ջրմութեան աղբիւրները, արեգակը, երկրի ջրմութիւնը և զանազան կերպով առաջ եկած Հուրը և բոցը. ջրմութեան գլխաւոր յատկութիւնները, նորա Հարկաւորութիւնը և նորանից յառաջ եկած օգուտը:

Առաջինն զրոյթումն երկուսն էլ՝ ծանր և թեթեւ մար-

միւններ, մարմիններու վայր ընկնելը և բարձրանալը օդի մէջ. մարմիններու պինդ, Հեղուկ և օդաձև լինելու պատճառը, երկրագունդի շարժումը արեգակի շուրջ:

Միւսը էլ՝ նորա կազմուածքը, յատկութիւնները ու Հարկաւորութիւնը. նորա մէջ եղած երեւոյթները՝ անձրեւ, ձիւն, կարկուտ, ամպ և հողմը:

Ձյնի և լուսնի գլխաւոր երեւոյթները և օրէնքները՝ ծիածան, արշալոյս:

Հերթէ ծորիւններու գլխաւոր յատկութիւնները, ջրի սառելը և գոլորշիանալը, Արևմտեան օրէնքը, շատրուան (ջրբուղի), և կորխողովակ (սիֆօն), աղբիւրներու և գետերու կազմուելը. որոտման ու Հեռագրի (տէլեգրաֆի) մեկնութեան Համար էլէկտրականութիւն և մագնիսականութիւն Հարկաւոր սկզբնական գիտելիք:

Մէքենութիւնն ամենագլխաւոր սկզբունքները, որով երեխան կարողանայ Հասկանալ Դախարակի ¹⁾, Լծակի ²⁾, գլանի ³⁾ գործածելու օգուտը:

Բնութեան միւսը էլ՝ Հիմունքը՝ տարրեր, աչրուելու ու փտելու մեկնութիւնը:

Միևնոյն ժամանակ Հարկաւոր է, որ երեխան լաւ ծանօթանայ և գործածել գիտենայ ամենագործածական գործիքները, որպիսի են՝ ջրմաշակ, անօսրաշակ ⁴⁾ սիֆօն, կշեռք, Հարթաշակ ⁵⁾, կողմնացոյց ⁶⁾, ակնոց, դիտակ, աչրոյ ապակի, և այլն:

Մարդու մարմնու ներքին կազմուածքը, աչն է նորա գլխաւոր մասերը՝ Հինգ զգայութիւնք. ջրգերու և ուղեղի պաշտօնատարութիւնը, շնչառութեան և կերակրուել-

¹⁾ Блокъ, Poulie. ²⁾ Рычагъ, Levier. ³⁾ Воротъ, Treuil, ⁴⁾ Ареометръ, aréometre, ⁵⁾ Нивелиръ, nivéau. ⁶⁾ Компасъ, Compas.

լու գլխաւոր գործողութիւնները. ոսկորներու, ճարպի, մորթու և մկանունքներու պաշտօնատարութիւնը:

Բոյսերու աճիլը՝ սերմը, ծաղիկը և պտուղը: Բոյսերու չորանալը ու փտիլը:

Հողերու գլխաւոր յատկութիւնները, նոցա հալուելն ու պնդանալը, բերեղացումն ¹⁾, մէկ քանի գլխաւոր ու պէտքական հանքերու, հողերու ու աղերու գործածելը:

Յայտնի բան է որ այս գիտելիքներու աւելի կամ պակաս ընդարձակելը կախուած կը լինի ուսումնարաններից, այն է, գիւղական ուսումնարաններումը հարկաւոր կը լինի բոյսերու և կենդանիներու ուսումը աւելի ընդարձակել քան թէ քաղաքային ուսումնարաններում մէջ, նմանապէս մէկ քանի տարբերութիւններ կարող են լինել տղայոց ու օրիորդներու ուսումնարաններում մէջ:

Բացի այդ, վերոյիշեալ գիտելիքը երեխանցը մատակարարելուց պէտք է ՚ի նկատի ունենալ գլխաւորապէս և այն, որ ծանօթացնելով երեխային բնութեան երեւոյթներու և առարկաներու հետ, պէտք է ցոյց տալ և նոցա պիտանաւորութիւնը մարդու համար և առհասարակ նոցա յարաբերութիւնը դէպի մարդը և մեր կեանքի պայմանները և մանաւանդ դէպի մարդոց առողջութիւնը, այն է, ծանօթացնել երեխային և Առողջապահութեան գլխաւոր հիմունքներու հետ: Այսպիսով Առողջապահութիւնը, որը անհրաժեշտ հարկաւոր է ամենի համար գիտենալ, չէ դաս տրոււմ ծխական ուսումնարաններում մէջ իբրեւ առանձին ուսանելի առարկայ, այլ դառնում է նմանապէս բնութեան վերայ խօսակցութեան նիւթ:

¹⁾ Кристаллизация, Kristallisation.

Ցանկանալի կը լինէր պահպանել դասատուութեան մէջ վերոյիշեալ խօսակցութեան նիւթերու կարգը, բայց փոյթ չկայ, եթէ այդ կարգը որեւիցէ հանգամանքներից և պատճառներից և փոփոխուի և ուսանելի նիւթերը այլապէս կարգադրուին, միայն հարկաւոր է, որ խօսակցութեան նիւթերու դիւրին ընթանման համար պահպանուի որեւիցէ ընդունուած կարգի մէջ նշանակեալ աստիճանաւորութիւն և յաջորդականութիւն:

Գ. Եւ որ այսպիսով երեք տարուան միջոցումը երեխաները լաւ ծանօթացան ընդհանրապէս բնութեան ամենաբնական առարկաներու և երեւոյթներու հետ, վերջին, այն է չորրորդ, տարուան ընթացքումը բնական գիտութեան դասատուութիւնը զանազան տեսակ ծխական ուսումնարաններում մէջ պիտի ստանայ նոցանից իւրաքանչիւրին յատկացեալ բնավորութիւն, այնպէս որ

Տղայոց փխրոյն ուսումնարաններումը բնութեան վերայ խօսակցութեան նիւթ պիտի լինին. բնական բերքեր և առհասարակ այն առարկաները և գործողութիւնները, որոնք պատկանում են շինական տնտեսութեան և շինական պարապմունքներուն, ինչպէս հողի դանազան տեսակները, հողի պտղաբերութիւնը, երկիր պարտագները, հողագործութեան դանազան գործիքները, օդերեւութաբանական երեւոյթները և օրէնքները. յետոյ, նախելով թէ տեղական բնակիչները առաւել փայտեղէնով են պարապում՝ դանազան ծառերու և փայտերու յատկութիւնները և նոցա գործածելը, իսկ եթէ քար կտրելով կամ հանքային գործով են պարապում՝ քարերու յատկութիւնները և նոցա գործածելը. եթէ աչգեպանութիւնով են պարապում՝ խոտի և պտղաւէտ ծառերու պահպանութեան և բարելաւացնելու պայմանները և այլն և այլն. բացի այդ՝ զանազան ցանքե-

ըուն ու ծառերուն վնաս տուող միջատներ, նմանապէս ածուխ աչրելու կամ ձէթ շինելու հնարքները, և դորա նման ուրիշ գործողութիւններ ու բացատրութիւններ ու մեկնութիւններ:

Քաղաքային ուսումնարանի մէջ խօսակցութեան նիւթ պիտի լինին գլխաւորապէս այն առարկաները և գործողութիւնները, որոնք վերաբերում են զանազան արուեստներուն, տնային տնտեսութեան և առհասարակ քաղաքային կեանքին և պարապմունքին և վաճառականութեանը: Ի հարկէ, այս առարկաները ըստ մեծի մասին չեն բնական բերքեր, այլ նոցանից ձեռով կամ զանազան գործարաններու մէջ պատրաստուած նիւթեր: Սորա են՝ աղիւս (ագուս), կիր, կիճ (գաջ), աւաղ, կաւ, տախտակ տկճոր ու տիկ, կուժ, ամաններ, մորթի, կաշի, ասուի (մահուդ), մետաքս, կտաւ, բուրթ, մոմ, հաց, գինի, պանիր, սապոն, ձէթ, նաւթ, ծծմբաւառ, մատիտ, թուղթ, ասպիկ, երկաթեղէն, սղինձեղէն, երծաթեղէն, անագ (կէկը) և այլն, և այլն. սոցա չատկութիւնները, գործածութիւնները և կարճառօտ նոցա պատրաստելու եղանակը: Այս գիտելիքները շատ կընպաստեն երեխանց սոցա գործնական պարապմունքի մէջ, որոց մասին կըխօսուի չետոյ:

Իսկ օրիորդներու ուսումնարաններու մէջ բնական գիտութեան դասաւանդութիւնը պիտի ստանայ առանձին և օրիորդներու ապագայ նշանակութեանը և պարտաւորութիւններուն չատկացեալ ուղղութիւն, այն է՝ խօսակցութեան առարկայ պիտի դառնան.

Ա. Առողջապահութեան ուսումնական աւելի ընդարձակ:

Բ. Մանկապահութեան ¹⁾ և սնունդի մանկապահութեան. այն է՝ ինչպէս նորածին երեխայի հետ վարուել, նորան պահ-

պանել ու սնուցանել: Սորա համար պէտքէ աւելի ընդարձակել մարդոց կաղմուածքի ուսումը, համեմատելով հասակ առած մարդու կաղմուածքը նորածնին կաղմուածքի հետ. մանկան պահանջները, նորան կերակրելը, պարուրելը, օրօրոցի մէջ պահելը և այն ամեն պաշտօններու գիտեմալը, որոնցից կախուած է երեխայի առողջութեամբ մեծանալը:

Գ. Տնային դաստիարակութիւն, որ է, գիտեմալ թէ տնտեսութեան մէջ գործածելի ամենայն առարկաները, այն է՝ կարասիքը, ուտելիքը և խմելիքը (բմպելիքը), հագուստը, վառելիքը և այլն, ինչպէս պահպանել. նոցա լաւն ու վատը ինչպէս ճանաչել ու զանաղանել, ինչպէս գործածել նոցա և ինչպէս փչացածը լաւացնել. իմանալ թէ մարդը իւր ամենահարկաւոց ուտելիքի ու բմպելիքի մէջ և իւր տարեկան ծախսի մէջ նոցանից օրին և որքանին պէտք ունի, որիցը ապագայ տնտեսիկները կ'ստանայ ուղիղ հասկացողութիւն չափաւորութեան և շուտցութեան վերայ. սորա հետ ծանօթացնել օրիորդին կարճառօտ տնտեսական հաշուադասութեան հետ: Տնային տնտեսութեան դասաւանդութիւնը չէ կարող ներկայացնել ոչինչ դժուարութիւն, երբոր օրիորդները առաջին երեք տարուան միջոցումը կը ծանօթանան բնութեան գլխաւոր առարկաներու չատկութիւններու և երեւոյթներու հետ. տնտեսութեան գիտութիւնը կը լինի միայն տնտեսական առարկաներու և գործողութիւններու վերայ բնութեան օրէնքներու վերաբերելը և նոցա յորձարակները:

Յայտնի է, որ մանկապահութեան ու տնային տնտեսութեան հետ օրիորդը գործնականապէս ¹⁾ ծանօթանում է իւր տանը, իւր մօր ու մեծահասակներին ձեռի տակը. բացց ուսումնարանումը՝ ուսանելով այդ

¹⁾ Уходъ за дѣтми, Kinderpflege.

¹⁾ Практически, pratiquement.

գիտելիքները, նա լսում է ու իմանում է գիտութեան վճիռը, որը մէկ քանի գէպքերումը մեկնում է ու բացալատում է աւանդութեամբ գործածած շատ սովորութիւններ, որոնց նշանակութիւնը օրիորդին ոչ ոք մեկնել չէ կարողացել. իսկ միւս գէպքերումը հերքում է այս ու այն գործողութիւնները, որոնք հնացած են, և նոցա տեղ առաջարկում է նոր ու աւելի գերազանց ու օգտաւէտ միջոցներ, ու այսպիսով լրացնում է օրիորդի չիմացածը ու չտեսածը իւր ընտանիքի մէջ: Այսպիսով օրիորդը մտցնում է իւր ընտանիքի մէջ նոր, օգտաւէտ մտքեր ու գիտութեան խօսքն ու վճիռը և սորանով ուսումնարանը դառնում է միջնորդ գիտութեան և ժողովրդական կեանքի մէջ:

Ահա այսպէս դաս տուած բնական գիտութիւնը իսկապէս կը զարգացնէ և կը կրթէ երեխային, կրթելով ու սրելով նորա մէջ գիտողական ու զննողական ընդունակութիւնները, նորա դատողութիւնը. երեխան ծանօթանալով մերձաւորապէս իրան շրջապատող առարկաներու ու երեւոյթներու հետ, էլ առաջուան պէս նոցա վերայ կոչրաբար չի նայի, այլ ընդհակառակն, նոցա կը տեսնէ պարզապէս, բաց աչքով ու մտածելով, և աւելի ու աւելի կը հաւաստիանայ աշխարհի Ստեղծողի ամենադերսագոյն իմաստութեան, կարողութեան և զօրեղութեան մէջ, և երեխայի մէջ աւելի ու աւելի կը զօրանան նորա կրօնական ու վերին գգացմունքները: Նրեխան, սովորելով կարդալ այն ամենամեծ գերքը, որ է ինքը բնութիւնը, էլ ոչ մէկ ժամանակ և ոչ մէկ տեղ չէ կարող մնալ անգործ ու պարապ, նորա համար էլ չէ լինելու տաղտկութիւն, պատճառ որ այն գրքի թերթերը ամեն տեղ և նորա ամեն քայլի վերայ նորա առջևը բաց են:

Բնական գիտութեան ուսման գլխաւոր օգուտ-

ներեց մէկը և նորանումն է, որ երբ երեխան ու մարդ կարողանում է մեկնել զանազան երեւոյթներու պատճառները, նորա մէջ ոչնչանում է սնապաշտութիւնը, այն ցաւալի աղտը, որը հասարակ ու անկիրթ ժողովուրդի մէջ սաստկացած է, և որի չար ու վնասակար հետեանքները անչափ են և որը յառաջ է գալիս միայն բնական երեւոյթներու իսկական պատճառներու չգիտենալուց:

Բացի այս, ծանօթանալով բնական գլխաւոր օրէնքներու հիմունքներու հետ, երեխան կարող է նոցա օգտաբար գործ դնել իւր առողջութեան համար և պէտք ածել ապագայումը թէ արհեստներու, թէ շինական պարապմանց մէջ:

Վերջապէս օրիորդներու համար բնական գիտութեան ուսման մեծ օգուտը, բացի վերոյիշածները, և նորա մէջն է, որ նա միջոց է տալիս նոցա պատրաստուելու իւրեանց ապագայ մեծ գերերու համար՝ իբրեւ մօր, իբրեւ տանտիկնոջ:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ:

Աշխարհագրութեան դաստոտութեան նպատակը է տալ երեխային ընդհանուր աշխարհագրական ծանօթութիւն և աւելի ընդարձակ տեղեկութիւններ տեղական և անդրկովկասեան երկիրներու և Հայաստանի վերայ, նմանապէս և Ռուսաստանի վերայ, ինչպէս և օրէնքը պահանջում է, իսկ ծաճկա—Հայաստանի ուսումնարաններումը՝ աւելի ընդարձակաբար ծաճկաստանի աշխարհագրութիւնը:

Նրեխային մատակարարած աշխարհագրական տեղեկութիւնները պիտի լինին այնպիսիները, որոնք բացի ընդհանուր կրթողական նշանակութիւն ունենալը, կարենան և օգտակար լինել երեխային ապագայումը՝ իբրեւ

արհեստաւորին, վաճառականին, կամ իւրեւ գիւղացուն, և վերջապէս իւրեւ հասարակութեան անդամին: Ի հարկէ, սր երեսացին մեր աշխարհի հետ ծանօթացնելը պիտի սկսուի նորա բնակուած տեղիցը: Աշխարհագրական դաստառութեան նիւթ պիտի լինին՝ ծանօթացնել աշակերտին իւր երկրի հետ, նորա զանազան տեղերու հեռաւորութիւններու և նորա մէջ եղած ճանապարհներու հետ. ցոյց տալ թէ այդ տեղերումը ի՞նչ բերքեր կան, ի՞նչ է մշակուած կամ գործվում և ժողովուրդը գլխաւորապէս ի՞նչով է պարսպում: Հասկացնել երեսացին, թէ ի՞նչ զանազանութիւն կայ գիւղի, քաղաքի ու մայրաքաղաքի մէջ: Մեկնել երեսացին մեր երկրի ու ամեն մէկ տեղի չորս կողմերը, այն է՝ արեւելք, արեւմտ, հիւսիս ու հարաւ: Տալ երեսացիին հասկացողութիւն զանազան տեսակ հաղորդակցութեան միջոցներու վերայ, այն է, ցամաքային, ջրային ու օդային հաղորդակցութեանց վերայ (ձի, սալ, փոստա, շոգեկառք, նաւ, շոգեմալ, օդավարիկ, հեռագիր, տէլեֆօն և այլն), նմանապէս զանազան տեսակ ցամաքային ու ջրային տեղերու ու նոցա մասերու վերայ (բլուր, լեռն, ձոր, դաշտ, աղբիւր, գետ, ծով, ծովածոց, ովկիանոս, և այլն):

Մեր երկիրը հինգ մաս բաժանել:

Ծանօթացնել երեսացիին կարճառօտաբար մեր գրացի աղբերու հետ, նմանապէս մեր երկրի հինգ մասի միւս գլխաւոր աղբերու ու նոցա մեծ քաղաքներու հետ: Պատմելով երեսացին այդ աղբերու վերայ՝ պէտք է ցոյց տալ թէ ինչպէս և ի՞նչումը նոքա մեղինից յառաջողէմ կամ չետողէմ են, ի՞նչ են նոքա մշակում կամ գործում. համեմատել մեր գիւղերը նոցա գիւղերու հետ, մեր քաղաքները նոցա քաղաքներու հետ. ի՞նչ ենք մենք նոցանից ստանում, և

ի՞նչ օգուտ ունենք մենք նոցանից թէ նիւթական թէ գիտութեան կողմանէ, ի՞նչպէս է նոցա կենցաղավարութիւնը և ի՞նչով են նոքա մեղինից գերադանց: Մեր տեղական ամենայն տեսակ բերքերից մըր դարձ ենք ածում մենք մեզ համար և մըր ուղարկում ենք ծախելու ուրիշ աշխարհներ և այլն: Տալ երեսացիին համառօտ տեղեկութիւն Ռուսաստանի տէրութեան կառավարութեան կաղմակերպութեան վերայ, մանաւանդ ծանօթացնել գիւղաբնակներուն ու քաղաքաբնակներուն տէրութիւնից տուած ինքնավարութեան հիմունքներու հետ, միեւնոյն էլ Տաճկաստանի մասին Տաճկա-Հայաստանի ուսումնարաններու մէջ:

Տալ երեսացիին կարճառօտ տեղեկութիւն Հայաստանի հին աշխարհագրութեան վերայ, ցոյց տալով և մինչև աչժմ պահպանուած մեր երեւելի հին աւերակներու տեղերը:

Ծանօթացնել աշակերտին քարտէսներ պատրաստելու հիմունքներու և նոցա գործածելու հետ: Կարելի է գիւրին կերպով տալ աշակերտին հասկացողութիւն և մեր երկրագնդի ձևի ու շարժմունքներու վերայ և մէկ քանի այլ տեղեկութիւններ բնական և մատեմատիկական աշխարհագրութեան վերայ:

Բոլորովին աւելորդ է յոգնեցնել ու ճանձրացնել երեսացի միտքը ու չիղորութիւնը զանազան օտար աղբերու ու աշխարհներու մանրամասնութիւնները ուսուցանելով: Ինչքան է պէտք երեսացին գիտենալ, թէ այս ու այն երկրումը կան այսքան քաղաքներ, գետեր, լեռներ, լիճեր կամ այս ու այն ծովերու մէջ այս ու այն կղզիներ, նեղուցներ և այլն, բաւական է երեսացի համար ստանալ ուղիղ և ճիշտ բնագիտութիւն հասկացողութիւն մեր երկրագնդի մակերևոյթի վերայ, գիտենալ զանազան գլխաւոր աղբերու ու երկրներու,

ու նոցա գլխաւոր քաղաքներու որտեղ գտնուելը, և նոցա վերջիշեալ որպիսութիւնները ճանաչելը. և սորա հետ երբ որ երեխան լաւ կը վարժուի քարտէսներու հետ վարուելումը ու նոցա գործածելումը, այն ժամանակ նա ստացած կը լինի ամենայն հարկաւոր միջոցները որ, ապագայումը, հարկաւոր դիպումածի մէջ և ուղած ժամանակը հեշտութեամբ ինքը կարողանայ ծանօթանալ և ամենայն մանրամասնութիւններու հետ:

Աշխարհագրական դասատուութեան ժամանակը պէտք է անշուշտ ամենայն բացատրութիւններն անել քարտէսի վերայ, որպէս զի աշակերտը տեսական կերպով ստանայ ամենայն աշխարհագրական տեղեկութիւնները և միշտ իւր աչքի առաջ ունենալով ու սովորեցնելու երկիրները, ճիշտ գաղափար ու հասկացողութիւն ունենայ այն երկիրներու դրութեանց վերայ և եթէ մէկ անգամ նա սխալ ու ծուռը գաղափար է կազմել նորա վերայ, կարողանայ նորան իսկոյն ուղղել:

Աշխարհագրութեան դասատուութիւնը սկսել ուսման երկրորդ տարւումն շրջանումը:

ԱԶԳԱՅԻՆ (Հայոց) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ:

Եթէ բարոյականութեան պայմաններէ մէկն է սիրել ու պատուել իւր ծնողքը, չէ արդեօք պահանջում վերստին բարոյականութիւնը, որ մարդը այդ ազնիւ ու բնական զգացմունքը տարած է աւելի հեռու, այն է՝ իւր ծնողաց ծնողքերու ու նոցա և հեռու ազգականներու վրայ, ու ընդարձակէ իւր այն լայնատարած բնական բնական վերայ, որը կազմում է իւր ամբողջ ազգը, որին նա պատկանում է իւր արիւնով, իւր կեցութիւնով ու կենցաղավարութիւնով, իւր նորա հետ

միատեսակ մտածելով, լեզուով ու նաև հաւատով: Չունենալ այդ ազնիւ ու վերին սէրը, այդ սուրբ ու բնական զգացմունքը, նշանակում է զուրկ լինել ամենազլխաւոր բարոյական յատկութիւնից և անընդունակ լինել որեւիցէ ազնիւ գործունէութեան համար: Նա, որ չէ սիրում ու չէ յարգում իւրը, իրան համար ամենաթանկագինը՝ իւր արիւնակցին, իւր ազգը, չէ կարող սիրել ու համակրել և օտարին, ուրեմն նորա մէջ չէ կարող լինել և մարդասիրական հոգի. վասնորոյ այնպիսի մարդը չէ կարող ներմուծել նաև օտարի մէջ յարգանք և համակրութիւն գէպի իւր անձը. դէպի այնպիսի մարդը անկարելի է ունենալ հաւատարմութիւն, վասնորոյ նա չէ կարող դառնալ արժանաւոր անդամ որեւիցէ հասարակութեան, հաւատարիմ հպատակ որեւիցէ տէրութեան: Ուրեմն որպէս զի այդ պակասութիւնները չարմատանան մարդու մէջ, այլ ընդհակառակն, նորա մէջ բարոյական սկզբունքներ հաստատունն, և նա դառնայ իսկապէս ազնիւ, բարոյական և օգտակար անդամ հասարակութեան, նորա մէջ պիտի հէնց երկխաղութիւնից դարձնցուի և զարգացուի սէր գէպի մերձաւորը, գէպի իւր ազգակիցները, գէպի իւր ամբողջ ազգը:

Բարոյականութեան այս յատկութիւնը մարդու մէջ հաստատուելու միջոցներէն է և ազգային պատմութեան դասատուութիւնը, որով մարդ պիտի ճանաչէ, թէ ո՞վ են եղել նորա նախնիքը, ինչ արժանաւորութիւններ, նաև ինչ պակասութիւններ ունեցել են նոքա, ինչ լաւ ու մեծ գործեր են արել նոքա և ինչպէս՝ ժամանակի ու հանգամանքներու փոփոխ պահանջներէն՝ ազգը, անցնելով մէկ դրութիւնից գէպ 'ի միւսը, վերջապէս հասել է ներկայ դրութեանը:

Որքան էլ որ ամէն մարդուն հարկաւոր է ուսումն

Դասերել աչս ձեռով իւր աղգի պատմութիւնը, այնքան էլ զգուար ու մինչև անգամ անկարելի է աղգի պատմութեան ուսումը այս ձեռով, իբրև գիտութիւն, շինել առարկայ դասատուութեան ծխական ուսումնարաններու մէջ, որտեղ աշակերտում են երեխայք 8 կամ 10 տարեկան Հասակից մինչև 12 կամ 14 տարեկան Հասակը: Վասնորոյ աղգացին պատմութեան դասատուութիւնը ծխական ուսումնարաններու մէջ պիտի պարունակէ իւր մէջ միայն մեր աղգի պատմութեան գլխաւոր դարերու նշանաւոր անցքերը և մեր մէկ քանի անուանի ու երևելի խաղաւորներու, իշխաններու և նոցա մեծ աղգին արած օգտակէտ գործերու ու քաջագործութիւններու առանձին առանձին պատմութիւններ: Սրբորգաց ուսումնարաններումը առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել և մեր երևելի իշխանահայերու և իշխանադուստրներու ու սրբահայերու պատմութիւններու վերայ:

Աղգացին պատմութիւնը պիտի դաս տվուայ ուսման վերջին, այն է՝ չորրորդ տարուան ընթացքում:

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ:

Մայրենի լեզուն, իբրև ամենագիւրին միջոց մարդու Համար արտայայտելու թէ խօսքով թէ գրով իւր միտքը, նմանապէս իմանալու ուրիշի ասածը ու գրածը, պիտի երեխայի Համար լինի ուսման ամենագլխաւոր առարկաներից մէկը: Սորա Համար Հայոց լեզուի դասատուութիւնը պիտի բաղկանայ նորա մէջ, որ աշակերտը վարժ ու անտխալ կարգալ ու գրել սովորելուց չետոյ, կարենայ գիւրութեամբ մեկնել ու չետ պատմել կարդացածը, որպէս զի երեխան Հասկանայ կարդացածը, և վարժուի ուղիղ, շարունակաբար, Հանգիստ ու մտածելով խօսելու մէջ: Պէտք է երեխային վար-

ժեցնել իւրեան գիւրին Հասկանալի մաքերը ու տեսած կամ լսած առարկաները, երեւոյթները ու գիպուածքները բերան և գրաւոր նկարագրելու: Երեխային կարգալու իրան գիւրին Հասկանալի գրքեր և պահանջել նորանից որ նա կարդացածի պարունակութիւնը, գոնեայ կարճառօտաբար չետ պատմէ:

Բացի այս վարժեցնել երեխային դանաղան տեսակ նամակագրութեան մէջ, նմանապէս դանաղան ձեռագիրներ կարգալու մէջ: Երեխայի չիշողութիւնը վարժելու Համար Հարկաւոր է տալ նորան բերանացի սովորել գիւրին երգեր ու ոտանաւորներ:

Լեզուի դաստիարակութեան ժամանակը ուսուցիչը պիտի առանձին Հոգատարութիւն քաշէ, որ երեխան մեծ ուշադրութիւն դարձնէ ամէն իւր լսածի ու կարդացածի վերայ, որպէս զի նա սովորի ճշտաբար իմանալու և Հասկանալու, ինչ որ խօսողը կամ գրողը խաղապէս չաչանել է ուղում: Իսկ վերջին դասատան մէջ ծանօթացնել երեխանցը քերականական գլխաւոր Հիմունքներու և կանոններու Հետ, այն է, գլխաւորապէս Հոլովներու և խոնարհմունքներու Հետ:

ՌՈՒՍՈՑ ԼԵՁՈՒ:

Ռուսաց լեզուի՝ իբրև տէրունական լեզուի՝ գիտենալը Հարկաւոր է ամէն Հայ ուսաբնակ երեխայի Համար: Իսկ տաճկաբնակ Հայոց Համար դորա տեղ պիտի դաս տվուայ տաճկաց լեզու, նմանապէս իբրև տէրունական լեզու: Պէտք է աշխատել որ երեխան ինչքան կարելի է լաւ սովորէ ուսուց լեզուն:

Այս լեզուի ուսումը պիտի բովանդակէ իւր մէջ՝ ուղիղ կարգալ ու գրել գիտենալը, երեխային

վարժեցնելը ռուսերէն խօսելու, իւր միտքը գրաւորապէս արտայայտելու ու թեթեւ գրութեան հասկանալու մէջ, նմանապէս նամակագրութեան մէջ:

ՎԱՅՆԼՁԱԳՐՈՒԹԻՒՆ:

Ինչպէս խօսելուց հարկաւոր է որ մարդը իւր միտքը յայտնէ՝ պարզ ու բացառապէս արտատանելով խօսքերը, նոյնպէս էլ գրաւորապէս յայտնած միտքը պէտք է պարզ ու զիւրին կարդալի ձևով գրութեան լինի, և այն գրածը պիտի միևնոյն ժամանակ սիրուն ու վայելուչ լինի: Սորա համար երեխայք պիտի վարժուին հայերէն և ռուսերէն վաղեւադրութեան մէջ, որը, եթէ լինին ազատ ժամեր, կը դառնայ առանձին դասերու առարկայ, իսկ եթէ ոչ, կը լինի պարապմունք հայոց և ռուսաց լեզուներու դաստառութեան ժամանակը:

Ն Ր Գ:

Եթէ խօսելը մեր մտքի արտայայտելու միջոց է, երգով մենք արտայայտում ենք մեր զգացմունքը: Ինչպէս խօսքերով մեր միտքը արտայայտելուց միևնոյն ժամանակ մենք նորան ուրիշին իմաց ենք անում, նմանապէս երգերով հաղորդում ենք մեր զգացմունքը և ուրիշին: Այն ինչ խօսքերով մենք կարող ենք մեր միտքը յայտնել ու իմացանել միայն նոցա, որոնք հասկանում են մեր լեզուն, երգով մենք մեր զգացմունքը կարող ենք հաղորդել ամենքին, նորա համար որ երգը խօսքերու պէս շինծու լեզու է, այլ ընդհանրապէս ու ամենին հասկանալի լեզու է, և այսպիսով եթէ խօսելու լեզուն, կարելի է ասել, բաժանում է

ազգեր մէկմէկից, երգի լեզուն միացնում է նոցա մէկ մէկու հետ, և սորանով երգեցողութիւնը ստանում է գերազանցութիւն խօսելու վերայ:

Այս յառաջաբանից պարզ երևում է, որ երգեցողութիւնը հարկաւոր է մարդու համար, ինչպէս և խօսելը, և եթէ կան մարդիկ, որոնք չեն երգում, նոքա միևնոյն համընդհանր իրանց զգացմունքը յայտնելու կողմանէ, ինչպէս սովորական համընդհանր չեն կարող յայտնել խօսքերով իրենանց միտքը: Այս երգեցողութեան համը լինելը զանազան պատճառներից է յառաջ գալիս: Կան մարդիկ, որոնք չունին երգելու ձայն, և թէպէտ նոցա մէջ զգացմունքի սաստկանալուց ոչ ոք չի գիտէր, որ հանգում կողորդից ձայներ, բայց պատճառ որ այդ ձայները չաճելի չեն նոցա սեպհական լսելիքին, որը միևնոյն կողմից արտայայտած զգացմունքի ընդունողն է, այդպիսի երգը նոցա չէ բաւականացնում, վասնորոյ նոքա գերազանց են համարում լսել և լսել ուրիշ երգը, կամ արտայայտել իրենանց զգացմունքը որևիցէ երաժշտական գործիքներու ձայնով (սաղ, թութակ, ջութակ, դաշնամուր և այլն) և դորանով բաւականութիւն տալ իրենանց ներքին հոգեւոր չուզմունքին:

Միևնոյնը մինչև այն աստիճանի լցւած են զանազան սաստիկ ցաւերից կամ նեղութիւնից պատճառած զգացմունքներով, որ այս վերջինները, խեղտում են, կարելի է ասել, ձայնը և այն գործիքները, որոնց միջոցով պիտի իրանք արտայայտուին, և այդպիսի մարդիկ անգոր են երգելու:

Կան և այսպիսիները որոնք հէնց սկզբից չեն սովորել երգել, թէպէտ նոցա ձայնը երաժշտական էր, և թողել են առանց կրթութեան իրենանց ձայնը, որը ապագայումը անընդունակ է դառնալ երգելու համար:

Կան և այնպիսիները, որոնք մտաւոր աշխատանքով այնքան զբաղուած են, որ նոցա զգացմունքը երկրորդական դէր է խաղում նոցա մէջ, և բաց'ի այն, սովոր չլինելով երգելուն, իրանցը բաւականացնում են լսելով ուրիշ երգը և երաժշտութիւն:

Վերջապէս կան և այնպիսիները, որոնց միտքը անդադար պղտորուած է, ընաւորութիւնը անչափ փշտացած, և ոիրտը լիքը չարութիւնով, ուրեմն նոցա զգացմունքները սառած են, ըստ որում և չկայ նոցա համար երգ:

Այժմ հեշտ է հասկանալի, թէ լինելու դժուար պիտի լինի այնպիսի մարդկանց համար, որոնք ունին և զգացմունք զրկուած են այդ զգացմունքը չափանելու կարողութիւնից: Ահա ինչու համար և երգեցողութիւնը կրթողական առարկաներից մէկը պիտի լինի: Երեխային երգել տալով, կրթվում է նորա ձայնը—այն գլխաւոր գործիքը, որով նա արտայայտել կարող է իւր զգացմունքը, և արտայայտելով իւր զգացմունքը, լինին նոքա տխուր թէ ուրախ, երեխան թեթեւանում է, հանգստանում է և զուարթանում է, և երբ որ երեխայի սիրտը այնպիսով պարզուում է, տեղի է տաւում նորան լցուելու նորից նոր ու աւելի ազնուագոյն զգացմունքներով: Կրթելով երեխայի մէջ նորա երաժշտական ընդունակութիւնը, հեռացվում են նորանից մէկ խօսքով այն ամենայն պատճառները, որից չառաջ են գալիս վերջիշեալ ցաւալի հետեւանքները: Եւ մարդը, սովորելով երեխուց երգելուն, կ'երգէ և հառաի առած ժամանակը, և, իրաւի, բախտաւոր է այդպիսի մարդը: Ասելով այս, 'ի հարկէ չպէտք է հասկացած երգիչներուն, որոնք երգը չլինել են իւրեանց համար արհեստ:

Ուրեմն թող երգէ երեխայն, երգէ նա միշտ դա-

սերից ազատ ժամանակը, երգէ նա որտեղ էլ լինի, որպէս զի նա մնայ միշտ զուարթ. և քան լիցի արդեւել նորան երգելը և անկարգութիւն համարել երգելը, ինչպէս սովորաբար անում են անկիրթ դատարարակները: Յանկալի է, որ երգեցողութիւնը, կամ առհասարակ երաժշտութիւնը, դաս տվուար երեխանցը կանոնաւոր ձևով, բայց պատճառ որ դորա համար պակաս են հարկաւոր միջոցներ, ուրեմն թող երեխաները երգեն, ինչպէս կարենան, ինչ որ գիտեն ու ինչ որ լսել են իւրեանց շրջակայութեան մէջ և երգեն իրանցը ծանօթ երգեր. և եթէ ուսուցիչը կարող է նոցա օգտակար լինել և այդ կողմանէ, աւելի լաւ. թող նա ուսուցանէ նոցա և նոր, ազգային երգեր, և երգեր այնպիսի եղանակներով, որոնք փոքր 'ի շատէ հասկանալի լինին երեխային, վեր առած լինին նորա կեանքից, հաճելի լինին նորա ականջին և չարմար լինին թէ նորա ձայնի ոյժին, թէ երեխայի բարոյական զարգացման:

Թող երեխաները երգեն և եկեղեցւոյ մէջ կիւրակէ և տօն օրերուն: Հարկաւոր է նոյնպէս որ երեխաները երգեն և խումբով:

Նմանապէս, եթէ երեխանց մէջ լինին և սաղածել գիտացողներ, պէտք է թույլ տալ, նաեւ խրախուսել, որ նոքա ամեն սաղը նմանապէս պարապ ժամանակը:

Կարող է պատահել և այն, որ երեխանց միջից դուրս գան այնպիսիները, որոնց մեջ նկատուէն առանձին երաժշտական ընդունակութիւն կամ տաղանդ. նոցա վերայ պիտի դարձնուի առանձին ուշադրութիւն, և հոգատարութիւն անուի թէմական հոգաբարձուի (տես 'ի ներքոյ) միջնորդութեամբ, որ այդպիսի տաղանդներուն միջոց տվուայ երաժշտութեան մէջ կատարելագործուելու:

Այն նշանակութիւնը որը ունի գրութիւնը յարաբերելով դէպ ի մեր միտքը, ունի գծագրութիւնը մեր տեսած առարկաներու կողմանէ: Եթէ գրելով մենք արտայայտում ենք և ուրիշին իմաց ենք անում մեր միտքը, գծագրելով մենք պատկերացնում ենք մեր տեսած ու երևակայած առարկաները և իմացենք տալիս նոցա ուրիշին:

Այս կարճ բացատրութիւնից հասկանալի է դառնում, որ գծագրութիւնը մարդու համար հարկաւոր գիտելիքներից մէկն է, և սորա հարկարկաւորութիւնը մինչև այն աստիճանի նշանաւոր է համարվում, որ լուսաւորեալ երկրներում, սկսեալ ամեն կարգի ամենատարբեր ուսումնարաններից թէ տղայոց, թէ օրիորդներու, թէ գիւղական թէ քաղաքային՝ մինչև վերին ուսումնարանները, ամէնի մէջ գծագրութեան ուսումը ամենահարկաւոր առարկաներու դասի մէջն է դրվում:

Գծագրութեան հարկաւորութիւնը մանաւանդ նշանաւոր է արհեստականի համար, և եթէ մեր արհեստականները չես են մնում եւրոպական կրթութեամբ արհեստականներից և չեն կարողանում նոցա արածը անել, սորա գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ զուրկ են գծագրութեան գիտելիքից: Ո՞ր որմնագիրը ¹⁾ կամ քարտաշը կարող է վարպետ համարուիլ, եթէ նա չգիտէ գծագրութիւն և չէ կարող հասկանալ ճարտարապետից նորան տուած որևիցէ շինութեան հատակագիծը ²⁾։ Կամ չգիտենալով գծագրութիւն, ինչպէս նա կըլինէ ինքը շինութեան նախագիծը ³⁾ առանց ճարտարապետի ինչպէս հիւսն կամ ատաղձագործը ⁴⁾ կարող է ճշտու-

թեամբ ու իստակ գործ կատարել առանց գծագրութեան գիտենալու: Արդե՞ծ գծագրութեան չգիտենալից չէ, որ մեր գերձրկներու կամ կոշկակարներու ձեւածը կամ աւելի կամ պակաս է, կամ ծուռն է:

Վերաւնենք առհասարակ որևիցէ արհեստ, ամեն տեղ հարկաւոր է գծագրութեան գիտենալը. թէպէտ նոցանից շատերը պէտք չունին շատ ու բարդ գծախաղերու, բայց նաև այն քիչ գծերը, որոնք պէտք են նոցա, խաղվում են ծուռը ու անկանոն, պատճառ սր նոցա ձեռը վարժութեամբ չէ ու նոքա չգիտեն զանազան գծեր խաղելու կանոնները: Բայց հարցը միայն այս հասարակ գծերը քաշելումը չէ, այլ գլխաւորապէս նորանումը, որ արհեստականը գործ ունենալով իսկապէս առարկաներու հետ, որոնք ամբողջ մարմին են կազմում և որոնցը նա պէտք է թղթի վրայ, այն է մակերևութի վրայ, գծելով պատկերացնէ, պիտի գիտենայ, թէ ինչպէս այդ ամբողջ մարմինը մէկ թղթի կամ տախտակի վրայ այնպէս քաշէ, որ պատկերի ձեւը, թէպէտ և փոքրացած, նմանի իրան առարկային, և միևնոյն ժամանակը պահպանութեան, լայնութեան, հաստութեան կամ բարձրութեան, չարաբերական մեծութիւնները:

Սորա համար հարկաւոր է ուսանել գծագրութիւն, և նորանով երեսան պէտք է պարապել շարունակարար ամբողջ ուսման ջրջանի միջոցում, սկսելով ամենահասարակ գծերից և հասնելով մինչև այն աստիճանին, որ նա հեշտութեամբ կարողանայ գծագրել և նկարել զանազան տեսակ առարկաներ բնութիւնից: Աւելի պարզ ցոյց տալու համար այն օգուտը, որը լաւաջ է դալիս գծագրութեան գիտենալից, պէտք է դարձրած ուշագրութիւն չեղեալ իրողութիւններու վերայ:

¹⁾ Каменщикъ, Le maçon. ²⁾ Планъ, Le plan.

³⁾ Проектъ, Le projet. ⁴⁾ Токарь, Le tourneur.

Ա. Գիտենալով գծագրել առարկան, արհեստավորը կարող է հասկանալ և ուրիշի գծագրածը, և երբոր նա կուսենայ իւր առաջը մէկ առարկայի գծագիրը, նա նորանով հեշտութեամբ կարող է պատկերացնել իւր մըտքումը իսկական առարկան, առանց նորան տեսնելու, և պէտք եղած ժամանակը, նաև ճարտարապետել այն առարկան: Կամ թէ արհեստավորը՝ վերաբերելով գծագրի որեւիցէ ընտիր մասերը կամ ձեւը իւր արուեստակերտելու առարկաներու վերայ՝ կարող է մտցել իւր արուեստի մէջ նորութիւններ և այնպիսով լաւացնել, ու կատարելագործել իւր արուեստը:

Բ. Գիտենալով գծագրութիւն, արհեստականը հեշտութեամբ կարող է գծագրել տեսած որտեղ և իցէ իւր արուեստին պատկանեալ նոր և ընտիր ձևի առարկայ, որը նա ոչ գնել ոչ իւր հետ տանել չէ կարող: Բացի այդ նորա գլխի մէջ կարող է ծնուիլ մէկ որեւիցէ առարկայի ձևի կամ գործիքի նոր միտք, իդէայ. նա իսկոյն հեշտութեամբ կարող է այն իւր միտքը գծագրել, որով նորա ստեղծւած ու հնարած մտքերը չեն կորչիլ, այլ կարող են նաև իրագործուիլ:

Գ. Գծագրութեան դատաւումութիւնը կրող է երևան հանել շատ թաղցրած տաղանդներ: Քանի ու քանի նկարչական քանքարներ հասարակ ժողովուրդի մէջ անհետանում են հէնց այն պատճառով, որ այնպիսիները խելճ ու անտէր լինելով, չունին միջոց երևացնել իւրեանց բնական նկարչական ընդունակութիւնները: Ի հարկէ, այդպիսի երեխանց վերայ պիտի դարձնուի առանձին ուղադրութիւն և քաջուի առանձին հոգատարութիւն, որ նորա շառաջ գնան և կատարելագործուին նկարչական արուեստի մէջ: Այդպիսիները ժամանակով կարելի է և ազդի փառք դառնան:

Դ. Վերջապէս գծագրութեան արուեստի գիտե-

նալը, որը հիմն ու սկիզբն է նկարչութեան, բացի այն, որ ներացնում է ու կրթում է մարդու տեսականութեան ընդունակութիւնը և նորա ճաշակը դէպի գեղեցիկը (Estetique), ունի և այն օգուտը, որ կարողութիւն է տալի մարդուն գծագրել իրան հաւանած ու հաճելի առարկաները և տեսարանները և թողնել իւր մօտ նոցա չեղատակը: Այս բաւականութիւնը մանաւանդ աւելի հաճելի կըլինի կանանց սեռին, որոնց մանաւանդ ձեռագործական պարսպմանց համար գծագրութեան գիտելիքը նմանապէս հարկաւոր է, ինչպէս տղամարդկանց համար:

Գծագրութեան գիտենալը հարկաւոր է միեւնոյն պատճառներով և գիւղականներուն, թէպէտ և ոչ այնքան, ինչպէս արհեստականներուն:

Վասնորոյ գծագրութիւնը պիտի առարկայ լինի կանոնաւոր դատաւումութեան ամենայն ծխական ուսումնարաններու մէջ:

ՄԱՐԲՆԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ:

Մինչև հիմիկ անուանած ուսանելի առարկաները նպատակ ունին զարգացնելու ու զօրացնելու երեխայի մտաւոր ու հոգևոր ոյժերը: Բայց հոգևոր ոյժը զօրեղ կարող է լինել զօրեղ ու ուժեղ մարմնոյ մէջ: Ուրեմն չպէտք է պակաս ուշադրութիւն դարձցնել երեխայի և մարմնոյ վարժութեան և նորա բնական մարմնաւոր ոյժերու զարգացման վերայ:

Նայեցէ՛ք երեխային, ինչպէս նա սիրում է խաղալ: Ի՞նչիցն է: Ոչ արդեօք նորա բնական ձգտումն է նորան ստիպում ամենայն տեսակ շարժողութիւններ անել, որոնցը նորա զօրեղ աճելութեան ու զարգացման ժամանակամիջոցի մէջ եղած մարմինը պէտք ունի: Սորա համար հարկաւոր է անպատճառ երեխանցը զանազան այնպիսի

խաղեր խաղալ տալ, որի ժամանակը նոքա վաղեն, թռչկոտեն, և այսպիսով վարժեցնեն իւրեանց ձեռները, ոտները և ամբողջ մարմինը, ըստ որում երեսանցը ըմբռնամարտութիւն ¹⁾ անել տալ, նոցա թոփ ²⁾ (բութի), ստրովբիւղ ³⁾ (բղբեալա) և լեցք ⁴⁾ (կռճի) խաղալ տալ, որով միևնոյն ժամանակը սրվում է նոցա գիտելու ու նշան դնելու ընդունակութիւնը: Եթէ ուսումնարանի միջոցները թոյլ տան, հաճելի կը լինէր և սարգել առանձին մարզարան ⁵⁾: Այս խաղերով երեխայք պիտի պարապին ՚ի հարկէ դատաստութիւնից ազատ և դատամէջներու ժամանակը. միայն հարկաւոր է, որ այդ խաղերու ժամանակը ուսուցչի աչքը հաւէ երեխանց վերայ, որ չիցէ նոքա մէկմէկու նեղացնեն կամ վնասեն կամ խօսքով կամ գործքով վիրաւորեն մէկմէկու, և որ խաղից կուի չգառաջ դալ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊԵՐՈՒՆՔ:

Մենք գիտենք, որ մեր գիւղացիք ու արհեստականները անկերթ են և զուրկ են նաեւ այն ամենահարկաւոր գործնական գիտելիքներէց, որոնք հարկաւոր են նոցա աշխատանքի և պարապմունքի համար, և որ այս սգիտութիւնն է պատճառ, որ նոցա ծանր աշխատանքը մնում է անբեղմնաւոր և չէ շահեցնում նոցա այնպէս ու այնքան, որքան լուսաւորեալ երկիրներումը գիւղացիներուն և արհեստականներուն, որոնք սովորում են կանոնաւոր և խելացի աշխատանքին, միջոց ունին անդադար բարւոքելու ու կատարելագործելու իւրեանց արուեստը, և լինելով բարոյաբար

¹⁾ Бороться, Lutter. ²⁾ Мячикъ, Le balle, ³⁾ Кубарь, Le sabot. ⁴⁾ Бабки, Jeu des osselets. ⁵⁾ Гимнастика, La gymnastique.

կրթուած, վարվում են իւրեանց աշխատանքի մէջ արդարաբար ու աշխուժաբար և սովորում են չափաւորել իւրեանց ծախսը և ապրել խնայողաբար (դպրաթով):

Ուրեմն մեր արհեստականներու և գիւղացիներու դրութիւնը բարելաւացնելու համար, նոցա աշխատանքը բեղմնաւոր ու արդինաւոր շինելու համար, հարկաւոր է նոցա միջոց տալ ծանօթանալու կանոնաւոր, խելացի և բարեհանձար աշխատանքի հետ, և կատարելագործուած արհեստներու հետ, և թէ ինչպէս յարմարացնել ու գործադրել նոցա դանդաղ տեսակ գործունէութիւններու վերայ գիտութեան այն ուղղունքները, որոնք ամենայն գործնական աշխատանքի հիմն են, և որոնք մասամբ դաս են տվում նոցա, այն է, ծխական ուսումնարաններումը:

Յայտնի է, որ մեր հասարակ ժողովուրդը շատ հեռու է այն լուսաւորեալ երկիրներէց, որտեղ ծաղկած ու կատարելագործուած են արուեստները և գիւղացիներուն վերաբերեալ գործողութիւնները, որ հասարակ ժողովուրդը բաժանուած է այն մարդկերանցից, որոնք նուիրել են իրանցը վերին գիտութիւններուն որոնք մշակում են ու յառաջ են տանում այս գիտութիւնները ու սոցանից ստանում են կեանքին պատշաճեցուցանելու օգտակար հետեւանքները: Այս գիտնականները կաղմում են իւրեանց համար մէկ առանձնացած աշխարհը:

Բայց թէ մի պիտի գիտութեան լոյսը, արուեստներու կատարելութիւնը, այն լուսաւորեալ երկիրներէց ու այն առանձնացած աշխարհքից հասցնէ ու իմացանէ նոցա կարօտ մեր հասարակ ժողովուրդին, մի պիտի լինի սորա և այն գիտնականներու մէջ միջնորդ, յայտնի է, որ ուսումնարանը: Ուրեմն ուսումնարանը, բացի այն ուսանելի առարկաները, որոնք

նպաստում են զարգացնելու ու կրթելու ժողովուրդի խելքը ու հոգին ու բարոյականութիւնը ու հարստացնելու նորա միտքը զանազան գիտելիքներով, պէտք է պարունակէ իւր մէջ և այնպիսի պարապմունք, որով գիւղացու և արհեստականի որդիքը գործնականապէս ծանօթանալ կարենան այն գործողութիւններու հետ, որոնք կը նպաստեն նոցա արհեստին և նոցա զանազան գործողութիւններու բարելաւացնելուն և կատարելագործուելուն, այն է Գործնական Պարապմունք: Ի հարկէ որ այս պահանջմունքները բաւականացնող չեն կարող լինել մեր սկզբնական ծխական ուսումնարանները, այլ դա գործ է առանձին ու մասնաւոր՝ շինական, տնտեսական՝ գործնական և արհեստական, հիմնադրութիւններու և ուսումնարաններու: Բայց, մինչև որ այսպիսիները մենք դեռ չունինք, և ո՞ գիտէ, երբ կ'ունենանք, և եթէ մէկ քանիսն էլ որ ունենանք, նոքա չեն կարող բաւականացնել ընդհանուրի հարկաւորութիւնը, ուրեմն այդ անհրաժեշտ հարկաւորութիւնը բաւականացնող, թէպէտ շատ քիչ, բայց որքան որ կարելի է, պիտի լինին ծխական ուսումնարանները, որտեղ մեր հասարակ ժողովուրդը ստանում է իւր միջոցն ուսումը, կրթութիւնը ու դաստիարակութիւնը:

Բայց, բացի այն որ մեր ներկայ գրութեան մէջ հասարակ ժողովուրդի կրթութեան համար մենք ունենք միայնակ ծխական ուսումնարանները գործնական պարապմունքի նոցա մէջ մտցնելու հարկաւորութիւնը չառաջ է գալիս և հետեւեալ պատճառներով.

Ա. Ծխական ուսումնարանի ջանքը և հոգացողութիւնը պիտի լինին, որ նախ նորա աշակերտները ուսումը աւարտելից յետոյ վերստին վերադառնան այն դասակարգի ասպարէզը, որին ինքեանք պատկանում են և ձեռնամուխ լինին այն աշխատանքին,

որով պարապում է այն դասակարգը, և երբեք՝ ձեռնամուխ լինին նոքա այդ աշխատանքին շահաւորաբար, այն է, դուրս բերեն իւրեանց հետ ուսումնարանից գիտութեան այն սկզբունքները և արհեստի այն նախագիտելիքը, որոնք նպաստել կարենան նոցա ապագայ պարապմունքը և աշխատանքը իրանց համար աւելի բեղմնաւոր դառնալուն:

Սորա համար հարկաւոր է անպատճառ, որ ուսումնարանումը աշակերտը բացի մտաւոր պարապմունքը ունենայ և գործնական պարապմունք, որպէս զի նա սորանով ընտելանայ այն մտքի հետ, որ նա գործող ու մշակող մարդկերանց դասին է պատկանում, որ նա գիւղականի կամ արհեստականի որդի է, և որ գործնական աշխատանքը պիտի լինի ապագայումը նորա համար ապրուստ ճարելու միջոցը և ճանապարհը, և դորա համար նա հէնց երեխուց պիտի սովորի այդ աշխատանքին, սովորի չարգելու ու սերբելու արուեստը և գործնական աշխատանքը, որը բացի այն, որ չարմարացրած պիտի լինի նորա հասակին, պիտի միևնոյն ժամանակը պատրաստէ գործաւորապէս երեխային այնպէս, որ նա կարենայ պէտք գալ թէ իւրեան անձին թէ տնային՝ գոնեա հասարակ հարկաւորութիւններու մէջ, կամ թէ, երբ նա մանի աշակերտ արհեստականի գործարանը կամ ձեռնամուխ լինի շինական պարապմունքին, հեշտութիւնով և փոքր 'ի շատէ պատրաստուած կարենայ սկսել իւր գործունէութիւնը:

Եթէ ոչ, մենք կ'ստանանք միևնոյն հետեւանքը, որը ունին այժմեան ծխական և այն սկզբնական ուսումնարանները, որտեղ չէ ուսուցանվում գործնական պարապմունք, որ տեղ երեխայք ստանում են միայն վերացական ուսում, և այն էլ թերի, որը մեծաւ մա-

սամբ շուտով մոռացուում է և մնում է անգործադրելի, որտեղ երեսայք զուրկ մնալով բոլորովին գործնական գիտութիւնից, սովոր չլինելով ոչ մէկ գործնական աշխատանքին, չեն կարող և չեն ցանկանում, ուսումնարանից դուրս գալուց յետոյ, ձեռնամուխ լինել ոչ մէկ իւրեանց դաստիարակին յատկացեալ պարագանքին, և ստանալով նաեւ իւրեանց վերայ առանձին համարումն՝ իրեն ուսեալ տղայի՝ էլ արժանի չեն համարում իւրեանց անկիրթ ծնողացը ոչ էլ իւրեանց դաստիարակի շրջանը, և մնում են պարապ, անօգնական, որպիսի դրութիւնը պատճառ է լինում շատ վատ հետեւանքներու, կամ այդպիսի անճարացածները մտնում են աշակերտելու մէկ վաճառականի շուկայ, այն էլ կարճ ժամանակով, որտեղ նմանապէս զրեթէ անգործ են մնում, կամ ընտրում են իւրեանց համար ամենաթեթեւ ու պարապ աշխատանք, որոյ մէջ նմանապէս զրեթէ անգործ են մնում. և այսպիսով օրըստօրէ աշխարհի տղայոց թիւը բազմանալով, կազմում է կարելի է ասել այն իմաստով որ չորսը, որը հասարակութեան ամենափոքրակալը դասն է կազմում:

Տեսնելով այսպիսի ցաւալի հետեւանք, դալիս ես ախմայ այն վճռադատութեանը, որ աւելի լաւ կը լինէր, եթէ այսպիսի տղայք բոլորովին ուսում չառնէին, և որ այսպիսի սկզբնական ուսումնարանները աւելի փոքրակալ են քան թէ օգտաւէտ:

Բ. Գիւղականներու, արհեստականներու և ընդհանրապէս հասարակ ժողովուրդի համար իւրեանց օրդէրը ընտանիքի միւս անդամներու նման կազմում են աշխատանքի ոյժ և նոցա ամենի մասնակցութիւնով կատարվում են ամենայն այն գործքերը, որոնք բաւականացնում են նոցա ընտանեկան պահանջները և

պահանջներն են նոցա ապրուստի պիտոյքը: Հասարակ մարդը նայում է իւր օրդու վերայ՝ նաեւ նորա երեսայութեան ժամանակը՝ իրեն իւր օգնականի վերայ և կատարել է տալիս նորան իւր հասակին յարմար աշխատանք: Ուրեմն հասկանալի է, որ գործաւոր ու մշակ մարդը իւր երեսային 3 կամ 4 տարով ուսումնարան ուղարկելով, զրկվում է նորա օգնութիւնից, և եթէ վճռում է զրկել իրան այդ օգնութից, նորա համար, որ սպասում է 4 տարից յետոյ աւելի օգտաւէտ կերպով շահուիլ նորա աշխատանքից: Բայց երբ որ նա տեսնում է, որ ուսումնարանից դուրս եկած նորա օրդին ոչ թէ նորան օգտաւէտ կերպով չէ պէտք դալի, այլ նաեւ բոլորովին հեռանում է ու բաժանվում է նորանից, այն ժամանակ, երբ նա ոչ թէ համակրութիւն պիտի ցոյց տայ ուսումնարանին, այլ ընդհակառակն նորա վերայ թշնամաբար պիտի նայէ, և աւելի բարուրդ համարէ իւր օրդուն զրկել ուսումից ու մշակացնել իւր մօտ, քան թէ ուղարկել ուսումնարան, կամ աւելի գերազանց է համարում իւր օրդուն պահ տալ մէկ արուեստականին, նաեւ մէկ օրեկցէ վաճառականին, որտեղ նա յոյս ունի, ի հարկէ իւր հասկացողութիւնով, որ իւր օրդին մէկ քան կըստվորէ, որով նա ժամանակով իւրեան համար պէտքական կը լինի: Հասարակ ժողովուրդը ուսումնի մէջ պըտում է միջոց նիւթաւորապէս շահուելու իւր անձին ու իւր ընտանեաց համար, նորա համար մտաւոր ուսման հետեւանքը այնքան զգալի ու հասկանալի չեն, նա պահանջում է իւր երեսայից, ոչ խօսքեր ու դատողութիւններ, որոնք նորան չեն տալիս հաց, այլ նա պահանջում է գործ ու այնպիսի գիտելիք, որոնք հաց ճարելու միջոցներ լինին, իրան կերակրեն ու ապրուստ տան: Եւ սորա մէջ չէ սխալուում ժողովուրդը. սխալ-

վում են նորա, որոնք ժողովուրդին ուսում են տալիս նորա համար անհատականալի ու անգործադրելի գիտութիւններ և բաց են թողնում նորա համար ամենահարկաւորը, կամ դառն տալիս նորան հարկաւոր գիտութիւնները այն ձևով, որ նորա համար ուսումը լինում է անհատականալի, անմարտելի և անգործադրելի:

Բայց երբ որ ուսումնարանը կը լինի իսկապէս բաւականացնող ժողովուրդի պահանջմունքներուն, երբ որ ժողովուրդը կը տեսնէ, որ այնտեղից տուն վերադարձած իւր որդին և մտաւորապէս և բարոյապէս կըրթում լինելով, սիրով և յօժարութեամբ ձեռնամուխ է լինում աշխատանքին և օգնում է իւր ծնողացը առաւել օգտակատար, քան թէ և թէ նա այն ուսման միջոցումը մնար տանը, կամ մտած լինէր աշակերտ մէկ արհեստականի մօտ, այն ժամանակ այն հասարակ մարդը կը համոզուի ուսման օգտակարութեան մէջ և ցոյց կը տայ բոլորովին իւր համակրութիւնը դէպի ուսումնարան, նա կը նայէ ուսումնարանի վերայ իբրեւ իւր թանկագին սեպհականութիւն, նա ամենայն կերպով կը հոգայ նորա բարելաւութեան համար, ոչինչ աշխատանք և նիւթական օգնութիւն չինայելով նորա համար: Այն ժամանակ ամենայն հոտարակութեան դաս, ամենայն գիւղ, ինքը, յօժար կամքով, կ'ուզենայ ունենալ իւր համար այդպիսի ուսումնարան, սոցա հիմնելու համար նա յօժար կամքով ջանձն կ'առնէ ամենայն հարկաւոր ծախսը, և ուսումնարանը էլ չի դառնայ կառավարութեան և զանազան հիմնադրութիւններու և ընկերութիւններու հոգատարութեան առարկայ, այլ սոցա աշխատանքը միայն նորանումը կը լինի, որ այն ուսումնարաններու համար արժանաւոր ուսուցիչներ ու ուսման հարկաւոր միջոցներ պատրաստեն:

Աւելման աչգ բարձր նպատակին հասնելու հա-

մար հարկաւոր է, որ մեր ծխական ու առհասարակ սկզբնական ուսումնարանները այնպէս լինին կարգաւորուած, որ նոցա մէջ բացի այն մէկ քանի ամենահարկաւոր իմացական գիտելիքը, որոնք պիտի դառնան իսկապէս կրթական ձևով, ինչպէս վերևումը ասուեցաւ, երեսաները ունենան և փորձնալի պարապմունք, այսինքն այնպիսի պարապմունք, որոնցը՝ մէկ կողմից՝ երեսաները անմիջապէս իւրեանք իւրեանց համար հարկաւոր ժամանակը գործ դնել կարողանան, և միւս կողմից՝ որոնք հիմն ու սկիզբն լինին ուսանողներու ապագայի պարապմունքի ու գործունէութեան համար, որոնք մարդուն երեսայութենից սովորցնեն գործնական աշխատանքին, և որոնց միջոցով գործնաւորապէս մեկնուին ու պարզուին երեսային ուսուցած զանազան գիտելիքները:

Երբ որ ուսումնարանի մէջ մտցրած կը լինին այսպիսի պարապմունք, այն ժամանակ ամենաընտել կերպով կը գործադրուին և իմացական գիտութիւնները, ինչպէս Թուրանութիւն, Աշխարհագրութիւն, Բնական պատմութիւն և միւսները, որոնց դասատուութիւնը, յարմարուելով այն ուսումնարանի մէջ ընդունուած նշանակեալ գործնական պարապմունքին, կարող են ընդարձակուիլ ըստ չափու հարկաւորութեան: Այսպիսով գիտութիւնը ու գործը կը միանան, միտքը և աշխատանքը մէկմէկու կ'օգնեն, ուսումը կը դառնայ արդիւնաւոր և ուսումնարանից դուրս եկած նաև 13 կամ 14 տարեկան տղայը կամ օրերդները կը լինին այնքան զարգացած ու մտածողք և սովորած աշխատանքին, որ պատրաստուած կը լինին որեւիցէ գործունէութեան համար:

Հարցն է այժմ, թէ այդ գործնական պարապմունքը ինչպիսի պիտի լինին:

ի հարկէ, սորա պատասխանելը հեշտ չէ. և այս խնդիրը զբաղեցնումէ մինչև այսօր ամենալուսաւոր Եւրոպական աղգելի ամենամեծ հանճարներուն ու մանկավարժներուն:

Անտարակոյտ, այս պարապմունքը չէ կարող ընդհանուր լինել ամեն ուսումնարանի մէջ, այլ հարմարուցրած պիտի լինի հասարակութեան զանազան դասակարգի պահանջմանցը. բացի այդ քաղաքային և գիւղական տղայոց և օրիորդներու ուսումնարաններու մէջ պարապմունքը պիտի զանազան լինին: Ըստ որում ողջ ծխական ուսումնարանները, այս հարցի կողմանէ, պիտի բաժանենք չորս գլխաւոր կարգեր. առաջինը քաղաքային և ե. գիւղական ուսումնարաններ, և օրիորդներու համար գ. քաղաքային և դ. գիւղական ուսումնարաններ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ:

Ամենադժուարին հարցը է տնօրինել գործնական պարապմունքը քաղաքային ուսումնարաններու մէջ, նորա համար, որ, առաջին քաղաքի մէջ զանազան թաղերու ծխական ուսումնարաններու մէջ զանազան դասակարգի մարդկերանց օրդիք են աշակերտելու, ու երբեք՝ որ այդ երեխաները գլխաւորապէս արհեստական դասիցն են և որ նոցա փոքրիկ մասը վաճառականի որդիք են կազմում: Ուրեմն գլխաւորապէս այդ գործնական պարապմունքը պիտի, կարծես, լինի արհեստ: Բայց թէ մը արհեստը կսմ ինչքան տեսակ տրուեստ— ահա հարցի դժուարութիւնը:

Դաս տալ մէկ օրեկից արհեստ, կընշանակէ, թէ կարծես, ողջ աշակերտները պիտի պատրաստուին միայն

այդ արհեստի համար. իսկ դաս տալ շատ արհեստներ, անկարելի է, պատճառ որ դորա համար հարկաւոր են ահագին նիւթական միջոցներ, որը ուսումնարանը ունենալ չէ կարող: Միւս կողմից պէտք է հարցրած՝ կարելի է արդե՞ք մէկ օրեկից արհեստ ուսուցանել ու լիովին, ինկատի ունենալով, որ ծխական ուսումնարանի աշակերտները հասակով 8 տարեկանից մինչև 14 տարեկան են, թէ գործնական պարապմունքը այդ հասակի երեխանց համար ուրիշ տեսակի պարապմունք պիտի լինի, և արդե՞ք, ինչ տեսակի պարապմունք:

Այս դժուարութիւնից դուրս գալու համար ամենից ուղիղը կը լինի, եթէ մենք դիմենք դէպի իրան երեխան, զննողական հայեցումով քննենք նորա գրութիւնը և նորա հարկաւորութիւնները, և տանք մեզ այն հարցերը, թէ ինչին պէտք ունին այդ երեխաները և ինչ է նոցա հարկաւոր, և գուցէ դոցա պատասխաններու մէջ գտնենք պարունակուած նոցա գործնական պարապմունքներու նիւթերը:

Սկսենք ամենադժուար հարկաւորութիւններից:

Ա. Ի՞նչիցն է, որ մենք տեսնումենք այդ հասարակ ժողովուրդի օրդիւրանցը ըստ մեծի մասին պատուած հագուստով, շորերը կեղտոտ, նոցա կարը քանդուած, կամ ոտնամանը պատուած ու ցեխոտ: Ի հարկէ նորանիցը՝ որ երեխայն ինքը չգիտենալով, ինչպէս այդ պակասութիւնները ուղղել ու լրացնել, չունի շատ անգամ նոցա շինող ու կարկտնող: Ուրեմն չէ արդե՞ք հարկաւոր, որ երեխան գիտենայ ինքը այն հնարքը ու միջոցները, որով նորա հագուստը միշտ խտակ ու կարգին լինի և չլինի էլ պատուատուած: Ահա ոտանից հետեւում է, որ ամենադժուար գործնական պարապմունքը պիտի լինի նորա մէջ, որ երեխաները սովորեն

ասեղի ու մկրատի գործածելը, այն է, իմանան, ինչպէս շորերը կարկտնել, թեթե կարը կարել, կոճակները վրայ կաշել, շորերից բեժերը հանել, շորերը սրբել, կոշիկները կարկտնել, և սորա հետ գետեհալ և ողորկիչ երկաթի (ուլթոյի) բանացները ու կարկտնածը ողորկելը, զանազան տեսակ թէլերու բանացները ու նոցա ճանաչելը: Այս պարապմունքը երեխաները կարող են սկսել գործդնել իւրեանց սեպհական հաղուտի վերայ և յետոյ կարկտնել նաև իւրեանց ծնողաց կամ եղբորներու շորերը: Արդեօք գոհ չեն լինելու աշակերտի ծնողքը, եթէ իւրեանց որդիքը նաև այդ կողմից պետքական լինին իւրեանցը և նոցա:

Անք շատ անգամ երեխաներից պահանջում ենք, որ նորա մաքուր ու կարգին լինին հագնուած, և եթէ մենք հակառակն ենք տեսնում, մենք նոցա պախարակում ենք, նաև պատժում ենք: Արդեօք իրաւացի է մեր արածը, արդեօք դորա մէջ միշտ մեղաւոր է ինքը երեխան: Իսկ երբ որ մենք կըստվորցնենք նորան այն միջոցները, որով նա կարող է մաքուր ու կարգի հագնուած լինել, այն ժամանակ և մեր պահանջմունքը կը լինի իրաւացի:

Բ. Եթէ մտնենք այդպիսի արհեստականի տուն, ինչ ենք տեսնում: Ըստ մեծի մասին անչափ զանազան անկարգութիւններ՝ տան կարասիք, ինչպէս աթոռներ, սեղաններ, որոնց վերայ ոչ նստել, ոչ էլ նոցա բանացներ է կարելի, նորա համար որ, նոցա ոտները կամ թուլացած կամ կոտորուած են, ամանեղէն կամ շուշեղէնը նմանապէս ջարթած ու կոտորուած, շատ բան անպէտք դարձած, որոնք կարող էին այդպիսի բնութանքի մէջ վերստին պէտք ածուիլ, եթէ լինէր նոցա կարգի բերող:

Ինչ՞ համար երեխան չգիտենայ, ինչպէս և այդ կողմանէ պէտք գալ իւր տանը և իւր բնութանքին և

ի՞նչու համար նա չկարողանայ ինքը կոտորածը ու փուլեկածը շինել ու ուղղել, երբ որ նորա ծնողքը չունին կարողութիւն հնացածի տեղ նորը առնելու և նոցանից ամեն մէկը առանձին արհեստականին շինել տալու:

Ահա այսպիսի հարկաւորութիւններուն բաւականացնող պարապմունք պիտի լինին. իմանալ զանազան տեսակ սոսինձի (ծէքոյի) ու շրէժի, մուրճի (չաքուչի), սղոցի, գայլակոնի (բուրդոյի), հերուհի (բիղ), խարտոցի, պտուտակի (վինտի) գործածելը, որով կոտորած ու փուլեկած փայտէ կարասիքը ու ամանեղէնը կը կպցունեն, հարկաւոր տեղերումը մեխերը կը խփուին, կամ ծռացածները կը դրստունեն, երկաթի կամ պղնձի մասերը կը խարտոցուին, նմանապէս պատերից պլոկուած թղթերը կամ որեւիցէ թղթեղէն կամ կաշեղէն առարկաներու վրայից նմանապէս պլոկուած թուղթը կամ կաշին կը կպցունին, տախտակը կըսղոցուի, նորա մէջ դաշլակոնով ծակեր կը ծակուին և պտուտակները կը հագցունուին: Վերջապէս երեխաները թող իմանան և ինչպէս զանազան ներկերու հետ վարուիլ և նոցա գործածել այնքան, ինչքան հարկաւոր է տան համար, դորսերնակ, ուսացած պատերը սպիտակացնելու: Թող սովորեն նոքա, ի հարկէ հասակաւորները, և կացինի բանացները և թէ ուսումնարանի թէ իւրեանց տան համար փայտը իւրեանք կոտորեն կամ սղոցեն:

Ժամանակով, և եթէ աշակերտները աւելի հասակով լինին, կարելի է ուսումնարանումը ունենալ և կարելու մեքենայ, հիւսնի և տաղաւորի ճախարակ և պարապեցնել աշակերտներուն և այդ մեքենաներու վերայ: Երբ որ վերջիշեալ գործողութիւնները երեխան լաւ սեպհականեց իւրեան և միևնոյն ժամանակը նա այդ գիտելիքը գործ դրեց իւր համար, իւր տան հարկաւորութիւնները բաւականացնելու համար, նա արդեօք

միևնոյն ժամանակ չսովորեց զանազան արհեստներու սկզբունքը, ինչպէս դերձակութեան, կոշկակարութեան, հիւսնութեան, ներկարարութեան և ուրիշներու, և սովորեց այնքան, որ եթէ ուսումնարանումը անցկացած ժամանակուան միջոցումը նա աշակերտէր որեւիցէ արհեստականի մօտ, նա դորանից աւելի չէր կարող սովորել, վերջապէս նա սովորեց զանազան իւրեան պէտքական գործողութիւններ ոչ միայն մէկ արուեստին, այլ զանազան արուեստներուն վերաբերեալ, որպիսի գիտելիքը նորան հարկաւոր ու պէտքական կըլինի նորա ամբողջ կեանքումը, և ստանալով այն նախակրթական գործնական ուսում արուեստների մէջ, արդեօք գիտար կը լինի նորան չետոյ մտնիլ արուեստանոց և մէկ մասնաւոր արուեստով պարապիլ:

Իսկ թէ ոչ և ինչպէս պիտի վարէ այդ պարապմունքը, դորա մասին կը խոսուի յետագայ յօդուածներու մէջ:

Բայց ուսումնարանի գործնական պարապմունքը չեն միայն չեղեալ գործողութիւնները, այլ են և՛

Ք. Այն գիտութիւններու գործաւորապէս դործ գնելը, որոնք ուսումնարանի մէջ ուսուցանվում են, այն է՝

Նյութաբանութիւնից. վարժեցնել երեխային թէ սենեակի, թէ պատերու, թէ յատակի, թէ սեղաններու կամ դրսի սրահի մակերևոյթները, թէ պատերու կամ տախտակներու ու ուրիշ մարմիններու հաստութիւնը կամ սենեակի կամ ուրիշ դադարի մարմիններու, տարածութիւնը ու բովանդակութիւնը չափելու մէջ, գործածելով ամեն մէկ գործողութեան համար չարմար չափեր և հասարակ գործիքներ, ու վարժեցնել երեխային զանազան տեսակ չափերու հետ վարուելու ու նոցա գործածելու մէջ:

Գծագրութիւնից. վարժեցնել երեխանց իւրեանց

շուրջ եղած առարկաներու գծագրները շինել, նմանապէս թէ դասատան, թէ ուսումնարանի, թէ սրահի և մերձակայ շինութիւններու նախագիծները զանազան չափագծով կազմել գծագրական գործիքներու միջնորդութեամբ: Նմանապէս աշակերտներուն իրանցը շինել տալ խաւաքարտից (Հաստ թղթից — կարդոնից ¹⁾ այն կանոնաւոր երկրաչափական մարմինները, որոնք պիտի կաղապար ²⁾ լինին գծագրութեան դասերու համար. միևնոյն ժամանակ վարժեցնել երեխային խաւաքարտից զանազան արկղիկներ, տուփեր և ամեն տեսակ առարկաներ շինելու մէջ, գործադրելով այս պարապմունքին գծագրական և երկրաչափական կանոնները:

Բնական դասաւանդութիւնից. Այս գիտութեանը վերաբերեալ գործնական պարապմունքը գլխաւորապէս պիտի կատարուի դասաւանդութեան:

Այս զբօսանքները լինելու են երկու տեսակ՝ առօրինակ՝ ուսուցիչը, տանելով երեխանցը ուսումնարանից և քաղաքից դուրս, այն է, բաց բնութեան մէջ, նոցա ուշադրութիւնը դարձնում է այն առարկաներու ու երևոյթներու վերայ, որոնք նորա առջև և նորա շուրջ գտնուում են, այնպէս՝ ուսուցիչը մեկնում է զանազան ծաղիկներու, խոտերու, թուփերու ու ծառերու մասերը ու չափութիւնները, նոցա բուսանելու կերպը, հողի, քարերու ու ժայռերու զանազան չափութիւնները, ինչպէս օդի և ջրի ներգործութիւնից այդ քարերը փշրվում են ու աւազ է կազմվում. այս երևոյթը չետադայ զբօսանքներու մէջ կարելի է ընդարձակել և երեխանցը հասկացնել, իրան բնութեան մէջ նոցա գիտել տալով, թէ ինչպէս բարձր ու տկուր տեղերումը

¹⁾ Картонъ, Carton. ²⁾ Модель, Modèle.

քարափներու վերայ եղած հողը անձրեկից փոքր առ փոքր լուացվում է, իսկ եթէ նոցա վերայ խոտ կամ ծառեր են լինում, աչն հողը հաստատ մնում է իւր տեղը, և այսպիսով հասկացնել նոցա անտառներու օգտակարութիւնը. յետոյ՝ ջրերու վաղելը, աղբիւրներու կազմուիլը. ինչտեղ պատահին փոքրիկ կենդանիներ՝ միջատներ, ճիճու, թիթեռ, նոցա հետ երեխային մերձաւորապէս ծանօթացնել, նմանապէս և ճանապարհի վերայ հանդիպած տանու մեծ կենդանիներու հետ, որպիսի են՝ ոչխար, աչձ, խոզ, ուխտ, և այլն, կամ թռչուններու հետ. մեկնել երեխանցը լեռաներու, բլուրներու զանազան կերպի ձևակերպուելու պատճառները, նմանապէս ցածր տեղերումը լիճերու և ճահճներու կազմուիլը, այս վերջիններու վնասակարութիւնը և նոցա ցամաքացնելու միջոցները. խօսել երեխանց հետ երկնքի վերայ, օդի երեւոյթներու՝ զանազան տեսակ ամպերու ու հողերու վերայ և աչն, և աչն, և առ հասարակ հասկացնել երեխային և նորան դիտել տալ աչն ամենաչն առարկաները ու երեւոյթները, որոնք դասատան մէջ բնագիտութեան խօսակցութեան նիւթ են. բացատրել և մեկնել աչն ամենաչն երեխայի հարցերը, որոնք նորա հետաքրքրութիւնից և դիտողութիւններից առատաբար չառաջ կուգան և կը չառաջարկուին ուսուցչին, երբ որ սա իւր իսկ մարդասիրական ու բարեկամական վարմունքով երեխաներու հետ աչդ զբօսանքներու մէջ կըգրաւէ նոցա սէրը, համակրութիւնը և հաւատարմութիւնը:

Երբ որդիք, Աչդ զբօսանքները ուսուցիչը պիտի դիմէ գէպի քաղաքի մէջ կամ քաղաքից դուրս եղած արուեստանոցները և գործարանները, որ տեղ երեխաները իւրեանց աչրով պիտի տեսնեն և ուսումնասիրեն, ինչպէս որեւիցէ հասարակ ու բնական նիւթերից, նոցա

զանազան կերպով մշակելով կամ արուեստելով, կազմվում են մեր կեանքի համար պիտանի, հարկաւոր ու գործածելի առարկաներ, նմանապէս ինչպէս՝ կատարելագործուած արուեստանոցներու մէջ մէկ առարկան աւելի լաւ է շինվում ու գործվում քան թէ հասարակ արհեստով պատրաստածը: Այսպիսով մէկ կողմից երեխաները գործանաւորապէս կը ծանօթանան աչն առարկաներու պատրաստելու հետ, որոնք նոցա կեանքի մէջ ամեն տեղ պատահում են և որոնցը նոքա գործ են ածում և որոնք կազմում են բնական գիտութեան խօսակցութեան նիւթ, մանաւանդ վերջին դասատան մէջ, և միւս կողմից՝ երեխաները ծանօթանալով աչ տեսակ գործողութեանց հետ, կարող են ստանալ ճաշակ գէպի նոցա, ստանալ ցանկութիւն նուիրել իւանցը ապագայումը և աչդ տեսակ պարապմանցը:

Երեխանցը տանելու է նմանապէս աչնպիսի տեղեր, եթէ 'ի հարկէ տքա գտնվում են աչն քաղաքի մէջ, որտեղ լինին ժողովարաններ թէ բնական թէ ուրիշ գիտութիւններուն վերաբերեալ առարկաներու կամ թէ ուրիշ արժանաչիչատակ հիմնադրութիւններ: 'ի հարկէ, որ աչդպիսի տեղերու աչցելութիւնը չպիտի լինի թիկ հետաքրքրութեան նպատակով, աչ որ աչդ աչցելութիւնով երեխաները ուսումնասիրեն ու մերձաւորապէս ծանօթանան աչն տեղ եղած առարկաներու հետ, որոնցը նոքա, կարելի է, ուրիշ տեղ տեսնելու միջոց չունենան:

Վերջապէս երեխաներուն կարելի է իրան ուսումնարանի մէջ զանազան փորձեր անել տալ ամենահասարակ միջոցներով և գործիքներով մէկ քանի բնութեան օրէնքները նոցա համար պարզելու, գործիքնակ, մեքենաբանութեան, ջրմուտեան, ջրի, լուսոյ և առաձգական զօրութեան երեւոյթներու վերայ: Եւ յետ

տոյ աչն ամենը, ինչ որ երեխաները փոքրիկ փորձե-
րով իմացան ուսումնարանում — նոցա գործածու-
թիւնը աւելի մեծ ու ընդարձակուած ձեով ցոյց տալ
գրօսանքի ժամանակը զանազան շինութիւններու (ճա-
խարակի), ջրաղացներու, սալէրու (անիւ), ջրհորներու
(լճակի, գլանի), վառարաններու (ջերմութեան) վերայ,
պոնարամաններու մէջ (լուսոյ) և այլն, և այլն:

Հարկատր է, որ երեխաները այդ գրօսանքներու
ժամանակը ունենան միշտ իւրեանց Հէտ փոքրիկ տեա-
րակներ, որոնց մէջը թէ գծագրին իրանց տեսած առար-
կաները կամ գործիքները, թէ նշանակին այն թիւերը,
թէ որքան մէկ կամ միւս նիւթից գործ է ածուում
այս կամ այն առարկան շինելու համար և թէ նոցա
պատրաստելու եղանակը և այլն: Թող երեխաները այս
հասակից սովորեն իւրեանց համար աչդպիսի չիշա-
տակարաններ վարելու:

Աշխարհագրութիւն. Մի և նոյն գրօսանքներու մէջ
ծանօթացնել երեխանցը իւրեանց քաղաքի շրջակայք-
ներու հետ, տալով շրջապատող լեռներու, գիւղերու
և զանազան տեղերու անունները, և մեկնելով նոցա
նշանակութիւնը և օգուտը քաղաքի համար՝ ցոյց տալ
երեխանցը, թէ դէպի ուր են տանում քաղաքից զանա-
զան կողմերը դիմած ճամապարհները, պատմելով նոցա
թէ քաղաքի չորս կողմերիցը՝ արեւելքի, արեւմուտքի,
հիւսիսի և հարաւի, որ կողմը գնալով, ո՞ր աշխարհ-
ներ կ'երթանք կամ ո՞ր ծովերուն կը հանդիպենք: Այդ
գրօսանքի ժամանակը երբ որ հանդիպի գետ կամ գե-
տակ, ուսուցիչը ցոյց տալ աշակերտներուն, ինչպէս
կազմվում են ջրի նեղուցներ, ծոցեր, կղզիներ, թերա-
կղզիներ, և այլն. մեկնել զանազան տեսակի կամուրջ-
ներու կանգնեցնելու եղանակը:

Աշխարհագրութիւն. Նմանապէս այդ գրօսանքնե-

րու ժամանակը անցկենալով քաղաքի միջով՝ երեխայի
ուշադրութիւնը դարձցնել հին եկեղեցիներու, հին
շինութիւններու կամ եղած բերդի վերայ, պատմելով
նորան սոցա պատմութիւնները. գնալով քաղաքից
դուրս և բարձրանալով այնպիսի տեղ, որտեղից ամբողջ
քաղաքը կամ նորա մեծ մասը տեսանելի լինէր ծանօ-
թացնել երեխային իւր ամբողջ քաղաքի պատմութեան
հետ, ցոյց տալով, թէ քաղաքը վաղ ինչքան տեղ է
եղել բնում, իսկ այժմ այս կամ այն կողմն է ընդար-
ձակուել, և ինչու համար, դարձցնել երեխաներու ու-
շադրութիւնը հին և նոր շինութիւններու վերայ և բա-
ղաքի մէջ մտած նորոգութիւններու և կառարելադո-
ւութիւններու վերայ, նմանապէս, որտեղ պատահին
հին աւերակներ, պատմել և նոցա պատմութիւնները:
Վերջապէս, որպէս զի երեխայի մէջ դարձնուի երախ-
տագիտութեան և չարդանքի զգացմունք դէպի արժա-
նաւոր անձինների, ցանկանալի է և ծանօթացնել երե-
խանցը այն նշանաւոր մարդկերանց անուններու և
նոցա պատմութեանց հետ, որոնք թէ քաղաքի թէ
աղդի համար օգտակար են եղել իրանց գիտութիւնով,
խելքով, կամ բարի գործքերով և քաջութիւններով:
Հասկանալի է, որ այս գրօսանքներու զբաղմունքի նիւթը
թէպէտ շատ հարուստ, բազմակողմանի և ընդարձակ է,
բայց երեխային ցոյց տուածի, պատմածի և մեկնածի
չափը և ձեւը պիտի չարմարուի նորա հասակին և զար-
գացման աստիճանին:

Բացի այն ամենը, որը չիշեցնեք, գրօսանքներու
զբաղմունքի նիւթ կարող են լինել շատ ուրիշ բա-
նէր, որը այս տեղ աւելորդ է մէկ մէկ նշանակել.
հարկաւոր է միայն, որ այն գրօսանքները ուսուցիչը
վարէ սիրով, և երեխաներու հետ խիստապէս բարե-
կամարար և գրեթէ ընկերաբար վարուելով և շարժե-

լով նոցա հետաքրքրութիւնը—այն ժամանակ երեսան
ինքը կը տայ ուսուցչին խօսակցութեան նիւթ:

Ուսուցիչը զբօսանքից առաջ ինքը պիտի պատ-
րաստուի և որոշէ այն նիւթերը, որով աշակերտները
գլխաւորապէս պիտի աչն օրը պարսպեն և զբօսանքի
ժամանակը յարմարուի զանազան գիտութիւններու
այն նիւթերու հետ, որոնք դասէն տուած կամ դաս
տալու են:

Ի հարկէ ուսուցիչը պիտի ամենեւեւ աշ-
խատէ, որ այն, ինչու վերայ նա խօսելու է դասա-
տան մէջ, երեսան առաջուց տեսական ու գործնա-
կան կերպով տեսնէ ու դիտէ իւրականութեան մէջ:

Կարծեմ աւելորդ չի լինի, թէ ասուի և այն, որ
այդ զբօսանքի ժամանակը թէ քաղաքի մէջ թէ նորա-
նից դուրսը, երեսանները չլինին ստիպուած շարուի
երկու երկու, ինչպէս սովորութիւն է դառած, այլ շը-
ջապատեն ուսուցչին ազատաբար, ինչպէս որդիք իւ-
րեանց ծնողացը:

Հարցն է, թէ այդ զբօսանքներու մէջ ուսում-
նարանի ամենայն դասատան աշակերտները պիտի լի-
նին միասին, թէ ինչպէս:

Այս հարցը վճռելու համար պէտք է քննած նո-
բան, մէկ՝ ուսումնարանի աշակերտներու որքանու-
թեան կողմից, միւսը՝ իսկապէս մանկավարժական տե-
սակէտից:

Ննթադրենք, որ ուսումնարանի ողջ աշակերտ-
ները լինին թուով, ամենեւեւ շատը՝ մօտ 60, ամենեւեւ
քիչը՝ 40: Նաև այդ քառասուն երեսաններու հետ միա-
ժամանակ վարել խօսակցութիւն, այն էլ բաց օդի մէջ,
որտեղ երեսանց ուշադրութիւնը անդադար ցրուած
կը լինի, դժուար է, և լիովին նպատակին համոզ չէ
կարող լինել. միւս կողմից երբ որ ուսումնարանի ողջ

աշակերտները կը լինին միասին, նոցա հետ չէ կարելի
վարել ընդհանուր խօսակցութիւն և նոցա միատեսակ
պարսպանքներ, պատճառ որ նոցա գիտութիւնները և
զարգացման աստիճանները զանազան են: Մէկ որեւիցէ
առարկայի կամ նիւթի այն մեկնութիւնը և բացատ-
րութիւնը, որը հարկաւոր է անել վերջին դասատան
աշակերտի համար, ամենեւեւ անհասկանալի են առաջին
դասատան աշակերտի համար, որը ներկայ գտնուելով
այդ բացատրութեանը, ստիպուած է լսելու ու տես-
նելու այն, որը նա դեռ ուղիղ ըմբռնել չէ կարող,
չլինելով դորա համար նախապատրաստուած, ըստ
որում նորա ներկայ գտնուելը պիտի նորա համար ոչ
թէ օգտակար, այլ ընդհակառակն նաև վնասակար լինի:

Ուրեմն ակնհայտ է, որ այդ զբօսանքի մէջ աշա-
կերտները չպիտի լինին ամենքը իմիասին, այլ բա-
ժանուած:

Ի հարկէ, ամենեւեւ լաւ կ'ըլլինք, եթէ իւրաքան-
չիւր դասատան աշակերտները իւրեանց համար առան-
ձին զբօսանք ունենային, բայց, պատճառ որ դորա
համար ուսումնարանը չէ կարող ունենալ ըստ բաւա-
կանին ուսուցիչներ, հարկաւոր է ողջ աշակերտներուն
բաժանել երկու կարգ (1), այն է առաջին ու երկրորդ դա-
սատունները զբօսացնել ի միասին և երրորդ ու չորրորդ
դասատունները միասին, ի նկատի ունենալով որ այս
երկու կարգերից ամեն մէկի մէջ երեսանները թէ գիտու-
թիւնով թէ զարգացողութիւնով աւելի կամ փոքր մէկ-
մէկու մերձ են:

Իսկ թէ արդեօք այդ երկու կարգերից իւրաքանչիւրին
միեւնոյն ուսուցիչը պիտի զբօսացնէ զանազան ժամա-

1) Ննթադրելով, որ իւրաքանչիւր ուսումնարան պիտի
ունենայ գոնեա երկու ուսուցիչ:

նակ, կամ թէ միեւնոյն ժամանակ մէկ կարգին՝ մէկ ուսուցիչը, և միւս կարգին՝ միւս ուսուցիչը, այդ կախուած կը լինի հանգամանքից և գործնական պարապմունքի դասակարգելից:

Միեւնոյնն էլ պիտի վերաբերուի գիւղական ուսումնարաններու տղայոց զբօսանքներուն:

ԳԻՒԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ:

Այս ուսումնարաններու համար գործնական պարապմանց հարցը աւելի դիւրին է վճռելու, թէպէտ և այստեղ այդ պարապմունքը ընդհանրացնել կարելի չէ, նորա համար որ, դա կախումն ունի տեղի բնական բերմանը թիւնից, տեղական գիւղացիներու պարապմունքից և առհասարակ տեղական պահանջներից: Բայց կազմման այն գիւղերու համար, որտեղ էլ լինին նոքա, բնութեան որ պայմաններու ներքոյ էլ նոքա գտնուին, մէկ ընդհանուր պարապմունք, այն է հողագործութիւն — այսինքն, գիւղացին ամեն տեղ ամենից առաջ է հողագործ, իսկ չետոյ, նայելով տեղական պայմաններուն, նա լինում է աչգեպան, գինեգործ, փայտահար, փայտագործ, ածխագործ, ջաղացպան, քարտաշ, հաւապահ անասնապահ, նա է նաև դանադան գործարաններ քանակաւ՝ օղի, ձէթ, իւղ, սրնիւր, մետաքսի թել և այլն շինելու համար, նմանապէս բամբակից կտուտիկից, մետաքսից և բրթից դանադան մանուածներու, կտուտիկների, շալիկների, գորգերու (խալերու) ու սիւնոցների գործող, որով սակայն մասնագործապէս պարապում են կանայք:

Ահա առհասարակ այն գիւղական դանադան գործողութիւնները, որոնք սպասում են գիւղական երեխային նորա ասպագայ գործունէութեան ասպարէզումը:

Ի հարկ է, այս գործողութիւնները, ոչ ամէնքը, լինում են պարապմունք ամէն գիւղացու համար, այլ, ինչպէս ասինք, նայելով տեղական պահանջներուն, դանադան գիւղականներուն համար դանադան՝ այն է, կան դաշտային տեղեր, ուր կլիմայի ու հողի բարելաւութիւնից, ջրի առատութիւնից, ընդարձակուած է բուն հողագործութիւնը իւր ամեն ճիւղերով. կան անտառաւիտ տեղեր, որտեղ գիւղացիք գլխաւորապէս փայտ կտրելով և փայտագործութիւնով և ածուխ աշրելով են պարապում. խոտաւիտ տեղերումը՝ անասնապահութիւնն է գիւղացիներու գլխաւոր պարապմունքը. վերջապէս կան տեղեր, որտեղ գտնվում են շինութեան համար գործածելի պինդ քարեր, այնտեղ գիւղացիք են և քարտաշներ: Ուրեմն երեխանց ասպագայ գործունէութիւնը կախուած է այն տեղերիցը, որոնց բնակիչներ են երեխաները ըստ որում նոցա պատրաստուելը ուսումնարանի մէջ իւրեանց ասպագայ դերերու համար պէտք է յարմարուի գլխաւորապէս տեղական այդ պահանջներուն ու հանգամանքներուն. ուրեմն և ծխական ուսումնարանի մէջ գործնական պարապմունքը պիտի համապատասխանէ այդ պահանջմունքներուն և պետոյքներուն, որոնց մէջը, կրկնում եմ, բուն հողագործութիւնը ընդհանուր պարապմունք է կազմում գիւղացու համար ամեն տեսակ տեղերումը:

Բայց յառաջ քան անուանելը, թէ այդ գործնական պարապմունքները ուսումնարանի մէջ իսկապէս որոնք պիտի լինին, քննենք, թէ այն գիւղական գանադան գործողութեանց մէջ ի՞նչ դեր են խաղում երեխաները այն հասակումը, որը ունին ուսումնարանի աշակերտները, և թէ այն երեխաները մնային տանը և չգնային ուսումնարան:

Վերջիշեալ գիւղական գործողութիւնները ըստ

մեծի մասին լինելով ծանր աշխատանքներ, պահանջում են զօրեղ ուժեր, վասնորոյ նոցա կատարողները են հասակ առած գիւղացիք. իսկ երեխաները (9 տարեկան հասակից մինչև 14 տարեկանը) սովորաբար աչգեործողութեանց մէջ խաղում են ամենատարբեր դերեր և օգնում են ծնողացր, կատարելով նոցա մանր ու թեթեւ չանձնարարութիւնները: Այսպիսով երեխաները կատարում են փոքրիկ սպասաւորներու պաշտօն: Բայց ինչքան էլ աննշան լինին երեխանց արածները, այնուամենայնիւ շատ նշանաւոր են նոքա: Այն փոքրիկ գործողութիւններով երեխան, մէկ կողմից, սովորելով փոքր առ փոքր շինական զանազան պարագայմանց, պատրաստում է իրան ապագայումը ինքնուրոյն մշակող դասնալու, և միւս կողմից՝ երեխայի մէջ բացուում են ու փոքր առ փոքր զօրանում ու հաստատվում են սիրոյ ու որդիական զգացմունքը դէպ'ի ծնողքը, գէպի ընտանիքը ու առհասարակ դէպ'ի ամենայն աշխատողը. երեխան սովորում է ճանաչել ու կատարել իւր պարտաւորութիւնները ու հոգացողութիւն ունենալ այն ամենայն իրաց վերայ, որոնք կազմում են նորա ծնողաց, ուրեմն մասամբ և իւր սեպհախանութիւնը, և այսպիսով հաստատվում է երեխայի և նորա ծնողաց և առհասարակ ընտանիքի մէջ սիրոյ և բարոյական կապը, որ է, ընտանիքի բախտաւորութեան և գիւղացու բարեկաւութեան ու յաջողութեան հիմն:

Աւելի չափաւորապէս բացատրելու ասածս, հետեւենք երեխայի արածին նորա գիւղական կեանքումը:

Տես, ինչպէս շտապով վազում է երեխան, ջնաշելով նորա այրող կէսօրուան արեւին, իւր հոգնած հօրը ու մշակներու համար տանից կերակուր տանելու:

Տես այն կրակոտ աչքերը ու վառուն երեխայի հայեցումաժը, որով նա, ժամերով նստած անդի ա-

փին, նայում է հօր ծանր աշխատանքին և դիտողապէս ուսումնասիրում է արօրի գործողութիւնը, եղներու շրջելու ձևերու ու մշակած հողի յատկութեան մանրամասնութիւնները, և տեսնելով, ինչպէս քրտնքի մէջ դըրում, հալից ընկած իւր ծնողը չետին ախօսի վարելը վերջանալու վերայ է, նա՝ սրտացաւ որդին՝ վազում է իւր հօր դէմ և ցանկանալով իւր կարողութեան չափով օգնական լինելու նորան և նորան միջոց տալու շուտով հանգստանալու, շտապով ինքը աղատում է լուծից նմանապէս հոգնած անասունը, և ցաւակցելով իւր ծրնողքի գրութեանը և չհեռացնելով նորանից իւր ցաւով լիք ու սիրալիալիաք դէմքը, կարծես ասել է ուզում՝ «հանգստացիր, իմ հայրիկ, կը օգնէի ես քեզ, բայց դեռ անդոր եմ, անչ, երբ կը մեծանամ, այն ժամանակ քո նեղութիւնը ես չանձն կառնեմ, այն ժամանակ ես կը թեթեւացնեմ քո աշխատանքը:»

Տես, այն սրտադին վարուիլը անասնոց հետ, որոնցը երեխան լուծից աղատում է ու նոցա գուրդուրելով ու փաղակշելով վարում է խոտաւէտ տեղերը արածելու. տես, ինչ հոգատարութեամբ նա նոցա երեկոցան քշում է տուն, նոցա լուանում ու խտակում է, ու ախորումը տեղաւորելուց չետեչ, նոցա առջևը կերակուր է թափում: Ի՞նչն է երեխային այս ամէնը այսպիսի սիրով ու յօժար կամքով անել տալիս, եթէ ոչ այն երախտագիտութեան զգացմունքը դէպ'ի այն անբան կենդանիքը այն ամենայն ծառայութեանց և օգտի համար, որ նոքա տալիս են գիւղացուն:

Տեսնում ենք ուրիշ տեղ, ինչպէս միկնոյն գիւղական երեխան սրտանց ու հոգատարութեամբ արածել է տալիս փոքրիկ որթերուն: Արդե՞ք նա չէ տեսնում նոցա մէջ այն ապագայ իրան հարկաւոր ուժերը, որոնցը նա ինքը պիտի բանացնէ, որով նա ինքը պիտի

մշակէ Հողը և կատարէ իւր գիւղական գործողութիւնները:

Միեւնոյն կերպով մասնակցում է երեխան իւր հասակին յարմար օգնականութեամբ գիւղացուն նորա և միւս ամենապէս տեսակ գործողութիւններուն:

Ահա երեխանց այս պարտաւորութիւնները, ոոցա այս գործողութիւնները և ոոցա նշանակողութիւնը պիտի ՚ի նկատի ունենալ գիւղական ուսումնարաններու մէջ գործնական պարապմունք հաստատելուց, որպէս զի երեխան աշակերտելով ուսումնարանի մէջ, ուրեմն զբոկուելով իւր գիւղական պարտաւորութիւնները կատարելուց, չը օտարանայ այդ պարապմունքներուն, և նորա մէջ չթօլլանան ու չսառնին նորա գէպի իւր ծնողքը և գէպի այն ամենը, որը նորան շրջապատում է գիւղական կեանքի մէջ, ունեցած աշխուղոյն զգացմունքները:

Բայց, բաւական չէ այս, ուսումնարանը պիտի երեխային աւելի տայ, քան թէ ինչ որ նա կը ստանար այնտեղ չմտնելով: Այն գործողութիւնները, որոնքը նա մնալով տանը փոքր առ փոքր տեսական կերպով միայն ուսանում է, այն բարոյական սկզբունքները ու զգացմունքը, որոնք նորա մէջ բնականաբար ու անպիտակցաբար ներգործում են, ուսումնարանը պիտի նորա մէջ զարգացնի ու հաստատէ համալիչ կերպով, գիտակցապէս և հարստացնելով նորա հասկացողութիւնը, նորա միտքը և սիրտը այնպիսի գիտելիքներով ու բարոյական սկզբունքներով, որոնքը նա ոչ իւր ծնողքից ոչ իւր շրջակայութիւնից ստանալ չէ կարող: Ուսումնարանը պիտի երեխային՝ ապագայ գիւղացուն՝ միջոց տայ ուսանելու և այն զանազան արհեստներու գլխաւոր սկզբունքները, որոնք ամեն գիւղացու համար հարկաւոր են նորա ամենապիտան հարկաւորութիւնները և

պետոյքները բաւականացնելու համար, առանց որպիսի գիտութեանց նա զգում է մեծ նեղութիւն ու կարօտութիւն, և հէնց այս արհեստները շարունակուցն է, որ նորա բնակտրամները շինվում են անկանոն ձևով ու վատ, նորա գործիքները են ծուռ ու դժուար գործածելի, նորա անօթիները ու տնտեսութեան պարագաներ են թերի ու անկատար, և որ այս գիտելիքներից զուրկ լինելով, գիւղացին շատ վնասներ է կրում ու չէ կարող չառաջադէմ լինիլ թէ իւր կացութեան, թէ իւր գործունէութեանց մէջ:

Ուրեմն, համաձայն սուրան պիտի կարգադրուին ու հաստատուին ուսումնարանի գործնական պարապմունքները, որոնք լինելու են՝

ա) Ամէնից առաջ ղեկավար, որոյ գլխաւոր նպատակը պիտի լինի բնակեցանել երեխանցը գիւղական ամեն տեսակ արարողութիւններու հետ:

Սորա համար թող ուսուցիչը չաճախակի տանէ երեխանցը անդը, վարացանքի ժամանակները, ծանօթացնէ նոցա հողագործական զանազան գործիքներու հետ, պատմելով նոցա այն գործիքներու ամեն մէկ մասի նշանակողութիւնը, ու վերստին նստած անդիսփին, մի և նոյն կերպով, ինչպէս չիցուեցաւ վերեւմը, նոցա գիտել տայ գիւղացու մշակութեան վերայ, մեկնէ նոցա գործողութիւններու պատճառները և հետեւանքը, գիտութեան օրէնքներով բացատրէ հողի արօրելու նպատակը, պատմելով նոցա զանազան հողերու չատկութիւնները, մեկնէ գետինը ջրելու հարկաւորութիւնը, հողի պարարտացնելու զանազան եղանակները և օգուտը: Թող ուսուցիչը համեմատէ տեղական գործողութիւնները ուրիշ տեղերում և լուսաւորեալ երկիրներումը եղած կատարելագործեալ գործողութիւններու հետ: Եւ որպէս զի գիւղական երեխաները՝ իբրեւ ու-

սումնարանի աշակերտ՝ չհամարեն իրանցը բաժանուած գիւղական կեանքից և իբր աղատուած իւրեանց որդիական պարտաւորութիւններէց, թիւ աչգ ժամանակ և հասցենն նոքա իւրեանց օգնութիւնը մշակող գիւղացուն թէ եղները լծելումը, թէ նոցա լուծից բաց թողնելումը, թէ նորա միւս հարկաւորութիւնները կատարելումը:

Մի և նոյն կերպով պարապացնել երեխանցը, տանելով նոցա միւս անդամները անդը, գետինը ցանելու կամ տափելու, հունձի կամ կալ կատելու ժամանակը, որտեղ երեխաները իւրեանք կարող են, իւրեանց հասակին համեմատ, օգնական լինել մեծահասակ գիւղացիներուն աչգ գործողութիւններու կատարելուց:

Ծանօթացնել երեխանցը ուրիշ երկիրներումը գործածած կամնասալի, տափանի, արօրի զանազան տեսակներու ու մեքենաներու միջոցով ցանելու, հնձելու ու կատելու հետ:

Ցանել երեխանցը և ջաղացները, մանրամասնաբար մեկնելով նոցա ամեն մասերու նշանակութիւնը: Ուրիշ անգամներ ուղղել զբօսանքները, դէպք աչգիները և բանջարանոցներ (բօստան), և աչտեղ ուրիշ գտնուելով աչգեպանութեան զանազան գործողութիւններուն, պատմել երեխանցը նոցա նշանակութիւնները և նոցա բարեւաւացնելու ձեւերը:

Միւս անգամները տանել երեխանցը անտառները մերձաւորապէս ծանօթացնելու նոցա ծառերու զանազան տեսակներու հետ, ցոյց տալով նոցա կեղևի, տերևներու արտաքին չափութիւնները և ձևերը և ուտելու զառաւարդութեանց և ծառերու ձևակերպութեանց մէջ եղած զանազանութիւնները, մեկնելու անտառի նշանակութիւնը, հարկաւորութիւնը և օգուտը. ինչպէս ջրերու առատացնելու ու հողը բարեբեր շինելու:

աչնպէս և օգը մաքրելու կողմանէ. անտառի պտուղներու գործածութիւնը. աչնպէս աչն տեղերը, որտեղ աչրում են անուխ կամ կարում են փայտ, մեկնելով աչգ գործողութիւնները, սոցա պակասութիւնները և սոցա կատարելագործած միջոցները ուրիշ երկրներումը:

Միւս անգամները զբօսանքները դիմել դէպք գիւղական միւս գործարանները. դարձնել երեխանց ուշադրութիւնը գիւղական ճանապարհներու, առուներու, ջրմուղներու ու ջրանցքներու վերայ, մեկնելով երեխանցը սոցա հարկաւորութիւնները և սոցա լաւագոյն շինելու ձեւերը:

Մի հարկէ որ աչս զբօսանքներու մէջ երեխանց տեսածի միկնութիւնները հիմնուած կը լինին բնագիտութեան աչն օրէնքներու վերայ, որը նոքա դաստան մէջ ուսանում են, ուրեմն կը լինին երեխանցը դաստուած գիտութիւններու գործնականապէս վերաբերութիւնները:

Բացի աչս բուն գիւղական պարապմանց և գիւղական կեանքին վերաբերեալ գործողութիւնները, առարկաները և շինուածքները, զբօսանքներու պարապման նիւթ պիտի լինին և աչն առարկաները և երեւոյթները, որոնք Բնական Պատմութեան, Աշխարհագրութեան և Աղգային Պատմութեան դասատուութիւններու նիւթ են կաղմում, ինչպէս քաղաքային սումնարաններու համար մանրամասնաբար վերադրած է, ի հարկէ ի նկատի ունենալով տեղական հանգամանքները և պահանջմունքները:

Աչս զբօսանքներու ժամանակը երեխանց առանձին ուշադրութիւնը պիտի դարձրած մանաւանդ օղբերոյթարնական երեւոյթներու վերայ, աչն է, պէտք է երեխային շատ դիտել տալ երկնքի դուրթիւնը, ամ-

պերու ձևերը, նոցա շարժումը և հոդերու ուղղու-
թիւնը, որոնք իւրաքանչիւր տեղի համար ունին որոշ
բնաւորութիւն ու որոշ հետեւանքներ և որոնցով
պայմանաւորվում է տեղական եղանակի փոփոխուելը,
և որոնց գիտենալը շատ նշանաւոր ու հարկաւոր է
գիւղացու համար: Նմանապէս ամենանշանաւոր տեղ
պիտի բռնէ բնութեան վերայ ունեցած խօսակցու-
թեան մէջ անտառի հարցը, և ամենապարզ ու հա-
մողիչ եղանակով պիտի հասկացուի գիւղացուն անտա-
ռի պահպանելու ու նորան խնայելու հարկաւորութիւնը
ու նորանից ստացած օգուտը և անտառի ցա-
նելու և բազմացնելու հարկաւորութիւնը ոչն տեղե-
րումը, որտեղ նոքա չկան:

Վերջապէս այս զբօսանքներու շահաւէտ լինելը
և նորանումն է, որ դոցա ժամանակը ուսումնարանի
աշակերտներուն կարող են չարակցել և գիւղական միւս
երեխաները, նաև աւելի հասակաւոր երիտասարդներ,
որոնք մասնակից կարող են լինել ուսուցչի վարած խօ-
սակցութիւններուն:

բ. Որպէս զի երեխաները ոչ միայն տեսողական ու
խմբակի կերպով ծանօթանան գիւղական աւարտ-
դութեանց հետ, այլ և երեխուց սովորեն կրթելու ու
բանացնելու իւրեանց մարմնական ոյժը ապագայ պա-
րապմանց համար, հարկաւոր է, որ իւրաքանչիւր գիւ-
ղական ուսումնարանը ունենայ իւր մօտ մէկ կամ եր-
կու օրուան վարելու հող, որը երեխաները իւրենք պիտի
մշակեն, որտեղ իւրեանք պիտի ցանեն զանազան թէ
տեղական բանջարեղէներ, թէ փորձեն ցանելու այնպիսի
նորիւնաչեղէն ու բոյսեր, որոնցը օգտակարապէս մտց-
նել կարելի է կը լինէր գործածութեան համար, փորձե-
ր անեն հողի զանազան տեսակ պարարտացնելու վերայ,
տնկեն ծառեր, ուսանին նոցա զանազան կերպի պա-

տուստելը, սարգեն ծաղկոցներ, և սովորեն աւուներ
շինել ու հողը ջրել, և այդ հողի վերայ իւրաքանչիւր
երեխայ ունենալով իւր բաժինը և ինքնուրոյն նորան
մշակելով, կարող է ինքը տեսնել իւր աշխատութեան
հետեւանքը:

գ. Պիտի գործ դնուին և այն արուեստներու
սկզբունքները մէկ քանիսը, որոնք նշանակուած են
քաղաքացին ուսումնարաններու համար, և որով և
գիւղական երեխան կարող է բաւականացնել իւր ամե-
նակարեւոր հարկաւորութիւնները, — այն է թեթիւ կար
ու կարկատանք անելը իւր հագուստի ու ոտնամանի,
սօսինձով կպցնելը, փայտ կտրելը և ողորկելը — աւհա-
սարակ ողորկի, պտուտակի և խարտոցի բանացնելը, զա-
նազան երկաթի գործիքներու սրելը և նոցա մաք-
րելը, քարտագործութիւն, դանազան տեսակ կողովիւ-
րու, դամբիւղներու, ու քթոցներու հիւսելը, աւելաց-
նելով դոցա վերայ թեթիւ հիւսնութեան և դարբնու-
թեան գործողութիւնները, որոնք հարկաւոր են գիւ-
ղացու համար նորա երկրագործական գործիքները,
սայլերը և մանաւանդ անիւները օրինաւոր կերպով
շինելու, կարկատելու ու զանազան շինուածքները
աւելի կանոնաւոր կերպով կանգնեցնելու համար, որին
շատ կը նպաստէ և

դ. Գծադրութեան գիտելիքը, որը նմանապէս և
այստեղ պիտի գործադրուի այնքան, ինչքան գիւղա-
ցուն հարկաւոր է:

ե. Նմանապէս պարսպացնել երեխանցը գործ-
նակնապէս ամենահատարակ երկրաչափական գործու-
թիւններով, որոնք գիւղացուն շատ հարկաւոր են
մանաւանդ նորա հողերը ուղիղ չափելու, իւր խօտի,
հունձի ու ուրիշ բերքերու որքանութիւնը ստոյգ ի-
մանալու համար, նմանապէս նորա շինուածքները ու
սայլերը շինելու ժամանակը:

դ. Բացի այս պարապմունքները, որոնք պիտի ընդհանուր լինին ամենայն ծխական ուսումնարաններու համար, դործնական պարապմունքի առարկայ, նաշելով տեղական դետնի բերքերուն, հանգամանքներուն ու պահանջներուն, պիտի լինին՝

Անտառաւէտ տեղերումը՝ փայտից զանազան ափսիներ, (ջամ, դաւաթ, դրգալ, թարախ, տախառ և այլն), զանազան գործիքներ (թի, կոթեր, անիւներ և այլն) շինելը:

Լուսաւորեալ երկերներումը գիւղերու անթիւ բաղմութիւններ պարապում են սորանով և ապահովացնում են իւրեանց բարօրութիւնը, այն ինչ մեր անտառները անօգուտ լիթում են կամ անխնայաբար ու անողորմ կերպով կտրվում են այլելու կամ անասունները կերակրելու համար:

Այն գիւղերումը, որտեղ կան զանազան շինութիւններու կամ ուրիշ հարկաւորութիւններու համար դործածելի ամուր քարեր, երեխաները թող ծանօթանան և քարտաշութեան սկզբունքներու հետ:

Մէկ խօսքով իւրաքանչիւր ուսումնարանի մէջ մտցնելու են այնպիսի մի քանի դործնական պարապմունք, որոնք նախադրեալն ու կանոնաւոր սկզբունք կարողանան լինել այն ապագայ դործունէութեանց, որով տեղական ժողովուրդը պարապում է կամ շահաւէտ կերպով պարապել կարող է:

Առհասարակ այս տեսակի դործնական պարապմունքներու նպատակը պիտի լինի՝ ուշադրութիւն դարձնել տեղական բնական ամենայն տեսակ բերքերու վերայ, լինին այն բերքերը կենդանական, բուսական թէ համաքային, և աշխատել այդ բերքերը արդիւնաւոր կերպով դործածել, մշակել ու արուեստադործել, ու այսպիսով յառաջ տանել տեղական արդիւնաբերութիւնը:

Այս դործնական պարապմունքները, նաշելով նոյն տեսակներուն և տեղական կլիմային, կարող են կատարուել և դրսումը, բաց օդի մէջ, կամ ծածկոցի տակը, կամ իրան դաստան մէջ, կամ կարելի է հարկաւոր լինի դոցա համար նաև առանձին սենեակ ունենալ ուսումնարանի կողքին:

Վերոյիշեալ ամենայն տեսակի դործնական պարապմունքները, որոնք լինելու են ամէն օր ճաշից յետները, պէտք է այնպէս կարգադրուին, որ նոքա վերջնական այն ժամանակը, երբ որ սկսվում է գիւղի մէջ երեկոյեան գիւղական շարժումը—երբ որ յանդերձ վերադառնում են գիւղացիները ու մշակները ու աշխատող անասունը, երբ որ մտնում է գիւղը նախըր: Թող այդ ժամանակը ուսուցիչը ամբողջ աշակերտներով գնայ նոցա յանդիպելու. թող աշակերտները խառնուելով միւս երեխանց, գիւղացիներու ու կանանց հետ, գնան դէմ իւրեանց հոգնած ծնողաց օգնութիւն հասցնելու, ընդունին նախըր իւրաքանչիւրը իւր եղը, կովը, դոմէշը, որթը, ձին ու էշը, լուսնան նոցա գիւղի աղբիւրի կամ գետակի ջրով, քշեն անասունը իւրեանց ախորը ու ձեռնամուկ լինին իւրեանց գիւղական փոքրիկ պարտաւորութիւններուն և հասցնեն իւրեանց տանը իւրեանց երեխայական օգնութիւնները: Սորանով նոքա կը շարունակեն իւրեանց դործնական պարապմունքը, որով և կ'սկսեն յետագայ օրը, կատարելով այս իւրեանց երեխայական պարտաւորութիւնները առաւօտը, վաղ, տանը, միջև ուսումնարանի դպր:

Այսպիսով երեխաները, չնայելով որ աշակերտում են ուսումնարանումը, չեն բաժանուի իւրեանց գիւղական կիսաբնիկ ու պարտաւորութիւններից, և նոյն մէկ քանի ժամ ուսումնարանումը անցկացնելը չէ

Թէ կ'ընեն նոցա ծնողացը և սոքա իրանցը զրկուած կ'համարեն իւրեանց որդիներանցից, այլ ընդհակառակն, տեսնելով ըստաշատապէս իւրեանց որդիներանց ուսումնարանից ստացած օգուտը ու ուսման բարեհետեանքը, կ'աշխատեն, որ իւրեանց ամէն երեխան մասնակցի ուսման և գնաց ուսումնարան աշակերտելու: Այսպիսով ուսումնարանը և գիւղը կը կազմեն մի մարմին, մի հոգի. նոցա մէջ կը հաստատուի ամուր կապ, և եթէ ուսումնարանի հոգը կը լինի ամենայն կերպով օգտակար լինել գիւղացուն, նմանապէս գիւղացու հոգը կը լինի ուսումնարանի ամենայն նիւթական պիտոյքները ու պահանջները բաւականացնել, և այսպիսով ուսումնարանը տարեց տարի կը զօռանայ ու նորա գոյութիւնը ապահովացրած կարող է համարուիլ:

Բացի այս՝ ուսումնարանը ժամանակով կարող է գիւղի մէջ և ուրիշ նշանաւոր դեր խաղալ, այն է, նա կարող է դառնալ միջնորդ գիտութեան ու գիւղացիներու մէջ. ուսումնարանի մէջ փոքր առ փոքր կարող է կազմուիլ ժողովարան գանազան կատարելագործուած գործիքներու ու անօթներու, որոնց հետ գիւղական ուսուցիչը փորձնարար կը ծանօթացնէ գիւղացիներուն, և այսպիսով ուսումնարանը կը դառնայ նաև երկրագործական փորձնական լըկան: Գիւղական ուսուցիչն կը գիմեն դանազան խորհուրդներու համար ինքեանք գիւղացիները, որոնց համար ուսուցիչը կարող է միջնորդել դանազան երկրագործական ընկերութեանց ու հիմնադրութեանց առաջ և նոցա համար բերել տալ ընտիր սերմեր, ծառեր ու գործիքներ, և այսպիսով գիւղական ուսուցիչը կը դառնայ միևնոյն ժամանակ իրան գիւղացու կրթիչ և ամբողջ գիւղի բաւական ու հոգատար, և չկայ տարակոյտ, որ այս իւր

բարեւ աղջեցութիւնով նա կուենայ ուղղաւորիչ ներգործութիւն նաև գիւղացիներու բարոյականութեան վերայ: Սորանով գիւղական ուսուցիչը կը հասնի իւր ցանկացած նպատակին և կ'ստանայ իւր ամենաբարձր ու իսկական նշանակութիւնը:

Վերջապէս ուսումնարանի մէջ ժամանակով կը կազմուին տեղական բնակիչներու աշխատանքի, ամենայն տեսակ արդիւնաբերութեանց և բնական բերքերու՝ այն է, կենդանեաց, բոյսերու և հանքերու՝ կատարելա ժողովածուներ, որոնց կը պատրաստեն փոքր առ փոքր իրանք թէ աշակերտները, թէ ուսուցիչները, մանաւանդ ամեն անգամ իւրեանց հետ զբօսանքներէց բերելով ժողոված առարկաները: Նմանապէս շատ հեշտութեամբ կարող են ժամանակաւ ուսումնարանումը կատարուել և օգերեւոյթաբնական երևոյթներու պիտոյութիւններ:

Այսպիսով իւրաքանչիւր ծխական ուսումնարան կարող է ժամանակով ունենալ իւր սեպհական մուտքան ¹⁾, որոյ օգուտը նաև իւրեանց աշակերտներու համար շատ նշանաւոր է, դառնալ օթերեւոյթաբնական լըկան, և այսպիսով ուսումնարանները կը դառնան տեղական ժողովրդեան կեանքի և նորա գործունէութեան յառաջադիմութեան ատիճանի և տեղական բնական բերքերու, ներկայացուցիչներ, ուսման թանգարաններ, և կարժանանան նաև հասարակութեան բարձրագոյն դասերու ու գիտնականներու ուշադրութեան, համակրութեան, նաև օգնականութեան օրէնց միջոցներով:

¹⁾ Музей, musée

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ:

Գործնական պարապմունքը և այստեղ պիտի ամենանշանաւոր տեղը բռնէ, միայն իրական տեղը ընտանեկան պարապմունքներուն յարմարեցնելով, տարբեր պիտի լինի տղայոց գործնական պարապմունքներն:

Բայց, առաջ քան թէ այս պարապմունքը որոշելը, պէտք է վերստին աչքի տուա՞նք ունենալ այն հարկաւորութիւնները և այն պահանջները, որոնցը պէտք ունի հասարակութեան այն շրջանը, որն դուստրները աշակերտելու են ծխական ուսումնարաններու մէջ:

Ենթադրելով այդ շրջանը մերձաւոր քննութեան, կը տեսնենք, որ նորան հարկաւոր է բաժանել երկու գլխաւոր դասակարգեր: Առաջին դասակարգին կը պատկանին այն ամենակարեւոր ու աղքատ ընտանիքները, որտեղ կամ վաստակող տղամարդ չկայ, կամ եթէ էլ լինի, նորա անգործութիւնից կամ ուրիշ պատճառներից, նորա վաստակածը չնչին է, համեմատելով ապուստի պահանջներու հետ. վաստակող ընտանեաց միւս անդամները, նմանապէս և աղքատները, ստիպուած են իրանք հոգալ տան ամեն հարկաւորութիւններու համար և իւրեանց ձեռագործութիւնով ու անձնական աշխատանքով վաստակել իւրեանց ապրուստի միջոցները, նաև տանիցը դուրսը, մտնելով ունեւորներու տուն կամ գործարաններ՝ դպեակի, լուացքարարի, տնտեսուհու և կարարի պաշտօնով:

Երկրորդ դասակարգը պարունակում է իւր մէջ այն ընտանիքները, որոնք թէպէտ փոքր ինչ ունեւոր են, բայց նոցա անդամները վերստին ստիպուած են իւրեանց ձեռագործութիւնով ու աշխատանքով թեթե-

ւացնել տան ծախսը և լրացնել տան պահանջներու պահարը:

Ուրեմն նաշելով, թէ մէկ թաղի ծխ. ուսումնարանի մէջ այդ երկու դասակարգներու աղջկերանցից որոնք են կաղմում մեծամասնութիւն, նոցա յարմար էլ պիտի նշանակուին գործնական պարապմունքները:

Սոքա պիտի լինին՝ առաջին դասակարգի համար՝

Ա. Լուացք անելը, նաշիչ տալը, ողորկելը, զանկապան (գուլբալ) և հասարակ ձեռնոցներ գործելը, շորեղէններու վերայ նշաններ դնելը, բիծեր հանելը, ասեղնագործութիւն, կար, սպիտակեղէններու ու հասարակ կանացի հագուստի ձեւեր, հասարակ գլխարկներու կարելը և սովորել նաև կարի մէքենան բանացնելը: Կը լինին տեղեր, որտեղ հարկաւոր կը լինի և մէտաքիչ, կամ բլթէ թեթեւ մաները:

Բ. Տնային տնտեսութեան վերաբերեալ մէկ քանի գործողութիւններու հետ փորձնաբար ծանօթանալը, այն է ճանաչել տնտեսութեան մէջ գործածած առարկաներու լաւ ու վատ լինելը, փորձով տեսնելը ու իմանալը, թէ ինչպէս որեւիցէ փչացած կամ պղտորուած հեղանիւթները կամ ուրիշ առարկաները կարելի է լաւացնել ու մաքրել. ջուր պարզելու զանազան եղանակները. իմանալ զանազան ճոթերու կամ լաթերու ¹⁾ լաւ ու վատ լինելը՝ զանազան տեսակ չափերու, կշիռներու, լամպաչափի, ջերմաչափի, հասարակ խոշորացոյցի ու ժամացոյցի գործածելը:

Գ. Դժադրութիւնից և երկրաչափական գիտութիւնից այն գլխաւոր գիտելիքը, որոնք հարկաւոր են աղջկերանցը սպիտակեղէնը կամ հագուստը ձեւելու, նշանները դնելու ու փոքրիկ նկարներ անելու իւրեանց ձեռագործութիւններու համար:

¹⁾ Matéria étoffe

Գ. Աերջապէս կարելի է, նաեւ հարկաւոր է, աղջկերանցը գործնական կերպով վարժեցնել Ծրեբէլի խաղերով, որով նոքա իրերէ դաշեալ օտար մանուկներու կամ իրերէ կըլծի իւրեանց տանը կրտսեր եղբոր կամ քրոջ, կամ նաեւ ապագայումը իւրեանց սեպհա-կան որդիներանց, կը գործածեն փոքրիկ երեխանցը պարագայներու համար: Ներքոյ բառերէ համար՝

Մեկնոյն պարագայումները հետեւեալ դանապանութիւններով՝

Լուսացը աւելի թիթիկ շրեղէններու ձեռագործութիւններու ու ասեղնագործութիւններու մէջ մըտցնելու է աւելի բազմակողմանի գործողութիւններ, նմանապէս և առաւելութիւն հագուստի ձեւերումը ու գլխարկի կարելումը, աւելացնելու է և արհեստական ծաղիկներու շինելը, որպէսի գլխարկները թէ շահաւէտ կը լինի աղջկերանցը իւր արդիւնաբերութեամբ, թէ նոցա գեղեցկութեան ճաշակի՝¹⁾ կըլծիչը ու աղիւտուցուցիչը կը լինի: Սորա համար եւրոպական ըստ մեծի մասին ամենայն տեսակ օրերորդներու ուսումնարաններու մէջ ընդունուած է այն պարագայումները:

Ինչ որ վերաբերում է զբօսանքներուն, թէպէտ շատ ցանկալի կը լինէր երկու դասակարգերու աղջկերանցն և ետ, մեկնոյն կերպով, ինչպէս տղերանցը, զբօսացնել, բայց պատճառ որ նոցա անդադար մանածելը քաղաքի միջով և քաղաքից դուրս հեռու տանելը, մեր ներկայ հասարակական պայմաններու պատճառով, չարմար չէ, ուրեմն պէտքէ այդ զբօսանքները վերանան և փոխարինուին շրջաններով, որոնք կը նշանակուին շաքարթը մէկ կամ երկու անգամ իրան

ուսումնարանումը, նմանապէս ճաշից յետոյ, որոնց ժամանակը վարչութիւն կամ ուսուցչութիւն կըլարէ աղջկերանց հետ զրոյցներ նոցա դանապան պարտաւորութիւններու ու տնտեսութեան վերայ, կապտմէ նոցա աղջկայ հասակին պատշաճ զանազան բարոյական պատմութիւններ և կկարդայ ընտիր հատուածքներ պատմական, աշխարհագրական, բնագիտական ու դանապան բարոյական նիւթերու վերայ:

Ահա այն պարագայումները և վերէ յիշած գիտութիւնները, որոնք պիտի բաւականացնեն հասարակութեան ստորին և միջին կարգի պահանջները և որոնք մեր աղջկերանց համար պիտի լինին միջոց նոցա ուսումնարանից դուրս գալուց յետոյ իւր ընտանիքին պիտանի ու օգտաւէտ անդամ լինելու, բարոյապէս և մտաւորապէս զարգացած, ջանասէր ու աղին աշխատող դուստր, ու ամբողջումը՝ արժանաւոր կին, հմուտ ամուսնիկն ու քնքոյշ ու խելացի մայր դառնալու:

Հարցնում եմ, այսպիսի աղջիկը, որը սովորել է անդադար աշխատանքին, ուսել է իւր ապրուստը ապահովացնելու միջոցները, որը իւր ընտանեաց ու իւր շրջանի հետ մնացել է պինդ կապուած, ճանաչում է իւր պարտաւորութիւնները և սովորել է նոցա կատարել, որի մէջ բարոյական սկզբունքները ստացել են հաստատ արմատներ, որի մեղքը անդադար պարագած է՝ և որի զգացմունքը տղնուտացած են — չէ՞ արդեօք դանձ իւր ընտանեաց ու հասարակութեան համար և արժանի ամենայն պատուի ու չարգանքի: Ո՞ր արհեստականը, մը վաճառականը իրան համար բախտաւորութիւն չի համարի այդպիսի աղջկան իւր համար կին առնելու. իսկ մինչև ամուսնանալը կարող է արդեօք այդպիսի աղջիկը մի օր մնայ պարագայ ու անգործ, զգայ կարէք և գանգատուի իւր բախտից:

¹⁾ Эстетика esthétique

Թէպէտ միւս կողմից բաղմամարդ ընտանիքին հարկաւոր ապրուստի պահպանութիւնը, կեանքի վատ կողմերը, շրջանի անկրթութիւնը և նաև մոլութիւնները, ժամանակի վատ բերմունքը ու ակնանց հարցի մասին ներկայումս եղած ծուռը ու սխալ հասկացողութիւնը, շատ կարելի է որ ունենան վատ ներգործութիւն աչնպիսի մատաղահասակ աղջկայ վերայ, որը ուսումնարանից դուրս գալուց չետոյ կտկէ իւր գործունէութիւնը կեանքի ծանր ասպարէզի վերայ, բայց 'ի վերոյ ամենայնի, այն բարի հիմունքները, այն զարգացումը և այն աշխատանքի սէրը, որը նա ստացել է, երաշխաւոր կլինին. որ այնպիսի աղջիկը մարտնչի կարող է իւր առաքելութեանց ու արժանաւորութեանց ընդդիմադրութիւններու հետ, և նաև յաղթող կհանդիսանայ նոցա վերայ: Գիցուք թէ, նորա բարի չափութիւններից և պակասին մէկ քանիսը, բայց վերստին մեծ պաշար կմնայ նորա մէջ, որով նա շատ ու շատ կբարձրանայ միւս աղջկերանց վերայ, որոնք նորա նման կրթութիւն ստացան չեն լինի, և վերստին նա մեծ չարգանքի ու պատուի արժանի կլինի: Եւ երբոր աչնպիսի աղջկերանց թիւը կբաղմանայ ու կտարածուի, ոչ արդեօք նոքա իւրեանց կողմից կը սկսեն բարի ներգործութիւն ունենալ ընդհանուրի վերայ և նաև իրանցից աւելի բարձրագոյն աղջկերանց ուղղելու կրթիչ կդառնան, մինչև որ մեր մեջնակարգ ուսումնարանները, որտեղ այս աղջիկերքը իւրեանց ուսումնեն ստանում, կշարունակեն պահպանել իւրեանց նպատակին ներկայ անպատշաճ կարգաւորութիւնը ու ուղղութիւնը:

ԳԻՒՂԱԿԱՆ ՌԻՍՈՒՍԱՐԱՆՆԵՐ ԱՂԶԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ:

Գիւղական աղջկերանց համար գործնական պա-

րապմունքի որոշելը ներկայացնում է միեւնոյն դժուարութիւնը, որը պատճառում է նոցա համար առհասարակ ուսումնարաններու կարգադրելը:

Որ և գիւղական աղջկայ համար պէտք է հոգալ, որ նորան էլ հարկաւոր է ուսում, կրթութիւն ու զարգացում, դրա մէջ չկայ կասկած: Բայց աչքի առաջ ունենալով մեր գիւղական կեանքը, նորա մէջ պահպանուած իստակ ու բարոյական բարքն ու վարքը, և նորա մէջ ունեցած գիւղական աղջկայ և կնոջ սահմանափակուած դերերը, ակամայ մտածողութեան մէջ է ընկնում մարդ, թէ ինչպէս պիտի կարգադրուին այդ ուսումնարանները, ինչպէս կարգուի նոցա մէջ դաստառութիւնը և ինչ պիտի դաս տվուայ, մանաւանդ երբոր ներկայումս մեր գիւղական արական սեռը ինքը է անուսում ու անկրթ, և աչնպիսի մտածողութիւնը նաև կատկածել է տալիս, թէ չկէ այն բարի նպատակի տեղ, որն համար պիտի հիմնուին և գիւղական աղջկերանց համար ուսումնարաններ, սոցա ուղիղ չվարելով, վատ չետեանք ոտացուի, և մտատանջութիւն պատճառէ նոցա հիմնողներուն:

Ուրեմն այս խնդիրը պիտի վճռուի մեծ ուշադրութեամբ ու զգուշութեամբ:

Հաստատ մնալով վերոտին մէր ուղղութեանը, այս դժուար խնդիրը լուծելու համար, վճռենք ամէնից առաջ չետեալ հարցերը՝ ինչ է գիւղական աղջիկը, ինչ է նորա պարտաւորութիւնները նորա աղջիկ եղած ժամանակը, ինչ է գիւղական կինը, և ինչով է զանազանվում գիւղական աղջիկը քաղաքի աղջկանից:

Ամէնից առաջ գիւղական աղջիկը բնութեան որդի է:

Այն ինչ քաղաքային աղջիկը, որքան էլ որ չեաքաշուած ու համեստ ապրում լինի, հանապաղ աղ-

մկալից կեանքի պայմաններու ներգործութեան ներքոյ է դտնվում, որոնք անդադար պղտորում են նորա միտքը ու սիրտը ու վրդովում են նորա հոգին, գիւղական աղջիկը մեծանում է անգորր բնութեան գրկումը ու վայելում է այդ բնական կեանքի բարեկից շնորհքը, և հեռու լինելով քաղաքային աղմուկից, աղատ լինելով նորա միասական ազդեցութիւնից, վարում է հասարակ, խաղաղ ու հանգիստ կեանք:

Այնինչ քաղաքային կեանքի շռայլութիւնը, գունդգուն պահանջները և զուարճութիւնները—որոնցը մասնակցիլը պարտականութիւն է համարում իւր համար քաղաքային աղջիկը, բայց որոնցը համեմու համար չունի նա ոչ բաւական ոյժ, ոչ միջոցներ—անդադար անբաւականութիւն ու անհանգստութիւն են պատճառում նորան, գիւղական աղջկայ ցանկութիւնները ու պահանջները շատ չափաւոր են: Սա իւր հասարակ ու համեստ հագուստով, իւր զուարճութիւնը ու իւր բաւականութիւնը ամենագիւրքին կերպով և յօժարաբար իրան շրջապատող բնութեան մէջն է գտնում: Թռչուններու քաղցրաձայն երգերուն ունկնդիր լինել, դաշտի ծաղիկները ժողովել ու սոցանից փունջեր կամ պտակներ կաղմել—գիւղական աղջկայ համար ամենամեծ զուարճութիւն է. դաշտի վերայ, մերձակայ անտառի մէջ, կամ մեծ ծառի ստուերի տակը իւր հասակակիցներու հետ թռչկոտել, խաղալ ու պար գալ, նստել գետակի կամ կարկաճահոս աղբիւրի մօտ ու նոցա ջրերով խաղալ—նորա գերագոյն բաւականութիւնն է. նստել երեկոցեան ու զմայլել մայր մտնող արեգակով և լուսնի վեր կենալով և իւր նրբաձայն երգերով ներդաշնակել հանգստացող բնութեանը,—նորա ամենամեծ հրճուանքն է:

Ահա այս անմեղ, անշիթ ու անխռով զբաղ-

մունքներն են, որոնք պահպանում են գիւղական աղջկայ միտքը՝ պարզ, նորա սիրտը ու զգացմունքը՝ խտտակ ու նուրբ, նորա հոգին՝ հանգիստ ու խաղաղ: Սեւահայ սորանիցն է, որ երբ նորա անգորրութիւնը և բնութեան մէջ եղած ներդաշնակութիւնը որ և իցէ պատճառով խանգարվում է, լինի այն խանգարողը մէկ անտովոր երեւոյթ կամ մէկ օտար, անձանթ անձն, գիւղական աղջիկը դառնում է վախկոտ, նա իրիոյն փախչում է ու թախ է կենում (թագնում է) նորանից:

Գիւղական աղջկայ այդպիսի վարմունքը քաղաքացին սովորաբար վայրենականութիւն է անուանում: Բայց իրաւի ուղիղ է այդ զրպարտութիւնը: Այն արդեօք այդ վախենալու մէջ չէ պարունակիլում գիւղական աղջկայ անմեղութիւնը ու նորա բարոյականութիւնը: Փախչելով այն օտար մարդուց, չէ արդեօք լսվում այն ձայնը, թէ՛ «դու մի ես, մի մերձեցնալ ինձ, ես քեզ չեմ ճանաչում, դու իրաւունք չունիս այդպէս համարձակ ինձ մօտենալ ու ինձ վերայ նայել. գիտացի՛ր, ես աղջիկ եմ»: Ուրեմն ոչ վայրենականութիւն, այլ վեհանքութիւն, իւր արժանաւորութիւն ճանաչելը, իւր պատիւը պահպանելն է նորան փախչել տալիս օտար մարդու նորա առաջը մօտենալիս:

Գիւղական աղջիկը է տանու որդի՝ իւր մօր ու իւր ծնողաց խոնարհ, հնազանդ ու աշխատող դուստր:

Հէնց մանկութիւնից գիւղական աղջիկը, տեսնելով որ տանը ամէնքը աշխատում են, սովորում է և ինքը աշխատանքին, որը նա կատարում է յօժարաբար և որը վերջապէս դառնում է նորա համար պատրաստութիւն:

Ահա և սորա մէջ վերստին երեւում է գիւղական և քաղաքային աղջիկերանց մէջ եղած զանազանութիւնը—այնինչ վերջիններից միայն պակասաւորները ստիպուած

են աշխատելու և աշխատանքով իրանցը պահպանելու, աշխատանքը հարկաւորութիւն նաեւ պարտաւորութիւն է դառած առաջնիւններից ամէն մէկը համար, առանց խտրութեան, լինի նա պակասաւոր կամ ունեւոր ծնողաց աղջիկ:

Մերձաւորապէս ծանօթանալով գիւղական կեանքի հետ, մենք տեսնում ենք, որ գիւղական աղջկայ աշխատանքը իսկապէս սահմանվում է տան հարկաւորութիւններու կատարելու մէջ, բացի մէկըանի աշխատանքը, որոնք հրաւիրում են աղջկան իւր մօր և միւս երեխանց հետ միասին տանիցը դուրսը, այն է՝ արտերը քաղահանելու¹⁾ (կամ ալա անելու) և մարդկերանիցը օգնելու հունձի կամ կալ կատելու ժամանակը, և շատ տեղի նաեւ աղատ ժամանակ, այգու և բանջարանոցի մէջ աշխատելու:

Նւ այն, գիւղական աղջկայ գործունէութեան առաւելագոյն գլխաւորապէս տունը, բնտանիք է, որտեղ նա իւր մօր աչքի տակը, նորա առաջնորդութեան ներքոյ մեծանում է, իւր գաստիրակութիւնը ու կրթութիւնը ստանում է և սովորում է աշխատանքին:

Հասկանալի է որ այս աշխատանքը չարմարվում է գիւղական աղջկայ զանազան հասակին, և սկսած ամենագիւրն գործողութիւններից հասնում է նա աչի կատարեալ արարողութիւնները, որոնք կարողութիւն են տալիս արդէն հասակ առած աղջկան փոխարինելու իւր մօրը տնտեսութեան ամէն ճիւղերը կատարելուն և երեխանց սննդեւումը և կրթելումը, և հանդիսանալու իբրեւ լինելուրոյն տնտեսուհի և պատրաստուած հարսնացու ու տանտիկին:

Աւելորդ համարելով մի ըստ միօրէ անուանել

¹⁾ Արտերը օտար ու փասակար խտերից խտակելը:

այդ ամէն արարողութիւնները, կարելի է միայն ասել, որ ամէն այս գործողութեանց մէջ աղջիկը ճշտաբար հեռեւում է իւր մօրը և նորան նմանող է լինում: Ուրեմն, ստանալով մօրիցը նորա ամէն բարի կողմերը, աղջիկը սեպհականում է իրան և մօր ունեցած պակասութիւնները:

Այս արժանաւորութիւնները և թերութիւնները իրեն հատկացրած՝ գիւղական աղջիկը վերջապէս դառնում է կին:

Պատկանել ամբողջապէս իւր մարդուն, հոգալ նորա ամենայն նիւթական և հոգեկան պիտոյքներու ու պահանջներու և տան ամենայն պէտք եղած բաներու համար, և պահպանել տան մէջ հարկաւոր կարգը — անհա դիւզական կնոջ կոչումը. և երբ որ նորա այս պարտաւորութիւններու վերայ կաւեւացնենք և մօր պարտաւորութիւնը, որը նա կատարում է ամենայն ճշտութեամբ և խստութեամբ, մենք կ'ստանանք գիւղական կնոջ կատարեալ պատկերը:

Քննելով այժմ գիւղական աղջկայ չիշած զանազան չատիւթիւնները և պարտաւորութիւնները, նոցա մէջ աչի թերութիւնները գտնելու համար, որոնք պէտք ունին ուղղուելու, մենք կարող ենք, չարմարելով այդ թերութիւններուն, որոշել գիւղական աղջկայ համար հարկաւոր եղած ուսանելի աւարկանքները:

Սորա համար ուղեկցենք գիւղական աղջկան նորա սիրած բնութեան մէջ և ունկնդիր լինինք նորա գաղտնի ձայնին, որով արտայայտվում են նորա զգացմունքը և նորա բաւականութիւնը բնութեան բաղմերանգ ներգործութեան ներքոյ գտնուելով:

Նւ թիւ ենք լսում — ըստ մեծի մասին լուռ զմայլելի բնութեան գեղեցկութեամբ: Իսկ երբ որ աղջկայ տեսանելիքի ու լսելիքի վերայ աղդում են սքան-

չեցնող ու հրաշալի երևոյթներ, այն ժամանակ՝ սոքա նորա հասկացողութիւնից վեր լինելով՝ նա սկսում է նոցա մեկնել իւր կերպի, սեպհականացնելով նոցա գերբնական և զարհուրելի չատկութիւններ, որով նա ինքն ընկնում է սնապաշտութեան մէջ—այնպիսի տըկարութիւն, որոյ ցաւալի հետեանքը իմաց է իրան տալիս նայեւ ընտանեաց մէջ և մանուկ սերունդի կըրթելու մէջ:

Սորանից ինքն ըստ ինքեան հետևում է, որ գիւղական աղջկան հարկաւոր է գիտենալ ընադիտութիւն, որը մեկնելով ընտելեան երևոյթները, կպարզէ աղջկայ միտքը, հերքելով նորանից սխալ հասկացողութիւնները, և կոչնչացնէ նորա մէջ բոլորովին սնապաշտութիւնը, և միւս կողմից՝ աղջիկը ծանօթանալով ընտելեան զանազան առարկաներու, նոցա գոյանալու ու շարժողութեանց եղանակի հետ, կստանայ նոցա վերայ ուղիղ հասկացողութիւն, որով նորա մէջ աւելի կըզօրանայ կրօնական հոգին և աւելի կհաստատուի սէր դէպի Աստուած և նորա ստեղծութիւնները:

Մտնենք այժմ աղջկայ հետ նորա ընտելարանը—գիւղացու տուն: Ղորդ է, մենք կտեսնենք այնտեղ նըշանակեալ ատտիճանի բարեկարգութիւն, բայց չենք տեսնի առողջապահութեան պայմանները ամբողջապէս պահպանուած, մանաւանդ ակտիւ մէջ և գիւղականի տան անբնակ մասերու մէջ:

Ահա սորա համար գիւղական աղջիկը պէտք ունի ուրեմն և առողջապահութեան գիտութեան:

Յետեւենք աղջկան այն գործատունը, որտեղ նա իւր մօրից սովորում է տնտեսականութեան վերաբերեալ գործողութիւնները՝ թէ ուտելիքներու (ինչպէս ամէնօր գործածելի, այնպէս էլ տարեկան պաշարը) պատրաստելը, թէ շորեղէնի (լաթերու) ու զանազան

հիւսուածքներու գործելը, կամ զանազան գիւղական արուեստական գործողութիւններ, ինչպէս՝ մետաքսէ ճիճուններ մեծացնելը, թելեր մանելը, դանազան ներկեր պատրաստելը, և այլն: Ձկայ տարակոյս, որ և այնտեղ ընագիտութիւնը պիտի հասցնէ աղջկան իւր օգնականութիւնը, ուսուցանելով նորան ինչպէս հիշած ուտելիքներու գերազանց պատրաստելու հնարքը, այնպէս և նոցա պատրաստելու համար պէտք ածելի անօթներու ու գործիքներու կատարելութիւնը, և չիշած գործողութիւններու բարելաւացնելու եղանակները:

Վերջապէս պատշաճեցնելով ընագիտութիւնը և գիւղական մօր պարտաւորութիւններուն, վերաբերելով նորա յոլութեան և ծննդականութեան ժամանակ, մանաւանդ նորածնին սննդելուն (երես 58-ը), մենք բացայայտապէս ցոյց տուինք ընագիտութեան գիտենալու հարկաւորութիւնը գիւղական աղջկայ համար:

Անցնենք այժմ դէպի գիւղական աղջկայ միւս կարօտութիւնները:

Չնայելով գիւղական աղջկայ պարզամիտ, բարեբարոյ և բարեմիտ լինելուն, այնու ամենայնիւ նորան պակաս է կրօնական ուսումը ու զարգացումը: Ճանաչելով Աստուծոյ էութիւնը և նորա մեծութիւնը ընտելեան հետ մերձաւորապէս ծանօթանալուց, գիւղական աղջիկը՝ իբրեւ հայ՝ պարտական է ծանօթանալ մեր հայոց եկեղեցու ծէսերու, արարողութիւններու և պատմութեան հետ, և աւելի մերձաւորապէս ծանօթանալով մեր Փրկչի կեանքի, նորա ուսումնի ու քարոզներու հետ, նա կզօրացնէ իւր մէջ իւր բարոյական չատկութիւնները, և իբրեւ կրօնապէս կըթուած մայր՝ բարեաղդիչներգործութիւն կուեննայ իւր զաւակներու վերայ:

Միւս կողմից՝ մեր գիւղական աղջիկը, իբրեւ հայ,

Հայոց ազգի անդամ լինելով, պարտական է ճանաչել մեր ազգի պատմութիւնից մեր երեւելի մարդկերանց կեանքը ու նոցա արած նշանաւոր գործքերը, մահաւանդ երեւելի օրիորդներու և կանանց ունեցած երկասիրութիւնը ու երախտեքը մեր ազգի և մեր կեդեցու ամբողջութիւնը պաշտպանելու համար:

Աւելացնելով անուանած գիտութիւններուն և Հայոց Լեզուի կարգաւ ու գրել իմանալը, որով մեջոց կտվուայ աղջկան ինքնին կարգաւ իրան հարկաւոր ու հաճելի գրքեր, և ամենասկզբնական տեղեկութիւններ Թուարանութիւնից (Թուերու գրելը, բազմապատկութեան աղիւտակը, Թուարանական չորս գործողութիւններու խնդիրները բերանացի լուծելը և զանազան չափերու գիտեհալը), որոնք գիւղական աղջկան անշուշտ հարկաւոր են, մենք անուանեցինք այն ամէն գիտութիւնները, որոնք հարկաւոր են գիւղական աղջկան:

Հարցը այժմ նորանումն է, թէ Բնչպէս պիտի այս ուսմանելի առարկաները դաս տվուան գիւղական աղջկերանցը:

Յարմարութեամբ գիւղական աղջկայ յատկութիւններուն և նորա կեանքի պայմաններուն, ակներե է, որ նորան դաս տուողը պիտի լինի օրիորդ կամ կին և ոչ աղամարդ:

Դասատվութեան վերջիշեալ առարկաները, բացի կարգաւ գրելը և մասամբ Թուարանութիւնը, ուսուցչուհին պիտի անցնէ աղջկերանց հետ զբօսանքներու և զրոյցներու մէջ, որոնց ժամանակը ուսուցչուհին կպատմէ աղջկերանցը բնագիտութեան օրէնքները և կմեկնէ բնութեան երեւոյթները ու առարկաներու յատկութիւնները, և կվարէ նոցա հետ զրոյցներ առողջապահութեան, մանկաստութեան, տնտեսութեան և

աղջկերանց զանազան պարտաւորութեանց վերայ, պատմելով նոցա ու կարդալով ընտիր պատմութիւններ մեր աղգային ու սրբազան պատմութիւնից և բարոյական նիւթերու վերայ, և բացատրելով նոցա մեր կեդեցու արարողութիւնները և քրիստոնէութեան ուսումը:

Այն ինչ զբօսանքի ժամանակ գիւղական աղջկերքը պիտի պարապին բաց օդի մէջ՝ բնութեան գրգռումը՝ որի համար գիւղական կեանքը մեծ յարմարութիւն է ներկայացնում, զրոյցները գլխաւորապէս պիտի վարուին Հայոց լեզուի և Թուարանութեան հետ՝ միատին սենեակի մէջ:

Թէ սոցա ուսուցման համար, թէ ընդհանրապէս աղջկերանց կրթութեան համար, առանձին ուսումնարաններ ունենալը — շատ ցանկանալի է, բայց արդեօք ամէն տեղ գիւղաբէքը կարող են կառուցանել և պահպանել երկու առանձին՝ տղերանց և աղջկերանց՝ ուսումնարաններ: Վասնորոյ որտեղ չէ լինելու առանձին ուսումնարաններ աղջկերանց համար, կարելի է բաւականանալ՝ նոցա ժողովելով տղերանց ուսումնարանի մէջ՝ երբ որ տղերքը դասատվութիւնից ազատ և գործնականապէս պարապած կլինին ուսումնարանից դուրսը, այն է ճաշից յետները:

Աւելացնել տղերանց ուսումնարանին մէկքանի սենեակներ աղջկերանց համար — սոցա և տղերանցը միժամանակ դաս տալու — մեր գիւղական աղջկայ համար անհարմար և անվայելուչ է, և եթէ տղայոց ուսումնարանը չէ կարող տալ վերջիշեալ մեջոցը, որով աղջկերքը աղատաբար ու միայնակ կարող են պարապել, այն ժամանակ աւելի յարմար ու օգտաւետ կլինի եթէ ուսուցչուհին ժողովէ աղջկերանցը իւր մօտ կամ մէկ մասնաւոր գիւղացու տանը և այնտեղ վարէ նոցա հետ զրոյցներ մէկ կամ երկու ժամ օրուան մէջ, երբ

որ նորա ազատ կլինին իրեանց ընտանեկան պա-
րապմունքից:

Կարծելով որ գիւղական աղջկեանց Համար ու-
սումնարան կարգադրելու նշանաւոր ու դժուար Հար-
ցը՝ սորա աչս կարճաւատ նախատիպը գծագրելուց յե-
տոյ՝ բաւականացրած պիտի Համարել, մնում է այտ
ուսումնարաններու մէջ ընդունելի գործնական պա-
րապմունքի խնդիրը վճռելու, որին խկապէս նուիրած
է ներկայ Հատուածը:

Իբրոր բացառատուեցաւ, թէ գիւական աղջկան
որ ուսանելի առարկաներ են Հարկաւոր, արդէն գոր-
ծնական պարապմունքի Հարցի վճռելը էլ չէ պատկե-
րացնում դժուարութիւն, և այդ վճիռը շատ կարճ է:

Գիւղական աղջիկը սովորուած չլինելով իւր անձի
ու ընտանիքի ապրուստի Համար Հոգալու, աչսու ա-
մենաչնիւ, սկսած երեխուց տանը անդադար աշխա-
տանքի մէջն է, և աչն գործողութիւնները, որոնք գիւ-
ղական ընտանեկան կեանքին վերաբերում են, նա
ուսանում է յօժարաբար և կատարում է սրտանց:

ԱՀոս գիւղական աղջկայ աչս անդադար տանը
աշխատելը, և նորա գրէթէ ամբողջ ուսումը, որը գըւ-
խաւորապէս կատարվելու է զբօսանքներու ու զրոյց-
ներու մէջ—կաղմում են գիւղական աղջկայ Համար
նորա գործնական պարապմունքը:

Սորանով վերջացնում եմ ես աչս անդամ իմ խոր-
Հոգածութիւնները մեր աղգի ամենաբաղմութիւ մասի
որդկեանցը կրթութեան մասին, և վերջացնելով խօսքս,
ուզում եմ նորեց կրկնել աչն, ինչ որ շատ անգամ չիշած
է, աչն է, որ երեխանցը կրթելուց՝ ամենադիւտա որ ու-
շադրութիւնը պէտք է դարձաւ մանաւանդ նոցա դաս-
տիարակելու վերայ, որի Հարկաւոր լինելը նորանով է
Հաստատվում, որ դաստիարակութիւնը ուղղում է մար-

դու վատ վարքը ու ամբացնում է նորա թոյլ բնաւո-
րութիւնը, որ միայն դաստիարակուածի մէջ ծնվում են
ցանկութիւններ դէպի շքեղը, աչնիւր, ճշմարտը և վե-
րացեալը, որ դաստիարակութեան ծնունդ է բարոյակա-
նութիւնը, որը ամփոփում է իւր մէջ մարդու ամենաըն-
տիր ու վեւմ կողմերը ու յատկութիւնները, որպի-
սիք են՝ աղնուահոգութիւն, մարդու իւր պատիւը
ճանալելը ու ուրիշին յարգելը, սէր դէպի մերձաւորը,
դէպի մարդկութիւնը, դէպի աղգութիւնը, բարոյակա-
նութիւնն է, որ մարդու խելքին ուղիղ ուղղութիւն,
ու ուղղապէս գործել է տալիս. ըստ որում միայն բա-
րոյապէս կրթուածին յատուկ է ըմբռնել ճշմարտու-
թիւնը ու ուղղապէս և կատարելապէս իրան սեպՀա-
կանացնել իւր ուսած դանաղան գիտութիւնները:

Նւ աչսպիտով, երբ որ ժողովուրդը դաստիարա-
կուած է, նորա մէջ թագաւորում է վայելչութիւն և
բարօրութիւն: Գաստիարակուած ժողովուրդից Հեռա-
նում են վատ բարքեր և նոցա տեղը բռնում են աչն-
վութիւն և ճշտութիւն, պահանջներու չափաւորու-
թիւն, գործքերու մէջ արդարութիւն և սէր դէպի կարգի
ու կանօնաւոր աշխատանքը. դաստիարակուած ժողո-
վուրդը ճանաչում է ու պատվում է Հատարական
կարգը, կրօնական պատուէրները և տէրութեան օրէնք-
ները, որոնցը նա Հնադանդվում է ինքնաչօժար:

Նշանաւոր է Հարցը, թէ մարդու Համար դաստի-
արակութիւն ժամանակը երբ է: Մարդու դաստիարակու-
թիւնը պիտի սկսուի նորա մանկութիւնից, և կարելի
է ասել՝ օրօրօցից, բայց իսկադոչն դաստիարակելու ա-
մենաչարմար Հասակը է երեխայութիւնը, երբ որ մար-
դու Հոգին Հեշտ ըմբռնում է ամեն տեսակ տպաւո-
րութիւններ և անՀաստատաբար տատանում է առա-
քինութեան և չար կրքերումէջ—ուրեմն երբ երեխան

Հեշտութեամբ կարող է խաբուիլ չարիքի արտաքին գրաւիչ կողմերով և քաշուիլ դէպ'ի նորան:

Որպէս զի մեր աղբի մէջ Հաստատունն բարոյա-
կան Հիմունքներ, և նորանից վերանան նորա ունեցած
պակասութիւնները, դորա միայնակ ճարը է դաստի-
արակութիւնը, որը պիտի առաջ նորան անշուշտ երե-
խայական Հասակի մէջ:

Ուրեմն այն ուսումնարանները, որոնք պիտի
պատրաստեն ու անդադար ընծայեն Հասարակութեան
դաստիարակուած ու բարոյապէս կրթուած երեխաներ՝
Հասարակութեան ապագայ զօրեղ անդամներ՝ արժանի
են ուսումնարանական վերին վարչութեան ու ամբողջ
աղբի Համակրութեանը, օգնութեանը և պաշտպանու-
թեանը և տէրութեան արժանապարտ Հովանաւորու-
թեան:

Յ Ա Ն Կ

Ա. Մ Ա Ս Ի

	Երես.
Յառաջաբան	Ա - Գ
Ուսումնարանի ծրագրի գլխաւոր Հիմունքը . . .	1
Ծխական ուսումնարանի նպատակը	2
Ուսուցումը և Գաստիարակութիւն	13
Ուսանելի առարկաները ձխ. ուսումնարաններու մէջ	30
Կրօն	30
Թուարանութիւն	41
Բնական գիտութիւն	44
Աշխարհագրութիւն	61
Ազգային պատմութիւն	64
Հայոց լեզու	66
Ռուսաց լեզու	67
Վայելչագրութիւն	68
Երգ	—
Գծագրութիւն	72
Մարմնավարժութիւն	75
Գործնական պարապմունք	76
Քաղաքային տղայոց ուսումնարաններումը . . .	84
Գիւղական տղայոց ուսումնարաններումը	96
Քաղաքային աղջկերանց ուսումնարաններումը .	110
Գիւղական աղջկերանց ուսումնարաններումը . .	114
Յանկը	

Բ. Մ Ա Ս Ի

Ուսման շրջանը:

Ուսման ժամանակը, ուսանելի առարկաներու դասակարգութիւնը, նոցա շարաթական դասերու թիւը, հարցաքննութիւն:

Աշակերտներ և աշակերտուհիներ:

Նոցա հասակը, հազուստը, թիւը, ուսման վարձը:

Ուսուցիչներ և ուսուցչուհիներ:

Նոցա պատրաստելու տեղերը, զործնական պարապմունքի համար ուսուցիչներ:

Միջնակարգ ուսումնարաններու նշանակութիւնը:

Ուսման միջոցներ:

Դասադրերը և ձեռնարկներ, նոցա համար պրէմիա նշանակելը:

Գրադարան, ուսման միւս միջոցներ, դասարանի կա՛կ հարանքներ:

Ուսումնարանի եկամուտը:

Արդիւնքի ալքիւրները: Մասնաւոր մանր ընկերութիւններ ուսումնարանի զանազան պիտոյքներու համար հոգալու:

Ուսումնարանի ծախսը:

Ուսումնարաններու վարչութիւնը:

Նոցա վերին իշխանութիւնը և մերձաւոր վարչութիւնը (հոգաբարձութիւն), թէմական տեսուչը, և թէմական հոգաբարձութիւն (նոր յաւաքարկութիւն):

Ուսումնարանի շինուածք:

ՀՀ Ազգային գրադարան



NL0245986

